

20
ՀԱՅԿԱՅԻՆ



ПА-999

ՌՆԴ
Ժ.Բ. ՏԱՐԻ

ՀԱՆՐԱՊԵՏ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱՆՃԻ

I

1955



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

ԴԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի շնորհավորական հեռագիրը բոլոր թեմերին	3
Ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի անունով թեմերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները	4
Վրկշի Ս. Մենդյան տոնի առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի շնորհավորական հեռագիրը բոլոր եկեղեցիների պետերին	10
Ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի անունով բոլոր եկեղե- ցիների պետերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները	11
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Ամանոր և Ս. Մենդյան	14
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Ս. Մենդյան պատգամը	17
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ	19
ՊՐՈՑ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.— Մեսրոպ Մաշտոց	21
ՊՐՈՑ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ.— Աստղաբաշխական երկրաչափություն	29
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ.— Ամբերդ ամրացը	35
Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Մանրանկարիչ Թորոս Ռոսլին	42
ՄԱՅՐ Ա. ԹՈՌՈՒՄ	47
Հոգեշնորհ Տ. Կովտաս վարդապետ Տեր-Ստեփանյան	49
Հոգեշնորհ Մուշեղ աբեղա Պետիկյան	50
ՀԱՄԱՌՈՑ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	51
Հայաստանում սովետական կարգերի հաստատման 34-րդ տարեդարձի նշումը Սփյուռքում	54
Ա. Հ.— Հայրենի երկրին մեյք, Սիոն եպիսկոպոս	61



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՍՍՍՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazine „Echmiadzin“, Echmiadzin, Armenia, USSR



Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

**ԱՄՐԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԵՆՆԻՊԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԳԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՀԵՌԱԳՈՒԹՅԸ ԲՈՂՈՐ ԹԵՄԵՐԻՆ**

ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ, ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼՈՎ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԻ, ՀԱԿԱՏԱՅՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԶԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՈՒ ՓՈԿՁԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՇՆՈՒՆԴՆ ՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ, ՄԻԱՇՆԱԷՋ ՍՈՒՈՐ ՏԱՃԱՌՈՒՄ ԱՂՈԹՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՄԱՐԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌ, ԹՈ՛Ղ ԲԵԹԴԵՀԵՍԻ ԱՍՏՂԸ ԲՈՂՈՐԻՄ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՂԵՊԻ ՅԱՆԿԱԼԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ: ԲԱՐԵՍԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՈՐ ԷՋՄԻԱՇՆԻՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՆՍԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ:

ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ



**ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԱՆԴԱՍ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ
ԱՆՈՒՆՈՎ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՔԵՅՐՈՒԹԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոներին առթիվ Կաթողիկոսարանի՝ աճուճով կմատուցանեն լավագույն մաղբանքներ և շնորհավորություններ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՎԻԿԻՍ՝
ԽԱԿ՝ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՑԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Նոր տարվա և Ծննդյան տոներին առթիվ ներկայացնում ենք Ձերդ սրբազնության և Դերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին մեր ջերմ շնորհավորությունները: Աղոթում ենք մեր փառապանծ եկեղեցու ավելի մեծ նվաճումների համար:

ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՄԵՐԻՑԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոներին առթիվ շնորհավորանք և մաղբանքներ Մայր Աթոռո պալատապետի համար:

ՊԱՏՐԻԱՐԺ ԹՅՈՒՐԹԻՈ ՀԱՅՈՑ՝
ԴԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶՍՏՐԻՑԱՆ

ՆՅՈՒՅՈՐԺԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ ընդունեցե՛ք իմ և առաջնորդարանիս տեսուչ մարմիններու, հոգևորական դասու և ծախերու ջերմագին մաղբանքները՝ Ձերդ սրբազնության, Դերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի և Հայրենիքի բարօրության և անսասանության:

Առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի եպոսո՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՅԱՑԱՆ

ԼՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու Բահանայական դասը, բեմական Խորհուրդը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձերդ սրբազնության, Դերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին և Ս. Էջմիածնի բոլոր միաբանության նոր տարին և Քրիստոսի Ծննդյան սուրբ տոնը: Մտազին ցանկություններով մաղրում ենք Ռաժդային՝ որ տա աշխարհին խաղաղություն, Մայր Աթոռին՝ անսասանություն և Ձերդ սրբազնության՝ երկար կյանք և առողջություն:

Առաջնորդ Ճիբակի բեմի՝
ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՐՈՍՍՅԱՆ

ՔՐԻԼԻՍԻՒՅ

Նոր տարվա և Մենդյան տոները տոները ոգեշնչում են մեզ բարեխա, որովհետև ամբողջ հավատացյալ ժողովուրդը ցնծությամբ է նշանավորում այդ տոները: Ցանկանում ենք Մայր Աթոռ Էմիանոնի անսասանություն, խաղաղություն ժողովուրդներին, խաղաղություն ամբողջ աշխարհում: Անձամբ Ձեզ ցանկանում ենք առողջություն և երկար կյանք:

ՎՐԱՍՏՍԱՆԻ ՀԱՅՈՑ ՔԵՄԱԿԱՆ, ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐՆԻՑ

Ամանորի և Ս. Մենդյան տոներուն առթիվ շնորհավորություններ և յատանկեղծ մաղրաններ Ս. Աթոռի պայծառության, անսասանության և Մայր Հայրենիքի բարգավաճման համար:

Առաջնորդ Եղիպտակայ քեմի՝
ՄԱՄՐՐԻ ՍՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՆԿՅԱՆ

ՐՈՒՆԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՅ

Շնորհավորելով ամանորը և Ս. Մնունդը, կմաղրենք, ևր Տեւր շուտով վերցնեն սև շղարշը Հայրապետական Աթոռի վրայեն:

Հայրապետական պատվիրակ Հաբավային Ամերիկայի հայոց՝
ՍԻՐՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՐԻՋԻՑ

Ամանորի և Մենդյան տոներու առթիվ կմատուցանենք ևս, նույնպես Էկեղեցական խորհուրդը և հավատացյալները՝ ջերմագին շնորհավորություններ, լավագույն ցանկություններ, հարգալիք մեծարանք:

Հայրապետական պատվիրակ Եվրոպայի քեմի՝
ՍԵՐՈՒՐԵ ՄԱՅՐԱԿՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՖԻՆԶԵՆՈՑԻՑ

Նոր տարվան և Ս. Մենդյան տոներու առթիվ կուղարկենք մեր շնորհավորությունները, մաղրելով աշխարհին խաղաղություն, Մայր Աթոռի հաստատություն և արժանընտիր ճոր Դափակալ:

Առաջնորդ Կայիֆուրթի քեմի՝
ՇՆՈՐՀ ԽԱՅՐԱԿՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՍՏՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Նկեղեցական խորհուրդը, հոգևորականությունը, հավատացյալները և անձամբ իս շնորհավորում ենք Ձեր ճոր տարին և Քրիստոսի Մնունդը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար և երջանիկ կյանք՝ ի բարօրություն Հայ եկեղեցու և հավատացյալների:

Աղյբեշանի հայոց քեմի առաջնորդ՝
ԴԱՐԵԳԻՆ ԽԱՅՐԱԿՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՌՈՍՏՈՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ առողջություն և երկար կյանք Ձեզ և Գերագույն Հոգևոր Խորհրդի բոլոր անդամներին:

ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավոր ամանոր, Ս. Ծնունդ: Խաղաղ քաղաքականում Մայր Աթոռին և Հայրենիքին:

ԶԳՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ հանուն զաղուրիս կնայտենեմ զերմագին շնորհավորություններ, մաղբելով արևշատություն և Ս. Աթոռին՝ արժանավոր Դահլիճի մը արժանացում:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՑԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Լավագույն մաղբանքներով շնորհավորում եմ ամանորի և Ս. Ծննդյան ու Մկրտության տոները:

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Սրտանց շնորհավորում եմ Սրբազնությանդ, Դերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության նոր տարին, Ծննդյան և Մկրտության տոները: Ցանկանում եմ կատարյալ առողջություն և հաջողություն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԼԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԶՅԱՆ

ԹԱՎՐԻՋԻՑ

Ատրպատականի հայոց բնական ժողովրդ, բնական խորհուրդը, հաճախից դասը և համայն ժողովուրդը համբուրելով Ձեր Ս. Աթր, շնորհավորում եմ: և Դերագույն Հոգևոր Խորհրդի և ողջ միաբանության նոր տարին և Ս. Փրկչի Ծննդյան տոները, մաղբելով՝ որ Տերը վերացնե սև Բողբ Հայրապետական Աթոռից, պարզեցնի արժանավոր հաջորդ՝ ի հարատևություն և ի պայծառություն Ս. Էջմիածնի:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ՌԱՂԴԱԴԻՑ

Մեր հայոց համայնքի հետ միասին շնորհավորում ենք Ձեր նոր տարին և Բրիտանիա ճակատագրաբար Մենոնդր: Մաղրում ենք Հայոց Եկեղեցուն և Դերագույն Հոգևոր Խորհրդին անսասանություն:

Սոաշնորդական տեղապահ՝
ԴՐԻԳՈՐ ԱՎԱԴ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈՐՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Մեր համայնքը շնորհակալությամբ ծանոթացավ Ձեր բարյացակամ ֆա-
լախական պատգամին: Փոխադարձաբար ի սրտե անկեղծորեն մաղրում ենք
Մայր Աթոռին և միաբանության՝ անսասանություն, բարօրություն, երկարակե-
ցություն:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՐՈՒՆԱՐԵՍՏԻՑ

Նոր տարվա առթիվ հարգալիք շնորհավորություններ կմատուցանենք Ձեզ
և կմաղթենք անսասանություն Մայր Աթոռին և խաղաղ ծաղկում մեր հարա-
գատ Սովետական Հայրենիքին:

Ռուս-Երևանի բեմական խորհրդի ճախագահներ՝
ՎԱՀԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ,
ԳՈՒՏՈՐ ԳՐԻԳՈՐ ՐԱՄՐՈՒԿՋՅԱՆ

ՍՈՅԻԱՅԻՑ

Նոր տարվա և Ս. Մենոնդի առթիվ որդիական ջերմ ողջույններ բուրբա-
հայ հավատացյալների անունից:

ԹԵՄԱԿԱՆ, ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավոր Ձեր և միաբանության նոր տարին: Ցանկանում ենք, որ նա
բերե համայն աշխարհին խաղաղություն և Հայրենյաց ու Ձեր բոլոր գործերին
հաջողություն:

Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ.
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՒԹՅՈՒՆ

ՆՐԵՎԱՆԻՑ

Ս. Հովհաննես եկեղեցու Բաժանաները, եկեղեցական խորհրդի անդամները և ճավատացյալները շնորհավորում են նոր տարին, Քրիստոսի Մկուհրը և Հայտնությունը:

ՎԱՐԳԱՆ ԱՎԱԳ ՓԱՀԱՆԱ ԳՐԴՈՐՑԱՆ

ՆՐԵՎԱՆԻՑ

Ընդունեցե՛ք նոր տարվա և Ս. Ծննդյան սրտադին շնորհավորանքս և ուղիական խոնարհ հարգանքներս:

ՏԱՃԱՏ ԱՎԱԳ ՓԱՀԱՆԱ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՔԱՆ

ՆՐԵՎԱՆԻՑ

Առողջության և հաջողության ջերմ մաղրանքներով շնորհավորում եմ Ձե՛ր նոր տարին և Ս. Ծնունդը:

ՍԱՐԳԻՍ ՓԱՀԱՆԱ ԱՆԳՐԵԱՍՅԱՆ

ՆՐԵՎԱՆԻՑ

Շնորհավորելով Ձե՛ր, Դերացույն Հոգևոր Խորհրդի անդամների և միաբանության անդամների նոր տարին, Հիսուսի Ծննդյան և Մկրտության տոները, պանկանում եմ բոլորիդ առողջություն և հաջողություն:

ԱՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՑԻՑ

Քրիստոսի Ծննդյան մեծախառն տոնի առթիվ շնորհավորում եմ Ձե՛զ Դերացույն Հոգևոր Խորհրդի անդամներին և Ս. Էջմիածնի քյոռ միաբաններին: Ցանկանում եմ Ձե՛զ բոլորիդ երկար տարիներ, բարեհաջողություն և առողջություն:

ՊԱՐԿԵՎ ԱՐԵՂԱ ԳԵՈՐԿՅԱՆ,

ՎԱՀԱՆ ԱՐԵՂԱ ԴԱՆԱՄԳԱՐՅԱՆ,

ՀԱՅՐԻԿ ԱՐԵՂԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ,

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳ ՓԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Բարի ցանկություններով շնորհավորում եմ Ձե՛ր նոր տարին և Քրիստոսի Ծնունդը: Ցանկանում եմ Ձե՛զ երկար կյանք և առողջություն:

ՆՈՐԱՅՐ ՓԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆՈՑ

Շնորհավորում եմ Քրիստոսի Ս. Ծննդյան և Հայտնության տոներ և աղերսում եմ, որ Ամենապարզ պարզեւ Ձեզ երկար կյանք և առողջություն, և բարօրություն՝ Հայաստանյայց Ս. Եկեղեցուն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՔՍՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՑ

ԿԻՐՈՎԱԿԱՆՈՑ

Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցու հավատացյալները և բանանայից դասը շնորհավորում են Ձեր նոր տարին, Ս. Փրկչի Ծնունդը և Մկրտությունը: Ձեզ նեւ միասին մենք էլ կրկնում ենք հեղշտակների այն ներգաշնակ երգի սա բառերը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, յմարդիկ հանութիւն»:

ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ,

ԲԱՔՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ առողջություն՝ ի բարօրություն Հայոց եկեղեցու:

ՆԱՎԱՍԱՐԴ ՔԱՀԱՆԱ ԴԱՍՊԱՐՅԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆՈՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին և Քրիստոսի Ծնունդը: Ազդրում եմ Աստուծուն Ձեր առողջության և երկարակեցության համար:

ԱՐՏԱՇԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹԵՀՐԱՆՈՑ

Փոխադարձաբար սրտագին շնորհավորում եմ Ձեզ Ծննդյան և Մկրտության տոների առթիվ: Շատ շնորհակալ եմ Ձեր ուշադրության և մաղրանքների համար: Ազդրում եմ Աստուծուն՝ էջմիածնին տալ բարգավաճում, երջանկություն, և խաղաղություն, որոնք սրտով ուզում են, Աստված պարզեւ բարօրություն, խաղաղություն բոլոր բրիստոնյա եղբայրների համար:

ԴՈՄԱՆ ԵՍԱՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ առողջություն և երկար կյանք:

ԽՈՐԵՆ ՊԱՆՅԱՆ

ՂԱԼԱՐՈՑ

Շնորհավորում եմ Ձեր նոր տարին և Քրիստոսի Ծնունդը:

ԽԱԶԱՏՐՅԱՆ



**ՓՐԿԶԻ Ս. ԵՆՆԴՅԱՆ ՏՈՂԻ ԱՌԹԻՎ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ**

Էջսիսման գերագուհին Հոգեվոր ԽորՀորհրդ, քրիստոսի
Եննյան Տոնի առթիվ, Հղոհս է քերդ սորոհիթանը սոսագին
Ցանկոհիթոհններ, Աղոթոհս է Տեր Աստոհիթոհն Ի Կերոհս
ԵնորՀելոհ սիոո ԵՎ Խաղաղոհիթան ոգին, Ցանկանոհս է քեր
Քաղաղոհիթոհն ԵՎ Երկար ոհ ԲեղսնաՎոր ԿՅԱՆԶ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ա. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԱՆԴԱՄ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ
ԱՆՈՒՆՈՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ննորհակալ եմ Քրիստոսի Մենդյան և նոր տարվա տոների առթիվ Ձեր նշանավոր համար: Փոխադարձաբար սրտագին ողջունում եմ, ինչպես նաև ցանկանալով Ձեզ աստվածային օրհնությունը նոր տարվա առթիվ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԺ:

Ա. Լ. Ե. Ք. Ս. Ի.

ԽՐԻՍՏԻԱՆՈՒԹՅԱՆ

Մտանց շնորհակալ եմ և փոխադարձաբար շնորհավորում եմ էջմիածնի Կերագույն Հոգևոր Խորհրդին՝ Քրիստոսի Մենդյան և նոր տարվա առաջիկա տոների առթիվ: Թո՛ղ նոր 1955 թվականը լինի խաղաղ, անխռով տարի, ի շնորհ փոխադարձ սիրո՝ մեր եկեղեցիների և ժողովուրդների համար և ամբողջ աշխարհի համար: Աղոթում եմ Տիրոջը, որպեսզի նա Հայոց եկեղեցուն պարզև անժառանգվորագույն հաջորդ:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԺ:

ՄԵԼԻՔԻՍԵՒԵԿԻ

ՍՈՑԻԱԼԻՅԵՏ

Ձերդ Մերազնություն,

Լուսավորված ավետարանական Մենդյան հուզիչ անցքերի լույսով, մենք՝ Տիրոջ հավատացյալներս, ցնծությամբ ընթանում ենք հավատի և խաղաղության բերդեհեմյան աստղի հետևերով, ծառայի՝ առավել ևս մեծենալու աստվածային Մանկանը, հավիտենական Փրկչին, Խաղաղության Իշխանին:

Մեր սիրուն աղիատացած Աստուծո Որդին մեզ առաջարկում է իր սիրտ հարստությամբ, սեր, որ փրկում է մեր հոգիները և երջանկությամբ է լուսավորում մարդկային կյանքը:

Մենք հույս ունենք, որ բոլոր Տեր Հիսուս Քրիստոսին հավատացյալները, ողջընդամենը նրա օրհնակով, կձգտեն իրականացնելու երկնային պատգամները, որ արտահայտվել են այնպիսի՝ սուրբ պարզությամբ ավետարանական օրհներգում հետևյալ խոսքերով. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն» (Ղուկ., Բ 14):

Նորայրական սիրով ողջունելով Ձերդ Մերազնությամբ, մենք ցանկանում ենք Ձեզ, առաջնորդներին, հովիվներին և Ձեր բարեպաշտ ժողովրդին երջանիկ բարօրություն, ուրախություն ի Տեր և հաջողություն այն ընդհանուր ազգային ջանքերում, որոնք ուղղված են բովանդակ մարդկության առավել երջանիկ ապագայի իրագործմանը: Թո՛ղ առաջիկա նոր տարում իրականություն դառնա ավետարանական ողջույնը՝ «յերկիր խաղաղութիւն»:

Ողջունելով Ձեզ սիրով առ Տեր, մնամք Ձերդ Մերազնությամբ նվիրված ի Քրիստոս, եղբայրակից և ծառայակից.

ՌՈՒՆՎԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ:

ԿԻՐԻՆԻ

ՐՈՒՆԿԱՐԵՍՏԻՑ

Ի սրտե շնորհակալություն եմ հայտնում Ձեր շնորհավորանքների համար և չեմ սիրով մաղթում եմ միաբանությանը, հոգևորական դասին և հայ հավատացյալ ժողովրդին բազմապատկություն, խաղաղություն և բարօրություն՝ Քրիստոսի Մենդյան և Նոր տարվա առթիվ:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ի սրտե փոխադարձաբար շնորհավորում եմ Քրիստոսի Մեռնողը և Ձեր Նոր տարին: Ձերմազին ցանկանում եմ աստվածային օգնությունը Ձեր սուրբ ջանքերին:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈՂՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

ՆԻԿՈԼՍԻՑ

ՏԱԼԼԻՆԻՑ

Ի դեմս էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լուրերական եկեղեցու և իմ կողմից խնդրում եմ ընդունե՛ք ամենաբարեկամ շնորհավորանքներ Քրիստոսի Մենդյան լուսավայժառ տոնի և առաջիկա Նոր տարվա առթիվ:

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՅԱՆ ԿԻՏՎԻՑ

ՌԻԳԱՅԻՑ

Ի սրտե շնորհակալ եմ Ո. Մենդյան տոնի առթիվ Ձեր հղած շնորհավորանքի համար: Ընդունե՛ք իմ կողմից Նոր տարվա ողջույններ և անկեղծ ցանկություններ Ձերդ Սրբազնության և Հայոց հեազայն եկեղեցու Դերագույն Հոգևոր Խորհրդի բարօրության համար: Տա Աստված, որ Նոր տարին լինի խաղաղության տարի համայն աշխարհում:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ.

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԼՈՆԴՈՆԻՑ

Նորին Բարձրաշնորհություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Ճնովալ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան: Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար ճմառ էր եղև հասու (Յովն., Ա 4—5): «Աշակերտն զոր սիրէր Յիսուս», ով զլուխը հակեց Հիսուսի կրծքի վրա Վերջին Ընթրիքի ժամանակ, այս խոսքերով է հռչակում Աստուծո ճշմարտությունները աշխարհին և Նրա հաւաքեռությունը աշխարհի ճեւ, խորապէս րափանցելով ստեղծագործության և փրկագործության խորհուրդներին:

«Եւ ժողովուրդը որ նստէր ի խաւարի ետեւ զլոյս մեծ»: Մենք, որոնք, որպէս Բրիտանացիներ, տրվել է այս տեսիլքը, ներկայումս շնորհակալ ենք Աստուծոց այն ամենի համար, ինչ այդ տեսիլքը նշանակում է մեզ համար: Դեռևս խավար կա աշխարհում, բայց Աստված տվել է մեզ մի լոյս խավարի մեջ, որով մենք կարող ենք տեսնել Նրան և Նրա միածին Որդուն, և կարող

ենք հանաչել հշմարտությունը: Այս լույսով՝ մենք կտեսնենք նաև մեր Բրիտանոյա եղբայրների բազմությունը, այս աշխարհում և հանդերձյալում, և գիտենք, որ մենք միաձուլված ենք միմյանց հետ Հիսուս Քրիստոսի հզոր զաշինեով, որ ձեզնեց մեզ համար, և որ Սուրբ Հոգու ներգործությամբ մարմնացավ իր Մոր՝ Կույս Մարիամի զոյացությունից:

Նրա լույսը նաև մեր կյանքն է: Քանի որ մենք միացած ենք Աստուծո շնորհաց մեր հասարակաց վտրձառությամբ և այն հոր կյանքով, որ Նա տալիս է իր բոլոր հավատացյալ հետևորդներին, ուրեմն ես ներկայիս շնորհակալ եմ Աստուծուց մեր երկու Եկեղեցիների եղբայրության համար և աղոթում եմ, որ նրանք ավելի ու ավելի անեն հշմարիտ Բրիտանոնական միասնության մեջ:

Հանձնեմ ընդունել, Ձերդ Ռարձրաշնորհություն, Մենդյան յմ շնորհավորությունները և սիրո եղբայրական պատգամը, աղոթելով Ձեզ և Ձեր ողջ հավատացյալ ժողովրդի համար:

Մեամ Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏՐԻՆՐԻՎ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ՝
ՋԵՌՅՈՒՆ

ՔԵՆՏՐԻՆՐԻՆԻՑ

Արեւի բարեկամներ,

Նոր տարվա շնորհավորության Ձեր սխաղիկ պատգամը զերապույն հաճությամբ պատճառեց ինձ: Ձերմուռեն շնորհակալ եմ դրա համար:

Ուրախ եմ ժամանակ առ ժամանակ լսելու Ձեր համայնքի և եկեղեցու առաջադիմության մասին:

Խաղաղության հեռանկարներն ասկա եւ, եւ մտածում եմ առավել վայրուն հեռանկարի մասին: Աշխարհի ժողովուրդները լսել են տալիս իրենց ձայնը, և դա մի ձայն է հանուն խաղաղության:


Քրիստոնեական ջերմ ողջույններով, Ձերդ անկեղծորեն,

Քեմտրբերիի տաճարի վաթառայր՝
ապագերեց ՀՅՈՒԼԵՅՏ ԶՈՆՍՈՆ

ՄՈՍԿՎԱՑԻՑ

Նոր տարվա և առաջիկա մեծ տոների առթիվ, Մոսկվայի Հոգևոր Ճեմարանը, ի դեմս Ձերդ Սրբազնության, սրտագինս շնորհավորում է Հայոց հնագույն եկեղեցին:

Մոսկվայի Հոգեվոր Ճեմարանի
սեկտոր՝ ապագ քառահա ՌՈՒԺԻՑԿԻՑ,
անսուչ՝ պրոֆեսոր ԴՈՒՏՈՒՍՈՎ





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՄԱՆՈՐ ԵՎ Ս. ԾՆՈՒՆԻ



մանուրի և Քրիստոսի հրաշափառ Ս. Մենդյան տոների խորհուրդը մի անգամ եւ իւր վրա է բևեռում Բրիստոնյա աշխարհի և ողջ մարդկության խոր ուշադրությունը: Այս սրբազան օրերին, նորից աշխարհով մեկ հռչակվում են Բրիստոնեական կրոնի խաղաղության և համերաշխության վեճ պատգամները, պատգամներ, որոնց այնքան կարիքն ունեն աշխարհն ու մարդկությունը, Քրիստոսի ծննդից այնքան դարեր ետո:

Մի տարի եւս անցավ մարդկության կյանքից՝ պատմության գիրկը:

Ամեն անգամ հրաժեշտ տալով մեռնող կամ բերացիկ տալիս ու ողջունելով նորը, մարդիկ սրտագին սովորություն են ունեցել խորհրդածել գեր մի պահ ԺԱՄԱՆԱԿԻ և ԿՅԱՆՔԻ մասին, հանրագումարի բերել իրենց երազանքներն ու հույսերը, բռնաջան աշխատանքները, կյանքում ձեռք բերած հաջողություններն ու կրած հուսախաբությունները:

Նոր տարի է: Ներհաղնդի բոլոր անկյուններում, աշխարհի բոլոր ժողովուրդները, հավաքված ամանորի ավանդական սեղանների շուրջ, նոր հույսերով, նոր երազներով, զալթի նկատմամբ վառ և անբեկանելի հավատով են դիմավորում նոր տարին:

1955 թվականն է արդեն: Կյանքի մատյանում մի նոր, սպիտակ էջ եւ ավելացավ: Կանգնել ենք նոր կյանքի, նոր գործունեության, նոր հեռավորությունների առաջ, որոնք մեզանից պահանջում են ուժերի ավելի

լի մեծ լաբում, զոհողություններ, կորույ, հավատ, հույս, իրագործելու համար ազգերի և ժողովուրդների համերաշխության, երջանկության, բարօրության աստվածային պատգամները:

Նոր տարի է: Նոր օր, նոր կյանք է սկսվել աշխարհի վրա. ողջ երկրագնդի մարդկության սրտառույ բաղձանքն ու լավագույն բառեմաղթությունն այն է, որ 1955 թվականը լինի կայուն խաղաղության տարի, մարդկանց միջև հանդիպման տարի, շերտի վրա խաղաղության տարի, ըստ Ս. Մենդյան վեճ պատգամների:

Անցնող 1954 թվականը Բիշ հաջողություններ չի բերել ամբողջ աշխարհում խաղաղության մեծ գործի հաղթանակին, ժողովուրդների եղբայրական համագործակցության վսեմ ջանքերին: Իզուր չի անցել 1954 թվականն էլ մարդկության պատմության մեջ:

Աշխարհի Բրիստոնյա և ոչ Բրիստոնյա ժողովուրդները, սակայն, այս սրբազան պահին, հին, մեռնող, և նոր ծնվող տաքվա միջև, է՛լ ավելի վառ հույսերով, է՛լ ավելի վառ հավատով են դիմավորում 1955 թվականը, այն պայծառ ու սրտառույ լավատեսությունը, որ այդ նոր տարեթիվը կլինի աշխարհում մարդկանց միջև հանդիպման և երկրի վրա խաղաղության պատմական տարի: Խաղաղության գործը, ազգերի և ժողովուրդների համագործակցության գործը արդար և նվիրական գործ է, որովհետև այն աստվածային գործ է: Մնայուն խաղաղու-

բյուրեր դարերով հույսն է եղել մարդկության: Եվ խաղաղությունը, այսօր մանավանդ, հանապազօրյա հացի, ջրի չափ անհրաժեշտ է մարդկության, աշխարհին: «Պտուղ արդարությունան խաղաղությանը սերմանի այնպիսի, որ առնեն զխաղաղություն» (Պտղը Յակովրայ, Գ 18):

Այսօր, ավելի քան երբևէ, Բրիտանյա և ոչ Բրիտանյա աշխարհը կարիքն ունի տեսական խաղաղության, համալրաշխության, փոխադարձ հասկացողության: Հավատալու ու աշխատավոր մարդկությունը չի ցանկանում Աստուծու բարիքներով հարուստ այս աշխարհը վերածել ողբի, վշտի, անցունիքի հոգիների և անտվածային խաղաղությունը խեղդել նոր պատերազմների կրակի և թուրքոսի մեջ:

Ահա քե ինչու, այսօր մանավանդ, ժողովուրդները իրենց սեփական կյանքով և աշխարհով պատրաստ են փոխելու ընդմիջ պատերազմների արյունոտ նախապարհ: Բովանդակ Բաղրակիյոր աշխարհը, արևելում քե արևմուտքում, հյուսիսում քե հարավում, խորապես մտահոգված է այսօր մարդկության բախտով, խաղաղության բախտով, որովհետև, հակառակ Աստուծու կամքին, հակառակ ժողովուրդներին, կրոններին խաղաղասիրական ձգտումներին, ջանքերին, հոգևոր հավասարակշռությունը կորցրած մի խումբ մարդիկ նոր դավեր են նյութում խաղաղության դեմ, ժողովուրդներին եղբայրության, խաղաղ ու համերաշխ համագործակցության դեմ, և նոր, ավելի ահարկու, ժողովրդական մտածողական ոչնչացման գեներ են դարձնում ու հիվանդացին մոլորեցնում նախապատրաստվում են նոր և ավելի ահավոր, անլուր ռեժիմների մեջ քաղելու այն լավագույնն ու գեղեցիկը, ինչ ստեղծվել է սերունդների աշխատանքով, հանճարով, պայմարով:

«Տե՛ր անցի և այց արասցի»:

Այս ամենը ոհիր է մարդկության վեճ և եվրոական իդեալների դեմ, մարդկության կոչման դեմ, Բաղրակիյորության դեմ: Ահա քե ինչու այնքան միաբարակա՛ն ու ոգևորիչ է տեսնել, որ աշխարհի ողջ մարդկությունը, բարի կամքի տեր միլիոնավոր հավատացյալ և աշխատավոր մարդիկ, բնաճիճի հայրեր և մայրեր, կուլտուրայի, արվեստի մշակներ, կրթական տարրեր դավանաբանների տեր բարի հոգևորականներ, դեմ են պատերազմին և իրենց ջանքերը միավորել են ազնիվ պայմարում, հանուն խաղաղության վերջնական հաղթանակի, և համատեղ ջանքերով աշխատում են չեզոքացնելու աշխարհում «ուժի բաղաճականությունը» և հռչակելու արդարություն, ի-

րավունքի ժողովուրդների ազգային վեճի-րավության, իրավահավասարության Բաղրակիյորությունը:

«ԵՐԱՆԻ՝ ԽԱՂԱՊԱՐԱՐԱՅ, ՍԻ ՆՈՔՍ ԲՐԻՏԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉԵՍՅՈՒՆ»:

Այսպիսի ստեղծվել գրաքննությունով և Բրիտանյան վատ հավատով է դիմավորում նաև հայ ժողովուրդը իր նոր տարին և իր սիրելի Փրկչի հաշտված Ս. Մենդյան տոնը, քե՛ Մայր Հայրենիքում և քե՛ Սփյուռում:

Աղաթն, հայ ժողովրդի համար էլ բոլորվեց հավատով, հույսով, աշխատանքով և պայմարով հարուստ ևս մի տարի:

Հայ ժողովուրդը իր Հայրենիքում նոր տարին դիմավորում է աղաթ հպարտությանը, ստեղծագործ ու խաղաղ աշխատանքի պայմաններում, մշակույթի, տնտեսության աճը հաճախ աճման պայմաններում: 1954 թվականը հայ ժողովրդին բերեց նոր հաջողություններ, նոր նվաճումներ՝ աշխատանքի բոլոր բնագավառներում: Ձևով բերված այդ նոր նվաճումներն ավելի ևս ամրապնդում են մեր Երկրի, մեր ժողովրդի, մեր Հայրենիքի հզորությունը: Ռաբի սերմ-հացանի նման, Երգով ու ապագայի վառ հույսերով ցանում է հայ ժողովուրդը, ՏԵՐ անցնում է բերքը ըստ ավետարանի վկայության՝ «ընդ միոյ Լեւստն, ընդ միոյ վաքսուն և ընդ միոյ հարիւր»:

Անցնող ամեն մի նոր տարի գոհունակությանը և հայրենասիրական հպարտությանը է լցնում յուրաքանչյուր հայ մարդու սիրտը, որովհետև օրերի հետ անում ու հարստանում է հայ ժողովուրդը և՛ Բանակով, և՛ ռազմով, և տարեցտարի ավելի՝ գեղեցիկ, ավելի՝ հզոր է դառնում մեր պանծալի Հայրենիքը:

Ազգային-եկեղեցական տեսակետից անցնող տարին սակայն հայ հավատացյալ ժողովրդի համար Լոյավ համագրային տրամության և ուղի տարի: Մայիս ամսում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին կորցրեց իր մեծանուն և մեծագործ Հայրապետին, իր սիրելի Հորը և անձնդիր Հովհաննեսին՝ Նորին Ս. Օմոսրյուն Տ. Տ. Գեորգ Կ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Հայ ազգային-եկեղեցական կյանքի մի մեծ ու անկրկնելի, իմացական ու բարոյական հազվագյուտ ծիրանով հարուստ անձնավորություն ընկալվում ու գնաց հավիտյան գիրքը, մեծնող արարվա հետ միասին... Սուրբ մեջ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, սուրբ մեջ է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որովհետև «այդ մեծ անկաշ յիւրայի»:

Երանաշնորհ հայրենասեր մեծ Հայրապետի մահը խորը սուգով, տրամադրան մատ-

նեց ողջ հայ հավատացյալ ժողովրդին: Բայց համազգային սուգի այդ օրերին ևս դրսևորվեց հայ ժողովրդի հավատի մեծությունն ու խորությունը. մեր ազգային-եկեղեցական կուռ միասնությունը, հայ հավատացյալ ժողովրդի համախմբվածությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջը, իր սիրելի Հայրենիքի շուրջը, այն պայծառ գիտակցությամբ, որ երբ չկա ԳԱՀԱԿԱԼԸ, սակայն կանգուն է ԳԱՀԸ, կանգուն է Ամենայն Հայոց Հայրապետությունը, որը «եղել է հայի զգայուն սիրտը... հայի ստեղծող միտքը, ու վեհ գաղափարների մի փունջ, որ հյուսվել է հայոց մեծ հայրապետների ձեռով... Ամենայն Հայոց Հայրապետությունը անձ չէ, այլ հայրապետական գաղափարի մարմնացումը: Հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու «սիրության արտահայտությունն է Ամենայն Հայոց Հայրապետությունը»:

Ահա քե ինչու Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, քե՛ իր ուրախության, քե՛ իր տրտմության օրերին, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԻՍԱՑՆԸ Է ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆՔԱԿՏՆԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՐՏԱՌՈՒՅ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ:

Նոր տարվա և Ս. Ծննդյան այս խորհրդավոր օրերին, հայ հավատացյալ ժողովրդի

սրտևանդն ու անկեղծ աղոթքն այն է. որ շուտով սուգի սև լողը վերանա Հայրապետական Աթոռի վրայից և հայ ժողովրդի սգակիր սրտից, որպեսզի նորից ուրախանա և պայծառանա այրիացյալ Մայր Աթոռը. որպեսզի միշտ պայծառ ու լուսավոր լինի հայ երկնական մարի վրա և հայ հավատավոր սրտերում՝ Լուսավորչի անմար և միշտ պրլպրլացալ կանթեղը:

Բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի սրտազին մաղբաճեմ այն է. որ ԼՍՅՆ տարեթիվը լինի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու համար հոգևոր զարթոնքի, ազգային-եկեղեցական կուռ միասնության և կազմակերպվածության ճիշատակելի և արդյունավետ տարի, ի փառս Աստուծո և ի մխիթարություն հայ ժողովրդի:

Մաղբենք, որ մանկացյալ Տերը, իր սուրբ և հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ, սիրո և խաղաղության ոգի ներշնչի մարդկության և պետություններին, որպեսզի աշխարհում համերաշխություն և համագործակցություն իշխեն, որպեսզի մարդկությունը, կրճենեն ու ժողովուրդները խաղաղ ու երջանիկ ապրեն:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ Ս. ԾՆՈՒՆԴ. ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԵՂՐԱՅՐՆԵՐ ԵՎ ՔՈՒՅՐԵՐ:





Ք Ա Ր Ո Ջ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ս. ՄՆՆԴՅԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Իմ հավատացյալ եղբայրան՝ և քույրն՝, նորից եմ հնչում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրական կամարների տակ՝ Փրկչի հրաշափառ և սուրբ Մենդյան սրբազան պատգամները՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Մենդյան գիշեր... սուրբ գիշեր... Եվ ահա այդ սուրբ գիշերովան մեջ, երբ լրումն ժամանակաց, Արևելքի մի հեռավոր անկյունում, մի մոռացված մութ քարայրում, ծնվեց բոլոր ժամանակների և աշխարհների Փրկիչը, որպէս նորածին փոքր մանուկ, գլուղական խոնարհ իշխանի մի անշուք մսուրի մեջ:

Քսան ձիգ դարեր, հավատավոր մարդկությունը, խորին հավատով, մեծ սիրով և առհուն երախտագիտությամբ, սրտագինս ծընրադրել է խաղաղության իշխանի անշուք մսուրի առաջ, աշխարհով մեկ հուշակելու նրա Ս. Մենդյան մեծ ու սքանչելի խորհրդի, նշանակությունը ողջ մարդկության համար, աշխարհում բարի կամքի տեր միլիոնավոր հավատավոր հոգիների համար:

Քսան ձիգ դարեր, մարդկությունը Ս. Մենդյան խորհրդավոր այս գիշերովան մեջ ունկնդրել է հրեշտակների անսուտ բերնից խաղաղության, համերաշխության սրբազան պատգամները:

Այսօր ես Ս. Մենդյան այդ պատգամները չեն կորցրել իրենց խորը նշանակությունն ու արժեքը աշխարհի համար, մարդկության համար, որովհետև մնայուն խաղաղությունը, մարդկանց միջև հաճությունը միշտ էլ սիրելի են եղել մարդկային ցեղի համար, Քրիստոսի օրերից մինչև այսօր:

Ահա թե ինչու, իր ժամանակին, իր ուղին կորցրած մարդկությունը մեծ բերկրանքով ողջունեց Վերդարության Արեղակի ծագումը: Աշխարհը նրա Աստուծի լույսով անցավ դարերի ճանապարհը, որովհետև Քրիստոս աշխարհ եկավ որպէս լույս ի յայտնութիւն հեթանոսացաւ:

Մեծ է արդարև Քրիստոսի Ս. Մենդյան խորհրդի նշանակությունն ու արժեքը, նրա ծնունդը մի նոր էջ բացեց մարդկության պատմության մեջ, մի արմատական հեղաշրջում հանդիսացավ մարդկային մտածողության, բնկերային հարաբերությունների մեջ, մարդկության փրկագործության ճանապարհի վրա:

Բեթղեհեմի այրում ծնված Մանուկ Հիսուսը մի հզոր ուժ էր, որ աշխարհը պիտի կերպարանափոխեր, նոր լիցք, նոր իմաստ ու արժեք պիտի տար կյանքին, մարդկանց պիտի բարձրացնէր դեպի ճշմարտություն, կյանք, որպեսզի ողջ աշխարհն ու մարդկությունը ապրեին նոր կյանքով, նոր սիրով, նոր հրշմարտությամբ:

Քրիստոսի սուրբ մսուրի առաջ եղսայրացանքն բոլոր ազգերն ու ժողովուրդները, ժամանակի իմաստուններն ու պարզամիտ հովիվները՝ Աստուծով ի Քրիստոս Հիսուս. ոչիք խտիր ոչ հրէի, ոչ հեթանոսի, ոչ ազատի, ոչ անազատի, ոչ արուի, ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս: Այսպես, Ս. Մենդյան նվիրական գիշերվա մեջ, փշրվիցին ազգերն իրարից բաժանող կեղծ պատնեշները, փշրվեցին ստրկության, տգիտության, ատելության, խավարի բոլոր շղթաները և մարդկության համար ծագեց մի նոր ու խոստովնալից առավուտ: Քրիստոնեությունը, իր ծագման առաջին իսկ օրից, եղավ այն տիեզերական կրոնը, որն իր թևերի տակ առավ տառապող բոլոր ժողովուրդներին և իր վեհ, մարդասիրական գաղափարներով, մի անքակտելի ամբողջության մեջ, մի տիեզերական ընտանիքի մեջ միավորեց բոլոր ազգերին, եղբայրացնելով նրանց նույն տիեզերական շոր՝ Աստուծու հայրական խնամոյն տակ:

Մարդկային ծնունդները միշտ էլ ուրախություն, երջանկություն են եղել ընտանիքներում ծնողների և հարազատների, հարեանների և բարեկամների համար: Իսկ Քրիստոսի ծնունդը իր վեհ պատգամներով, իր խորունկ նշանակությամբ, իր փրկագործության խորհրդով, իր եզակի և աստվածային հանգամանքով, իր բերած տիեզերական ուրախությամբ աղբյուրն է մարդկային երջանկության, երկրի խաղաղության, ազգերի համերաշխության:

Քրիստոսի հրաշափառ Ս. Մենդյան գիշերվանից մինչև այսօր ևս մարդկությունը իր նայվածքը սևեռել է դեպի այն դուրազական անշուք մսուրը, որտեղից լույս ծագեց խավար աշխարհի համար, դեպի այն համեստ այլը՝ որի կատարին կանգ առավ ու շողաց նրա Աստղը, դեպի այն կապույտ երկինքը Բեթղեհեմի, որտեղից զվարթունները բարի հովիվներին ավետեցին Մեսիայի ծնունդը, որ եկել էր փրկելու մարդկությանը, որն իր մեղադրականությամբ հեռացել էր Աստուծուց և երկնքից ու դարձել էր մեղքի բաժին. «Աստված մարդացավ՝ որպեսզի մարդն աստվածանա»:

Ահա այս է Քրիստոսի հրաշափառ Մենդյան, Քրիստոսի մարդեղության մեծ խոր-

հրդի նշանակությունը. «Եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ»:

Քրիստոս իր Ս. Մենդյամբ պատուեց մարդկության մեղքի, տգիտության, լարիքի պարտամուրհակները և նորից նրանց Աստուծու որդիներ և ժառանգներ դարձրեց, որպես. զի մարդիկ վերագտնեն այն խաղաղավետ կյանքը, որ բաժինն է մագուր սրտով մարդկանց, սրբերին, արդարներին, Աստուծու որդիներին. «Ջի այնպէս սիրեաց Աստուծո՞ւ զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին և տ. զի ամենայն որ հաւատայ ի նա մի կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս» (Յովհ., Գ 16):

Իմ հավատացյալ եղբայրներ՝ և քույրեր, քսան ձիգ դարեր, հայ ժողովուրդն էլ, սրտառու է հավատով, անարատ միամտությամբ, մանկական սրտով ծնրադրել է խաղաղության, իշխանի խոնարհ օրորոցի առաջ, Ո՛չ ժամանակը, ո՛չ հուրը, ո՛չ սուրը չեն կարողացել մարել հայ հավատացյալ ժողովրդի սրտում քրիստոնեական հավատի հուրը, Ս. Մենդյան վեհ պատգամները, խաղաղության սերը, արդարության զգացմունքները, ճշմարտության ծարավը:

Իմ հավատացյալ եղբայրներ՝ և քույրեր, եկեք մենք ևս Արևելքի մոգերի և Բեթղեհեմի հովիվների նման, մի պահ մեր մտքի թևերով և հոգու զորությամբ թռչնեք դեպի Բեթղեհեմ և ծնրադրենք նրա սուրբ խանձարտրի առաջ. նա էլ մանուկ է եղել մեր մանուկների պես, ամմեղ, պաշտելի, խոնարհվեց նրա մսուրի առաջ, մեր հոգու բոլոր հույզերը, մեր սրտի բոլոր անվեր սերը, մեր հոգու երկպազության կնդրուկը մատուցանեց մանկացյալ Աստուծուն, և մենք էլ լուսավորվեց նրա երկնային լույսի ոսկեհեղեղի մեջ. «Արի լուսաւորեաց երուսաղէմ, զի հասնալ է լույս քո և փառք Տեառն ի վերայ քո ծագեսցին» (Նսայի. Կ 1):

Թո՛ղ խաղաղության իշխանը, իր Ս. Մենդյան տոնի առթիվ, մարդկանց սիրտն ու հոգին լուսավորի խաղաղության սրբազան լույսով, թո՛ղ խաղաղության հոգին իբրև ցող, իբրև մանանա իշնի մարդկանց սրտերի վրա, և թո՛ղ մեր եկեղեցիներում հավետ ճնշի Ս. Մենդյան փառքի կեղծ. «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»:

Փա՛ռք հրաշափառ ծննդեան քո, տէ՛ր: Ամէն:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

«ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Դեկտեմբերի 11-ին, 14-ին և 18-ին Մոսկվայում ակադեմիկոս Դ. Վ. Սկորեկցիևի նախագահությամբ կայացան «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեի նիստերը:

Կոմիտեն ըննարկեց ընթացիկ տարվա Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին ստացված առաջարկները և որոշում ընդունեց այդ հարցի վերաբերյալ: Ստորև հրապարակվում է կոմիտեի որոշումը՝ 1954 թվականի Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին:

«ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» 1954 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
1954 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

Խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու պայքարի գործում աչքի ընկնող ծառայությունների համար «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհել հետևյալ անձանց:

ԴԵՆԻՍ ՆՈՆԼ ՊՐԻՏՏԻՆ — իրավարան (ԱՆԳՆԻԱ).

ԱԼԵՆ ԼԵ ԼԵԱՊԻՆ — Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար (ՖՐԱՆՍԻԱ).

ՏԱԿԻՆ ԿՈՂՈ ԽՄԱԻՆԳԻՆ — գրող (ՔԻՐՄԱ).

ԲԵՐԹՈՂԻ ԲՐԵՆՏԻՆ — բանաստեղծ և դրամատուրգ (ԳԵՐՄԱՆԻԱ).

ՖԵԼԻՔՍ ԽԼԵՐՍԵՆԻՆ — Հելսինկի քաղաքի համալսարանի պրոֆեսոր (ՖԻՆԼԱՆԴԻԱ).

ԱՆԴՐԵ ԲՈՆՆԱՐԻՆ — իրավաբանի պրոֆեսոր (ՇՎԵՑԻԱ-ՐԻԱ).

ՐԱՂԳՈՄԵՐՈ ՍԱՆԻՆ, ԿԱՆՈՑԻՆ, — պրոֆեսոր, էդիթորգի և Քոգնիտիվ Վաճառականների պատվաթղթի դոկտոր (ԿՈՂՈՒՄՔԻՆ)։

ՊՐԻՑՈՆՈՑԻՆ — պրոֆեսոր, Ջապարտայի պետական համալսարանի պրահայի ֆակուլտետի դեկան (ԻՆԴՈՆԵՋԻՆ)։

ՆԻԿՈԼԱՍ ԴԻՏԵՆԻՆ — բանաստեղծ (ԿՈՒՔԱ)։

Կոմիտեի Ձախագահ՝ Դ. Վ. ՍԿՈՐԵԼՅԻՆ

Կոմիտեի Ձախագահի տեղակալներ՝ ԴՈ ՄՈ-ԺՈ (Ջինաստան),
ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ (Ֆրանսիա)։

Կոմիտեի անդամներ՝

ԱՆՆԱ ԶԵԳԵՐՍ (Գեորգիան),
ԱՆՏՈՆԻՈ ՐԱՆՖԻ (Իտալիա),
ՋՈՆ ԲԵՌՆԱԼ (Անգլիա),
ՅԱՆ ԴԵՄՔՈՎՍԿԻ (Լեհաստան),
ՊԱՐԼՈ ՆԵՐՈՒԴԱ (Չիլի),
ՄԻԽԱՅԻԼ ՍԱԴՈՎՅԱՆՈՒ (Ռուսիա),
ՍԱՀԻՐ ՍԻՆԳ ՍՈԿՅԵՑ (Հնդկաստան),
Դ. Վ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ (ՍՍՏՄ),
Ա. Ա. ՖԱԴԵԵՎ (ՍՍՏՄ),
Ի. Դ. ԷՐԵՆՔՈՒՐԳ (ՍՍՏՄ)։

18 դեկտեմբերի 1954 թ.,

ճաղ. Մոսկվա

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ.
21 դեկտեմբերի 1954 թ.)





Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՑԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց*

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր ՈՐ Դ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԸ

§ 1

Ներշնչված այն մեծ զաղափարով, Մեսրոպ մոռացավ ամեն բան, և իր աշակերտներին, իր քարոզչությունը, իր եկեղեցիներն ու իր սիրած Գողթն գավառը թողնելով, եկավ Վաղարշապատ, Սահակ կաթողիկոսի մոտ։ Մեսրոպ հայտնեց նրան իր գեղեցիկ մտապրությունը։ Բնականաբար այնպիսի լուսամիտ մեկը, ինչպիսին Սահակն էր, ո՛չ միայն պիտի հավաներ այդ զաղափարին, այլ նույնիսկ Մեսրոպից ավելի փափագող հանդիսացավ և ամեն կերպով պատրաստական ցույց տվեց իրեն՝ այդ մեծ գործի հաջողության համար։ «Ե՛րբտեղ քնա առաւել ևս փափագող այնմ» (Խորենացի, Գ, խթ)։ «Պատրաստական դուանէր նմին փութոյ հաւանեալս» (Կորյուն, էջ 8)։

Հին հայոց մարեպաշտական սովորությանը, որ ամեն գործ ազդեցով էր սկսում, Սահակ և Մեսրոպ իրենց հարակիցների հետ հավաքվում են և մի քանի օր աղոթքի են նվիրում իրենց, խնդրելու համար Աստուծուց, որ իրենց այս բարի մատուցության հաջողությունն պարգևի։ «Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդիւրձ աղօթիք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսարեմ փրկութեանն հասանելոյ. և դարձ անէին աւուրս րաւուրս» (Կորյուն, էջ 8)։

Սրանից հետո Սահակ և Մեսրոպ որոշում են գումարել համապումար ժողով, ուր ներկա պիտի լինեն այն ժամանակվա հայտնի անձնավորությունները, որոնց հետ պիտի խորհրդակցեն հայ նշանադրերի հորինման համար։

§ 2

Ժողովը գումարվեց Վաղարշապատ մայրաքաղաքում, Սահակի և Մեսրոպի նախածնունդով։ Բացի այս երկուսից, այնտեղ ներկա եղան, ըստ Խորենացու, նաև հայոց բոլոր եպիսկոպոսները. «Գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս» (Խորենացի, Գ, ծր)։ Բայց Վաղարշապուհ թագավորը, ինչպես և ուրիշ որեւէ աշխարհական, կանչված չէին նույն ժողովին։ Կորյուն պատմում է, թե այս ժողովում շատ հարցափոքներ և քննություններ տեղի ունեցան և ներկաները մեծ հոգնությունով կրեցին՝ հայ նշանադրերի առթիվ։ «Ապա ելանէր նոցա պարզեական յամենաբարին Աստուծոյ ժողովի զաշխարհահոյ խորհուրդն երանելի միաբանելոցն, և զիրո նշանադրոյ Հայաստան ազգին հասանել. յազում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում յշխատութեանց համբերեալ» (Կորյուն, էջ 8)։ Դժբախտաբար այստեղ մի մեծ պակասություն ունի Կորյուն. նա ոչինչ չի ասում այն մասին, թե ի՞նչ էին այն երկար վիճարանությանց պլանավոր կետերը։— արդյոք ոմանք այս առթիվ լինե-

* Շարունակված ամսագրի 1954 թվականի X-XI-ից և XII-ից։

ից նորամուծություններին հակառակությամբ էին ցույց տալիս, կամ թե վիճում և չէին կարողանում համաձայնության գալ այն մասին, թե ո՞ր այրուքներ պիտի հարմարեցնեին հայ լեզվին (պարսկերեն, հունարեն, թե՛ ասորերեն), և կամ թե ուրիշներ հունարենի և ասորերենի ուսման ավելի լայն ծավալ տալով, զժվարությանց առաջին առնել էին առաջարկում. վերջապես գուցե ոմանք էլ (անշուշտ օտարազգի քարույրներ) խապահակառակ էին հայ լեզվի համար գրականություն ստեղծելուն:

Վենետիկի միաբաններից Զ. Բ. Սարգսյան («Բաղձավէպ», 1889 թ., էջ 39) կարծում է, թե ժողովի վիճաբանության նյութն էր՝ որոշել թե Հայաստանի 15 նահանգներից որի՞ բարբառը պիտի բարձրանար գրականության: Եվ 15 նահանգների պատգամավորները քննելով հարցը, վերջապես վճռեցին ընդունել Արարատյան բարբառը:

Այսպիսի կարծիք մեջտեղ դնելուց առաջ, պետք էր հաստատել, թե Հին Հայաստանի 15 նահանգները զանազան բարբառներ ունեին և այդ բարբառները այնքան տարբեր էին իրարից, որ խոսողները իրար չէին հասկանում: Հետո, ի՞նչ ճշանակություն ունի բարբառը այբուբենի համար: Հավաքվել են տառեր հորինելու նպատակով. որևէ կարգավորություն ունի՞ այն հանգամանքը, թե բարբառներում հնչում են մա՛րդ, մա՛րբ, մո՛ւրբ, թե՛ մո՛ւրա, կամ մի ուրիշ ձևով: Բարբառների լեզվաբանական քննությունը, մեր կարծիքով, համագումարի նյութ չէր կարող լինել:

Մի քանի ժողովից հետո, ժողովականները հարկ համարեցին դիմել Վառձապուհ թագավորին և իրենց ցանկալի խնդրի մասին հայտնել նրան: Ահա այս մասին Կորյունի շատ մոլթ և խորենացու շատ լակոնական բառերը, որոնք իրար համապատասխանում են. «Բաղձում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազգ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վառձապուհ» (Կորյուն, էջ 8), «Ժտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն հպակոպոսունս՝ հոգալ զգիւտ զպրութեան Հայոց, զոր զգացուցին տրեային» (Խորենագի, Գ, Ժբ):

Այն ժամանակ Վառձապուհ պատմեց նրանց, թե ինքը լսել է, որ կա հայերեն լեզվի այբուբեն, և թե այդ այբուբենը գտնվում է Դանիել անուն սուրբի ազնվական եպիսկոպոսի մոտ: Այս անակնկալ հայտարարությունը մեծ ապավորություն թողեց ամենքի

վրա. ժողովականները շատ ուրախացան և խնդրեցին, որ Վառձապուհը հետամտի այս մասին և պետք եղածն ի գործ դնի՝ այն տառերը ձեռք բերելու համար: Ըստ Փարպեցու՝ Սահակ և Մեսրոպ հիշեցրին Վառձապուհին, թե գրերի գյուտը շատ ավելի մեծ էր քան որևէ աշխարհային փառք, նույնիսկ թագավորական փառքը, և թե նրանով թագավորը պատմության մեջ մի այնպիսի անուն պիտի թողներ, որ պիտի գերազանցեր իր թոռը նախնայաց անունը: Ահավասիկ այն խոսքերը, որով Սահակ և Մեսրոպ համոզում են թագավորին. «Եւ նոցա լուեալ զայս ի թագաւորէն, փութացուցանէին զնա ասելով, թէ Ծեպեա՞ յազգաս մեծ և օգտաբեր աշխարհիս Հայոց գիւտիս այսորիկ՝ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայսն բերէ քեզ շահ, յիշատակ անմոռաց և օգուտ երկնաւոր վայելից, քան զհիսաբանութիւն թագաւորութեանդ քո, և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքս քո էին յազգէն Արշակունեաց» (Փարպեցի, էջ 37—38):

Թագավորը համոզվեց այս խոսքերի վրա և ըստ Փարպեցու՝ փառք տվեց Աստուծուն, որ այսպիսի հավերժական մի գործ իր օրով պիտի կատարվեր. «Եւ թագաւորին լուեալ զայս և խնդալից եղեալ՝ ետ փառս Աստուծոյ որ ի ժամանակս թագաւորութեան նորս զայսպիսի հոգեւոր կենաց փափագ ժառանգեաց յաշխարհիս Հայոց» (Փարպեցի, էջ 38):

Վառձապուհ շուտով գործին կապվ, հրովարտակ գրեց Հաբել անուն քահանային՝, որ նույն սուրբի Դանիել եպիսկոպոսի մեղծավորը, այսինքն ազգականն էր, և հրամայեց երթալ Դանիելի մոտ և տառերն առնելով իրեն ուղարկել: Այս հրովարտակը ուղարկեց Հաբելին՝ Վահրիճ՝ անունով անձի հետ՝ իրրե զեսպան, որ ըստ Խորենացու, էր ռայր մի պատուական և հաւատարիմ իւր (Վառձապուհի), իսպուռնի ազգաւ... յոյժ փափազող նորին գործոյ» (այսինքն գրերի գյուտին) (Խորենացի, Գ, Ժբ): Այս մարդու մասին ուրիշ ոչ մի տեղեկություն չունենք: Բայց հանձնարարված գործի կարևորությունից պետք է գուշակել, ասում է Օրմանյան («Ազգապատում», Ա, էջ 271), Վահրիճի էլ բարձր պիտքը, օտար լեզուների հմտությունը և տեղերի ու անձերի ծանոթությունը: Սահակի ու

1. Զ. Ն. Ակիմյան, «Հանդես ամսօրեայ», 1936 թ., էջ 466, ենթադրում է, թե այս Հաբելը եղևիայի դպրոցի գլխավոր Իրաւ երեցն է:

2. Այս անձի անունը Կիրակոս (էջ 15) դնում է «Վրաբձապ», որ սենական հոգով չէ. «Եւ առաքեն Կիսիարար զմեզ՝ Վրաբձապ անունս»:

Մեսրոպի աշակերտներից չէր անշուշտ, այլ թագավորական դիվանի պաշտոնյալ:

Հարել կարդալով հրովարտակը, իսկույն դիմեց Դանիելին և նախ ինքը սովորելով նրանից այն տառերը, առավ Հայաստան ուղարկեց, Վառժապուհ թագավորին, անշուշտ Վահրիճի ձեռքով. «Իսկ Հարելին վայն լուծալ, փութանակի հասանելը առ Դանիելին, և նախ ինքն տեղեկանալով ի Դանիելի նշանադրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքելը առ արքայն յերկիրն Հայոց, ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանելը» (Կորյուն, էջ 8):

Վառժապուհ, Սահակ և Մեսրոպ ստանալով Հարելի ուղարկած գրերը, մեծ ուրախութիւն զգացին: Սահակ և Մեսրոպ խնդրեցին թագաւորից մի քանի մատաղ մանուկների հանձնել՝ նորագոյնս գրերը նրանց վրա փորձելու համար: Երբ տեսան, թե նրանիցից շատերը կարողացան սովորել, Սահակ, իբրեւ հայրապետ հայոց, շնորհեց Մեսրոպին վարդապետութիւն (այսինքն ուսուցչական) մեծ աստիճանը և հրաման արեց, որ Հայաստանի ամեն կողմերը նույն տառերը տարածի և բոլորին կրթի այդ տառերի ուսման մեջ. «Ապա հրաման տալով ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան դեղեցիկ երանելին հասանէր» (Կորյուն, էջ 9):

Այսպիսով Մեսրոպ դարձավ հայոց առաջին վարժապետը և Դանիելյան գրերը ընդհանուր ընդունվեցան մեր մեջ:

§ 3

Սկսած Գողթն գավառի քարոզությունից հրաժարվելուց մինչև Դանիելյան գրերի գործածությունը, որ այս գլխի նյութը կազմեց, մեր աղբյուրները երևան են հանում բազմաթիվ մեծ ու փոքր տարբերություններ, որոնք պետք է մի առ մի քննել և ստուգել, հաջորդ խնդիրներին անցնելուց առաջ:

Նախ՝ կարապետ Սասնեցին չի հիշում Մեսրոպի քարոզչական գործունեությունը. Գողթնի, կամ ըստ երբեմնացու՝ նաև Սյունյաց գավառի մեջ, այլ գրերի գյուտի այն բարձր գաղափարը տալիս է Մեսրոպին հղանալ հենց իր ճգնական կյանքի մեջ, մի քարայրի խորում: Այս ներշնչումն ունենալուց հետո, Մեսրոպ ուղղակի քարայրից ճանապարհ ընկավ և դիմեց Սահակին. «Այս հոգւոյն ասթումն, յորմէ յաղթեալ և ակամայ ձգեալ, ելանէր յայրէն և վարէր յեկեղեցի, ոչ ապարասանեալ ընդվզէր և ոչ ամբարհաւաճեալ յուսայր յանձին գորութիւն: Այլ հեղաքար և դիրապէս դիմէր առ հովին քաջ քաջաձաղ՝

առ հայրապետն Հայաստանեայց» (Սասնեցի, էջ 38—39):

Սասնեցու այս թերութիւնը անշուշտ համոտությունից համար է և չունի նշանակություն:

§ 4

Թեև Կորյուն, Փարպեցի և երբեմնացի շեն հիշում հատկապես, թե ո՛ր էր Սահակ և հետևապես ո՛ր դիմեց Մեսրոպ և ո՛ր եղավ առաջին համապումար ժողովը, բայց նրանց հաջորդ խոսքերից բավական պարզ է, Քանի որ դիմում են թագավորին և սա ևս ժողովին ներկայանում է այնտեղ, հետևում է, թե ժողովը տեղի էր ունեցած մայրաքաղաքում (Վաղարշապատում), ինչպես որ քնական էր. Վաղարշապատը լինելով Սահակի աթոռանիստը:

Բայց Սասնեցին, դարձյալ շեղվելով պատմությունից, այս հանդիպումը դնում է Աշտիշատում. «Եւ հանդիպեալ նմա ի դաշտն Տարօնոյ, ի քաղաքադեղն Աշտիշատ, և ողջունեալ՝ առնոյր զաջն և զոգջոյնն: Եւ տեսեալ ծաղուն՝ ծիծաղէր, և բերկրեալ ցընծայր սուրբն ի սէր սրբոյն և ծանէր հոգւովն ի հոգոյն զոլ զպալուստ նորա...» (Սասնեցի, էջ 39):

Սասնեցու հրատարակելը՝ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան, էջ 39-ի ժանոթության մեջ նկատում է, թե «ոչ մի ակնարկ չկա կաթողիկոսի գտնված տեղի մասին (Կորյունի մեջ)». ներդրողը կա՛մ Տարոնը ավելի բարձրացնելու համար է հիշել այդ մանրամասնությունը, կա՛մ հավանականորեն ուրիշ աղբյուր է ունեցելու:

Ըստ իս, միայն առաջինն է ճիշտ. Սասնեցին այս սխալը գործել է այն մտածությունով, որ Տարոնը հայրապետական կալված լինելով, կաթողիկոսները շատ անգամ Տարոն էին գտնվում:

§ 5

Ինչպես տեսանք վերևում, Կորյուն Սահակի և Մեսրոպի աղոթքներից անմիջապես հետո դնում է համապումար ժողովի գումարումը, որի հետևանքն եղավ նույնպես Մեսրոպի դիմումները, Վահրիճի առաքումը և վերջապես Դանիելյան գրերի գյուտը. — այս բոլորը անխափան մին մյուսի հետևից շարունակաբար, ինչպես վայել էր աշխարհի մի անձի, որ հոգով մարմնով նվիրված էր դոքսին, և

1. Մաղբ բառի սեռականն է. սրանով պետք է հասկանալ «Սահակը. բայց որում երբեմնքն Սահակ նշանակում է օծիծաղը. Սասնեցին շատ է սիրում յուրաքանչյուր խոսքի քաղաքականությունը»:

որի աշխին երկրորդական արժեք ունեցի մնացեալ բոլոր գործերը, Սակայն հորենացին և նրան հետևելով Փոքր Կորյուն աղոթքներին հետո դնում են հուսալից ընդհատում: Մեսրոպ, երկար ջանքերից հետո, տեսնելով, որ չկարողացավ մի օգուտ քաղել, դարձյալ Աստուծուն ապավինեց, և Սահակից բաժանվելով, նորից իր քարայրը քաշվեց և անձնատուր եղավ առաջվանից ավելի խնամքով ճշնութեան: «Եւ յետ քաղում ջանից և ոչ ինչ օգտելոյ: դարձեալ յաղօթս ապաւինեալ, յԱստուծոյ խնդրելով Եւ մեկնեալ ի միմեանց, գնաց Մեսրոպ ի դադարս իւր, և յանձն առեալ զխստամբերութիւն վարուց ճշնէին առաւել քան զառաւել (հորենացի, Գ, խթ): Նույնը օրինակում է Փոքր Կորյուն, շնչին փոփոխութեամբ (էջ 9):

Այդ դեպքից հետո, հորենացին ծ, ծա և ծր գլուխներով պատմում է հոսքով Գ.ի գերի լուսնի, Վոսմաշապուհի հաջորդությունը, Սահակի երթալը Տիարոն, ստացած պատիվներն ու վերադարձը, Արտաշրի հրովարտակը Վոսմաշապուհին, հունաց և պարսից մեջ գրգռված պատերազմը Միջագետքում, Վոսմաշապուհի միջամտությունը և այլն, որից վերադարձին տեսնում է, որ ժողովն արդին գումարված է:

Հորենացու պատմածը շատ ծանրակշիռ է. մերժել այն, հենց այն պատճառով, որ պատմողը հորենացին է, խելացի գործ չէր լինի: Ուստի պետք է մանրամասն քննել. թե արդյոք կա՞ն հանգամանքներ, որ հորենացու պատմածը ստուգեն, կարող են այդ հանգամանքները ուրիշ ձևով մեկնվել, որից էլ հանել եզրակացությունը հորենացու համար նպաստավոր է թվում այն հանգամանքը, որ Վաղարշապատում գումարված ժողովի առաջին նիստերին ներկա չէ Վոսմաշապուհ, թե՛ ըստ Կորյունի և թե՛ ըստ հորենացու, այլ մի քանի նիստ հետո միայն, եթե ըստ հորենացու ընդունենք, թե այդ միջոցին Վոսմաշապուհ Միջագետքումն էր, այս քացակալությունը կարողարանու: Բայց անշուշտ այս առարկությունը հիմնավոր չէ, որովհետև,

1) Ինչպես վերը նկատեցինք, այս ժողովի նյութը, գոնե այն ժամանակվա նկատումներով, կրոնական գործ համարվելով, աշխարհականներ չէին կանչված այնտեղ, ուստի Վոսմաշապուհ ևս գործ չունի: հորենացին ասում է. «Տղտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսոսն», բայց աշխարհականի (իշխան կամ նախարար), նույնիսկ հասարակ քահանաների խոսք չկու:

2) Հակառակ մեր ունեցած համարմունքին, Վոսմաշապուհը չի երևում այնպես ու-

սումնասիր մի անձ: Ըստ հորենացու, երբ Հարել քահանան հայտնում է Վոսմաշապուհին, թե հայերեն գրեր կան կամ կարող է ինք հնարել, Վոսմաշապուհ փոխանակ այսպիսի մի գեղեցիկ գաղափարով ոգևորվելու: «անփութ արարեալս հեռանում է: Սահակ և Մեսրոպ, ըստ Փարպեցու, բավական ջանք են գործ դնում համոզելու համար Վոսմաշապուհին, որպեսզի հետամտի Դանիելյան գրերը բերել տալու: Այսպիսի մի անձ, ի՞նչ աներ ժողովին ներկա լինելով:

3) Ժողովականները չէին հրավիրած Վոսմաշապուհին, քանի նրանից օգուտ չէին սպասում, և եթե հրավիրեցին, միայն այն պատճառով էր, որ լսել էին, թե տեղեկություններ ունի Դանիելյան գրերի մասին, առանց դրա Վոսմաշապուհ կարող էր մինչև վերջն էլ հանգիստ նստել: Այդպիսով ուրեմն վերի առարկությունը շնջվում է:

Ընդհակառակը, հորենացուն հակառակ են հետևյալ առարկությունները.

1) Այն կասումը, որ հորենացին սալիս է Մեսրոպին, բոլորովին հակառակ է նրա վրա տեսնված տարապայման խսնդին: Մեսրոպ թողնում է ամեն բան՝ գրերի գլուխին հետամտելու համար. հետո, ամբողջ 35 տարի շարունակ ման է գալիս վարդապետելու և ուսուցանելու համար, և ի՞նչ պատճառ կար, որ գործը դեռ նոր սկսած՝ հանկարծ ընդհատեր:

2) Ինչու Կորյուն կամ Փարպեցին չեն հիշում այսպիսի մի լքում և Մեսրոպի վերադարձը դեպի ճգնական կյանքը չեն պատմում: Ներքին՝ է այսպիսի լռություն, չէ՛ որ պետք էր դոնե մի քանի բառով ակնարկել:

3) Ի՞նչ արեց Մեսրոպ այդ երկրորդ ճգնություն ժամանակ, ի՞նչպես եղավ, որ նորից թողեց քարայրը և երկրորդ անգամ իջավ հետամտելու գրերի գլուխին, ինչու՞ նույնիսկ հորենացին չի հիշում սրա հանգամանքները:

4) Ինչպես հետո պիտի ցույց տանք, Մեսրոպի կրած դժվարությունները միայն Դանիելի պատճառով էին. այնպես որ, եթե Դանիելյան գրերի հարցը դուրս եկած լիներ, մենք երկու տարի ավելի շուտ պիտի ունենայինք հայ գրականություն: Ուզում ենք ասել, թե դեռ առաջին ժողովի ժամանակ Մեսրոպ իր մեջ արդեն խնդիր վճռած էր և հուսահատվելու քնավ կարիք չկար:

Արանից հետևում է, թե հորենացին այսպիսի մի ընդհատում դրել է դիտմամբ, որպեսզի կարողանար տեղավորել ծ և ծա գլուխներին մեջ պատահած դեպքերը. իսկ ծր գլխով պատմածը նրա համար է, որպեսզի Վոսմաշապուհի ստացած տեղեկությունը հանդամանորեն բացատրի: Եվ ի՞նչ վիպական

գոապադիպություն— Վոաժապուհը գնում է Միջագետք, Դանիելյան գրերի մասին պատահամար տեղեկություն է ստանում և ճիշտ վերադարձին տեսնում է, որ Սահակ և Մեսրոպ նույն նյութի համար ժողով են կազմել, թե մենք մերժում ենք հորինացու ծ և ծա պլուխներով պատմած դեպքերը: Ամենևին: Այլ տեղում ենք միայն ասել, թե Մեսրոպին վերագրված ընդհատումը հորինացու գլուխն է միայն՝ հիմնված սխալ հաշվի վրա: Մյուս դեպքերը կարող են պատահած լինել, իհարկե ժողովից բավական առաջ: Դրանց քննությունը մեր ծրագրից դուրս է:

§ 6

Մինչդեռ Կորյուն և Խորենացի հայտնի կերպով ցույց են տալիս համազումար ժողովի գումարումը, Մեսրոպի կրած ծանր ճիգերը և այլն, Փարպեցին բոլորովին հեշտ և տեսվարի կերպով լուծել է ուղում ամեն բան: Նախ, նա շփոթի ժողովի գոյությունը, այլ Մեսրոպ դիմում է պարզապես Սահակին, հայտնում նրան իր վաղուցվա մտածմունքը: Սահակ քաջալերում է նրան, թե ռոգ մի անի, այդ ասածը շատ ուշին է բան է: Ես քեզ մի քանի քահանա օգնական կտամ, և եթե չուզ չկարողանաք, ինձ բերեք, ես կուղղեմ կվերջացնեմ: Սահակ հետո ավելացնում է, թե պետք է այս բանը նաև թագավորին իմաց տալ, որովհետև մի անգամ պատմել է Դանիելյան նշանագրերի մասին: Այնուհետև երկուսը միասին դիմում են Վոաժապուհին և Դանիելյան գրերը բերել տալիս: «Նկեալ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ՝ զեկուցանէր նմա զիրոյն բազմաժամանակեալ մտածութեան զխնդիրն, և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան անտիս, թէ՛ Զօրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. և ուր տկարանայք ի կարգել զհեզեանայսն՝ բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի յոյժ դիրին է պիտ իրացդ զոր հայցես: Բայց նախ արժան է մեզ զգացուցանել թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարեւոր խնդրոյ...» Եւ մտեալ սրբոյ կաթողիկոսին Հայոց Սահակայ հանդերձ երանելեաւն Մաշտոցիւ առ թագաւորն Վոաժապուհ, և իմացուցեալ նմա զպէտս իրացն, յիշեաց և ինքն թագաւորն զխօսեցեալսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա, զոր և նորս պատմեալ ուրախացոյց...» (Փարպեցի, էջ 36—37):

Փարպեցու պատմությունը երկու տարբեր խնդիր է երեւան հանում: Նախ՝ ժողովի բացակայությունը և երկրորդ՝ Մեսրոպի գործի նվաստացումը: Երկրորդի վրա խոսել պա-

հելով հաջորդ գլխին, անցնենք առաջինին: Որովհետև Փարպեցու աղբյուրը Կորյունն է, ուստի ամեն անգամ, որ Փարպեցու մոտ դժվարության հանդիպենք, լուսկանաբար պիտի դիմենք սկզբնաղբյուր Կորյունին, նրանով հարցը պարզելու համար: Եթե Փարպեցին ունենա ավելի մի բան, որ Կորյուն չունի, կարող է Փարպեցին ունենալ իրավունք, այն պատճառաբանությամբ, թե Կորյուն համառոտախոս լինելով, հապավել կամ մոռացել է նշանակել այդ դեպքը: Ա՛յ կամ, թե Կորյունի ձեռագիրը հետո փոփոխություն է կրել, և կամ վերջապես Փարպեցու պատմածը ավանդություն է և այլն: Եթե Փարպեցին չունենա մի բան, որ Կորյունն է պատմում, պարզ է, որ Փարպեցին, ավելաբանությունից հետո մնալու համար հապավել է: Իսկ երբ Փարպեցին պատմում է դեպքը այնպես, որ բոլորովին տարբեր է Կորյունից, այստեղ խնդիրը բոլորովին փոխվում է: Եղբարեկցությունը մե՛կ է միայն, Կորյուն այնպես վստահելի պատմիչ է, որ Մեսրոպի կենսագրության համար կարելի է մինչև իսկ մտածել համեմատության գնելու Փարպեցու հետ: Հատկապես մեր այս խնդրին դալով, կարող ենք ասել, թե Փարպեցին չի հասկացել Կորյունի խոսքը, որ իրոք շատ մթին է: Սեպա ելանէր նոցա պարզեական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն— միայն գուշակությամբ կարելի է հասկանալ: Եթե Խորենացին շատ լավ հասկացել է այս մութ խոսքի իմաստը, նույնը պարտավոր չէր նաև Փարպեցին:

§ 7

Ո՞րտեղից կարող էր Վոաժապուհը լսած լինել, թե Դանիելի մոտ կան հայերեն գրեր: — այս մասին մեր երեք գլխավոր աղբյուրները տարբեր տեղեկություններ են տալիս: Փարպեցին պատմում է, թե ժողովի նիստերից մի քանի օր առաջ, մի եկեղեցում խոսք է բացվել հայերեն լեզվի այս պակասության վրա և մեկը թագավորին ասել է, թե «Ես մի գուշակ մի հայկուհու մոտ հայերեն գրեր տեսել եմ: Բազավորը այս մասին պատմում է Սահակին և երբ ժողով է լինում, Սահակ այս պատմությունը հիշելով, դիմում են թագավորին: «Վասն որոյ և քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս՝ առեալ բանք լեկեղեցւոց յաղազս կարօտութեան այդպիսի պիտոյից, ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ունեմն հայկականս ի գեօղ միում. և թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի և ինձ (Սահակայ) նա պատմեաց» (Փարպեցի, էջ 37): Մի քանի

տող հետո, այս «մեկը» վանական է դառնում. «Յիշեաց և ինքն թագաւորն զխօսեցեալսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա», Հետո, երբ Վահրիճին ուղարկելու ժամանակը գալիս է, Փարպեցին մի քիչ ավելի է պարզում խնդիրը, ասելով. «Այր մի երէց Հարէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայ, որ և մերձաւոր էր առն բարեպաշտի Դանիելի եպիսկոպոսի» (էջ 38)։

Խնդիրը մի քիչ ավելի է մեծացնում Խորենացին, որին հետևում է նաև Կիրակոս Գանձակեցին, Խորենացու պատմածի մեջ ասաց թե, ասել է թե, մի օր, մի գլուղ, մի եպիսկոպոս և այլն անորոշ խոսքերը վերանում են և ամեն ինչ հանգամանորեն ճշտվում է։

Այն ժամանակները (այսինքն համագումարից ոչ շատ առաջ), ասում է Խորենացին, հիվանդացավ Արկադ կայսրը, ահագին եռկրաշարժներ ու հրդեհներ պատահեցան Բյուզանդիոնում՝ ի վրեժ Հռոմի և Ռսկեքերանի, որ արտորվել էր. հռոմաց կայսրութունը խառնաշփոթ վիճակումն էր. բանակների մեջ խռովություն ընկավ. բանակները իրար հետ կռիվուց հետո, զենքը պարսից դեմ դարձրին, Ռատի պարսից Վոսմ թագավորը հրամայեց Վոսմապուլոհին՝ իջնել Միշա գետը, վեճերը դադարեցնել, խաղաղութունը վերահաստատել և երկու կողմերի զործակալների հաշիվը տալ։ Վոսմապուլոհ գնաց Միշա գետը և այս բոլորը հաշտութանը կատարեց. բայց իր զործառնութանց մեջ բավական նեղություն կրեց քարտուղարի պատճառով, որովհետև Մեսրոպ քարտուղարական պաշտոնից հեռացել էր և ըկար այնպիսի մի դիվանագետ, որ այնպես ճարտար պարսկերեն իմանար, Հարել անուն մի քահանա ներկայացավ Վոսմապուլոհ թագավորին և խոստացավ պատրաստել հայերեն գրեր, որ իր ազգական Դանիել եպիսկոպոսն էր հարմարեցնել, Այս առաջարկի առաջ թագավորը անփութ գտնվեց, Նրա գարձավ Հայաստան, տեսավ, որ Սահակ և Մեսրոպ եպիսկոպոսների հետ ժողով են գումարել՝ հայերեն գրերը գտնելու համար, որոնց և պատմեց եղբւրյութունը։

Մի փոքր տարբերություն էլ ներկայացնում են Գանձակեցին և Հայսմավուրքը, թեև սրանց աղբյուրը Խորենացին է, Գանձակեցին Վոսմապուլոհի բերանն է դնում հետևյալ խոսքը, համագումարին ներկայաճալու ժամանակ. «Մինչ էի ես ի կողմանս Ասորուց, ասաց ինձ ոմն եպիսկոպոս ասորի՝ Դանիէլ անուն, թէ ունիմ ես նշանագիր հայերէն լեզուի, և ես անփութ արարի առ ժամայն» (էջ 15)։ Այստեղ Դանիելը և Վոսմապուլոհը իրար անձնական ծանոթ են դուրս գալիս. Գանձա-

կեցու մոտ Հարելի բաժինը հապավված է. բայց մի քիչ հետո նորից իր դիրքի մեջ մտնելուց իմացվում է, որ Գանձակեցու արածը մի փոքրիկ խեղաթյուրում է և նշանակությունից զուրկ։

Փարպեցու և Խորենացու տված տեղեկությունները թեև իրարից տարբեր, բայց երկուսի էլ հիմքը նույն են և փոփոխակի իրար են լրացնում։ Կորյունն է միայն, որ թե՛ մեկից և թե՛ մյուսից բոլորովին զանազանվում է։

Կորյունի տված տեղեկությունը, որ մինչև այժմ նկատողության չէ առնված բանասերներից, հետևյալն է. «Եւ իբրեւ պատմեցանոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիելէ...» (էջ 8)։ Նշատառ տված բառերի պահած իմաստն այն է, որ Դանիել եպիսկոպոսը առաջուց գրած էր Վոսմապուլոհ թագավորին՝ իր գտած գրերի մասին, և հետևաբար Վոսմապուլոհն ունեցած տեղեկությունը միայն այս նամակից էր բխում։

Այսպես է մտածում նաև Յնտգլյան («Վարք Մաշթոցի», էջ 17) և սրանից հետևողներն է, թե «Ուրեմն ամենքն առաջ հայերեն գիր հայթայթելու միտքը ու առաջարկը եկած է Դանիել ասորի եպիսկոպոսն, որ զայն գրով իմացուցեր է Վոսմապուլոհին, բնականաբար իբր արքունի հրովարտականություն, դիվանական գրութանց համար պիտանացու, մինչ Մաշթոց այդ հոգը կունենա ավետարանելու արվեստին համար, Կերել թե թագավորը հետևում տված չէր Դանիելի գրածին, փոյթ չէր ըրած, դի հետո Մաշթոց և Սահակ միաբան հոժարեցուցին զգարքսյ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ»։

Մեջ բերված երեք պատմություններից ճշմարիտը անշուշտ պետք է, որ Կորյունի ավանգածը լինի, քանի որ պատմության հիմնական աղբյուրը, ժամանակակից և լավագույն պատմիչը Կորյունն է։ Բայց որպեսզի այս եզրակացությունը ի հառաջագոյն և հապճեպ չլինի, հարկավոր ենք համարում մանրամասն քննել խնդիրը։

Կարո՞ղ ենք արդյոք մտածել, թե գրելոյն այստեղ ձեռագրական սխալ է և պետք է ուղղել զրոյն, գրեցն կամ հետևաբար՝ գրերոյն, և կամ, ինչպես Գարազաշյան («Քննական պատմութիւն», Դ, էջ 36) կարդում է, գրեւելոյն, որով գրվածքի իմաստը կխափանվի։ Բայց անշուշտ կարելի չէ անել այդպիսի մի սրբագրություն։ Այն պարագային պետք պիտի լիներ ասել Վասն գրոցն Դանիելի։ Զի հարմարվում ի Դանիելի բացառականը։

Նրկորոգ առարկությունն այն է, որ եթե Դանիելը կարող էր գրել Վոսմապուլոհին, ին-

չու՝ Վոսմաշապուհ ուղղակի չի գիմում Դանիելին նամակով, որը Վահրիճի և Հարել քահանայի միջոցով է խնդրում այն նշանագրերը՝ Մի՞թե Դանիել ասորին ավելի բարձր ու անմատչելի անձնավորություն էր, քան Վոսմաշապուհ թագավորը։ Բայց սրա պատասխանն էլ անշուշտ այն է, որ Վոսմաշապուհ գործին ավելի եռանդուն հարած լինելով, լուզեց գիմել նամակով Դանիելին, ինչ որ կարող էր անփուլթ վերաբերմունք համարվել, այլ ավելի հաստատուն ու գործնական կերպով բռնելու համար գործը, ուղարկեց Վահրիճին, Եվ եթե Վահրիճն էլ ուղղակի լզնաց Դանիելի մոտ, սրա էլ պատճառն այն է, որ Վահրիճը պալատական մարդ լինելով, ուսման հետ գործ լուսնի և չէր կարող Դանիելից տառեր սովորել։ Այսպիսի մի բան անելու համար կրոնավոր էր պետք, և ահա ամենահարմար կրոնավորը ներկայանում էր Հարելը, որ նաև Դանիելի ազգականն էր, լեզվով էլ համալեզու Ուստի նրան զրեց Վոսմաշապուհ և Հարել գնաց, տառերը սովորեց և ուղարկեց Վոսմաշապուհին։

Այս երկու առարկությունները շնչվում հն այսպիսով։

Կա սակայն մի երրորդ ավելի մեծ առարկություն, որ լեզվական է։ Այգ է նախադասության անսովոր ձևը, Հայերենի մեջ ծանր է հնչում «վասն գրելոյն ի Դանիելէ» — «Դանիելից գրվածի համար» կամ, ավելի վատ՝ «Դանիելից գրելու համար»։ Հայ գրիչը այս բացատրության փոխարեն պիտի ասեր «վասն գրելոյ Դանիելի»։ Բացի սրանից, տրամաբանությունը պահանջում է, որ նախադասության առաջին բառերը՝ «Եւ իբրև պատմեցաւ... վասն գրելոյն» նախորդ նախադասության նման բառերի կրկնությունը լինեն։ Օրինակի համար՝ ասում ենք. «Պատգամավորը պատմեց, թե քչեմքին արդեն մտնեցել է սահմաններին, Եվ երբ որ նա պատմեց քչեմքու մտնելալը, բոլորը պատրաստվեցին ճանապարհ ընկնելու»։ Ըստ այսմ մեր նախադասության մեջ էլ իբրև պատմեցաւ ձևը կրկնությունն է նախորդ նախադասության լայնածավալ պատմելը՝ բառերի Սակայն գրելոյն ձևը չկա. և դժբախտաբար ճիշտ նույն տեղը նրան փոխանակող բառը կորած է. այնպես որ խոսքը բոլորովին կաղ է մնում. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյն եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղ-

փարետաց հայերէն լեզուի...»¹. Հետո ի՞նչ բայը չկա, Պակասը անշուշտ բայ է և անշուշտ այս գրելոյն ձևն է, Բայց գրել չի հարմարվում այստեղ, Ամբողջ պատմության ընթացքը, ինչպես նաև բառի հարմարությունը ցույց են տալիս, որ այստեղ պիտի լիներ գտնալ էր. «Որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփարետաց հայերէն լեզուի գտնալ էր», ինչպես որ մի քանի տող հետո էլ ասվում է նույն գրերի համար՝ «ապա առաւ կրանելի հոգարարձուացն զյանկարծագիտսն» (էջ 9), որի դեմ Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակության ձեռագիրն ունի զյանկարծագիտ խնդրելի (տե՛ս «Արարատ», 1912 թ., էջ 507)։ Ըստ այսմ գրելոյն ձևն էլ պետք է ուղղել գտնալոյն, որ թե՛ հարմար է գալիս «ի Դանիելէ» բացատրականին և թե՛ պահանջում է տառական ամենաշնչին սրբագրություն։ Երկաթագիր գրությունը S և P միայն հետևի գծիկով են զանազանվում. իսկ եթե Գ տառն էլ միասին առնենք, սրա թեղ խառնվելով S-ի հետ, գրեթե նույն ձևը կտար. ԳՏ=ԳՐ,

Այս քննություններից հետևում է, թե հիշյալ հատվածում գրելոյն ձեռագրական սխալ է և նրանից հանված հետևությունն էլ սխալ։ Վոսմաշապուհի և Դանիելի միջև թղթակցություն տեղի ունեցած չէ և հետևաբար Վոսմաշապուհի աղբյուրի մասին տեղեկություն չունի Կորյուն։ Սրանով փարպեցու և Խորենացու պատմածները կմնան առանց վավերացման, թեև երկուսի հիմքը նույն է երևում։

§ 8

Վերջին խնդիրը, որ մնում է քննել, Վահրիճի մասին է։ Ըստ Կորյունի և Փարպեցու, Վահրիճի պաշտոնն եղավ միայն հրովարտակր տառնել Հարելին և նշանագրերը բերել Հայաստան։ Հարել ըստ հանձնարարության Վոսմաշապուհի, գնաց Դանիելի մոտ, սովորեց գրերը և Վահրիճի հետ ուղարկեց թագավորին։ Այս մասին անշուշտ չի կարող կասկած լինել, որովհետև թե՛ Կորյունի և թե՛ Փարպեցու մեջ, համապատասխան բայերը դրված են եղակի. «Եսկ Հարելին զայն լուեալ, փութանակի հասանէր... ինքն տեղեկանալ... հասուցանէր» և այլն և վերջապես «Եսկ աղբային... ընկալեալ գնշանագիրսն ի Հարելէն...»։

Սակայն Խորենացին այնպես է պատմում, որ իբր թե Վահրիճ ևս Հարելի հետ գնացել է

1. Գառնաշայան, «Քննական պատմություն», Գ, էջ 36, կարդում է գտնալ էր, Մարկաբատ, էջ 21՝ տեսնալ, Ջեղաթյան՝ գտնալ էր կամ գտնալ էր։

Դանիելի մոտ սովորելու և նույն գրերը միասին բերել են թագավորին. «Զոր առեալ, և երթեալ ետ վառ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիելէ... եկեալ ետուն ցմեծն Սահակ և Մեսրոպ (հորենացի, Գ. ծր): Խորենացու տված այս տեղեկութիւնը թյուրիմացութեան արդյունք է և իբրև հակառակ Կորյունին ու Փարպեցուն՝ անընդունելի:

Ավելի տարօրինակ է Հայսմավուրքը (տրե 7), որ այնպես է պատմում, թե իբր Դանիել եպիսկոպոսը անձամբ եկել է Հայաստան և Սահակի ու Մեսրոպի հետ աշխատակցել է երկու տարի նույն գրերը փորձելու համար: Ահա այս պատմությունը. «Եւ թագաւորն Վռամշապուհն ետես զսուրբ հայրապետն Սահակն և զվարդապետն Մեսրոպն ի նոյն հոգոց վարանումն և ասաց նոցա վասն քահանայի միոյ ասորոյ Դանիէլ անուն, թէ խոստացաւ նշանագիր առնել հայոց լեզուին: Եւ առաքեալ բերին զնա: Եւ ուսուցեալ մանկունս զամս Բ, և ոչ կարացին հանել ի հեգ, քանզի ի հոռոմ լեզուն միայն էր յարմարեալ»:

Այս սխալ տեղեկութեան վրա ծանրանալով՝ պատմիչն ասելով է:

Այսպիսի մի սխալ էլ կատարում է Ալիշան («Գիշիկք», Ա, էջ 324), որ Հարելի ու Վահրիճի դերը բոլորովին կրճատելով, ասում է, թե Վռամշապուհը Մեսրոպին ուղարկեց Դանիելի մոտ և նա անձամբ բերավ տառերը Հայաստան: Սա էլ իհարկե համառոտութեան համար է արված, առանց մտածելու, թե սրանով պատմությունն է խանգարվում:

Մի ուրիշ սխալ էլ էմինն է անում, որ Խորենացու ռուսերեն թարգմանության մեջ այնպես է գուրս բերում, որ իբր թե Դանիելյան գրերը Վահրիճն է շարել հունարենի շարքով: Ամբողջ հատվածը հետևյալն է. «[Վռամշապուհ] առացեալ հրեշտակութեամբ զայր մի պատուական... Վահրիճ անուն... առ Հարէլն այն, Զոր առեալ և երթեալ նովա հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիէլէ, կարգեալ ըստ ձեռն օրինակի յունականին զվաղնչուց գտեալ նշանագիր տառից...»: Այստեղ նախադասությունը այնպես վատ է կազմված, որ անկարելի է հասկանալ, թե ո՛վ ո՛ւմ է առել և ո՛վ ո՛ւմ հետ է գնացել: Նմանապես անտեղ է մնում կարգեալ դերբայը, որ էմին տվել է Վահրիճին: Հարությունյան մերժելով այս, տալիս է Դանիելին, իբր թե Դանիելն է շարել տառերը հունականի շարքով: Բայց ես կարծում եմ, որ եր-

կուսն էլ սխալվում են: Այն տառերը վաղուց ռուսերեն իրենց հունական շարքը և նոր շարելու կարիք չկար: Ուրիշ խոսքով, այն հատվածը պետք է կարդալ կամ հասկանալ՝ «... զկարգեալ ըստ ձեռն օրինակի յունականին զվաղնչուց գտեալ նշանագիր տառից...»: Այսպես է հասկանում նաև Մալխասյան, որ Խորենացու աշխարհաբար թարգմանության մեջ ասում է. «Հավ հմտացան վաղուց գրված (իմա՝ գտնված) տառերի շարքին, որ դասավորված էր հունարենի օրինակով»:

Ո՛չ Հարել եկել է Հայաստան (առաքել): Ո՛չ Վահրիճ գիր է շարել կամ սովորել (իմեն տեղեկանալ), և ո՛չ էլ Մեսրոպն է գնացել: Արդարև, Փարպեցու մոտ ասվում է Հարելի համար, թե «առեալ ի նմանէ առ թաղաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ և առ երանելին Մաշտոց հասանէր» (էջ 39), որից երևում է, թե Հարել իբր անձամբ եկել է Հայաստան: Սակայն այս սխալը միայն Վենետիկի տպագրիչն է և ձեռագրերն ունեն պարզապես հասուցանել, ինչպես ունեն նոր տպագրությունը (էջ 14—15) և Կորյուն (էջ 9):

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Մեսրոպ գնաց Վաղարշապատ և հայտնեց իր միտքը Սահակին. գումարեցին համագումար ժողով.— 2. Երկար քննություններ տեղի ունեցան ժողովում. դիմեցին Վռամշապուհին. հայտնեց, որ լսել է, թե հայերեն գրեր կան Դանիել եպիսկոպոսի մոտ. Վահրիճի ձեռքով հրովարտակ ուղարկեց Հարել փահանային, որ Դանիելին գնա և տառերը ուղարկի Հայաստան: Խառնեց ստացան և րացվեցին առաջին հայկական դպրոցները, Դանիելյան տառերով: Մեսրոպ եղավ առաջին ուսուցիչը.— 3. Սասնեցին չի հիշում Դոդրեի փառազօրյունը.— 4. Սասնեցին ժողովը դնում է Աշոխատում.— 5. Խորենացին բյուրիմացաբար համագումարից հետո դնում է մի ընդհատում, Մեսրոպ հուսահատ ետրից գնում է ճգնելու.— 6. Փարպեցին չգիտե ժողովի գումարումը և գրերի գյուտը ուզում է կատարել Սահակի ձեռքով.— 7. Թե քրտեղից էր լսել Վռամշապուհ, թե Դանիելի մոտ հայերեն գրեր կան՝ այդ մասին հաստատ տեղեկություն չկա.— 8. Վահրիճի դերն է եղել հրովարտակը տանել Հարելին և Դանիելյան գրերը բերել Հայաստան:

(Շ ա Ր ու ն ա կ ե ի ի)

ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ



ին հայ աստղաբաշխները, «Աստղաբաշխական երկրաչափութիւն» վերնագրի տակ, ձեռագրերում միշտ շոշափել են այն հարցերը, որոնք կապված են երկրի շափերի ու մոլորակների հեռավորությունների հետ:

Մեր հոդվածի սկզբում, մենք ուզում ենք հախ կանգ առնել առաջին հարցի՝ երկրի շափերի վրա:

Հայկական ՍՍՏ Պետական մատենադարանի № 2762 ձեռագրի թ. 206ր-ում ընթերցում ենք.

«Ձայս երկրաչափականարէն գիտացին: Զի երկրի լայնութիւնն և զերկայնութիւնն ճՁի ասպարէզս ասացին երկրաչափքն, որ հրամանաւ առաջին թագաւորացն Աղեքսանդրի և այլոցն՝ շրջեցան և տեսին զաշխարհս: Արդ՝ ի հասակաւորէն նշմարելով զԱրեգակն՝ թէ 84 անգամ թաւայեցաւ, և թաժանեցին դճՁի ասպարէզն 84 թաւալումն և ՍՍ, որ Ա թաւալումն 7 ասպարէզ կոչեցաւ...»:

Պտղոմեոսն իր 1-ին գրքի 3-րդ գլխում ցույց է տալիս մեկ աստիճանի լայնաման հշգրիտ եղանակը, և հետեւապես՝ դրանով նաև երկրագնդի շրջագծի: Ըստ Պտղոմեոսի, պետք է դիտարկել միջոցով ընտրել երկնականմարի վրա երկու անշարժ աստղեր, որոնք գտնվում են միևնույն աստիճանի վրա: Միաժամանակ, դարձյալ դիտարկել միջոցով, պետք է փնտրել Երկրի վրա երկու վայրեր, որոնք զենիթային կետի վրա, այսինքն ճիշտ գլխավերևում, գտնվեն դիտված աստղերը: Չափելով այդ երկու վայրերի փոխադարձ հեռավորությունը, կգտնենք, որ նա հավասար է 500 ստագիայի: Եվ քանի երկրագնդի շրջագիծը կազմված է 360 աստիճանից, իսկ յուրաքանչյուր աստիճանը՝ 500 ստագիայից, ապա երկրագնդի ամբողջ շրջագիծը պիտի պարփակի 180.000 ստագիա:

Երկրի բնակելի մասի ծայրագույն սահմանների, նրանց երկայնությունների և լայնությունների մասին խոսվում է Պտղոմեոսի 7-րդ գրքի 5-րդ գլխում: Պաղամեոս ամենահարավային զուգահեռականը տանում է

հասարակածից $16 \frac{5}{12}$ հարավ, իսկ ամենա-

հյուսիսայինն անց է կացնում 63° դեպի հյուսիս, այնպես որ ամբողջ տարածությունը ծայրագույն զուգահեռականների միջև կազմում է $79 \frac{5}{12}$ և 16 քր՝ Պտղոմեոսը այդ

թիվը կլորացնելով, գրում է 80° :

Ահա թե ինչու Մատենադարանի № № 582 և 5169 ձեռագրերի հեղինակները, խնայես մենք ցույց կտանք այս հոդվածում, լրիվ չկարենալով ըմբռնել Պտղոմեոսի բառերը, իրենց ձեռագրերում հաղորդում են, թե «երկրի մի ծայրից մինչև մյուս ծայրը տարածությունը հավասար է 80.000 ասպարեզի (ստագիայի)»:

Հոդվածի սկզբում բերված հատվածից մենք տեսնում ենք, որ երկայնության շրջագիծը (ժամանակակից բացատրությամբ ասած՝ միջօրեականի երկարությունը) ընդունվում է հավասար 180.000 ասպարեզի: Ակադեմիկոս Զ. Մանանդյանը, իր «Ձափ ու կշիռները հին հայկական ձեռագրերում» (Երևան, 1934 թ.) և «Երատեսթվենի ստագիան և պարսկական ասպարեզ» աշխատություններում, ասպարեզի համար բերում է հետևյալ ավելյուններ.

1. Ասպարեզ-ասպարեզաց՝ 230,112 մ.
2. Պարսկական ասպարեզ՝ 230,112 մ.
3. Աստղաբաշխական ասպարեզ՝ 159,8 մ.
4. Երատեսթվենի ստագիան՝ 159,8 մ. (157,5).
5. Պտղոմեոսի մղոնի հարաբերությունը էրատեսթվենի ստագիայի հետ՝ $1598:159,8 = 10:1$:

Եթե հաշվումները կատարենք համաձայն 1-ին և 2-րդ տվյալների, ապա միջօրեականի երկարության համար կատարանք 41.420,16 կիլոմետր: Նույն հաշվումները կատարելով համաձայն 3-րդ և 4-րդ տվյալների՝ կատարանք ընդամենը 28.764 կիլոմետր:

Ստացված այս արդյունքներից առաջինը մի քիչ մեծ է միջօրեականի իսկական երկարությունից, որը հավասար է 40.000 կիլոմետրի, իսկ երկրորդը՝ շատ փոքր:

Այդ տարօրինակությունն առաջանում է նրանից, որ ասպարեզ-ստուդիայի արժեքը ճշտորեն հայտնի չէ:

Մատենադարանի մի այլ ձեռագրի (№ 582, Թ. 184, 1443 Թ.) «Աստղաբաշխական երկրաչափություն» վերնագրով գլխում հեղինակը բերում է մի փոքր այլ տվյալներ. «Ի հարապակիս ծայրէն մինչև ցհիսիսական շրջանակն ասպարիզի ՄԸ բիւր: Ի սրտէ երկրի մինչև յորում բնակիմքս՝ երկու բիւր 96»:

№ 5169 ձեռագրի Թ. 57-րդ՝ ասվում է համարյա թե նույնը. «Ի հարապակիս ծայրէն մինչև ցհիսիսական շրջանակն ասպարիզի ՄԸ բիւր: Ի սրտէ երկրի մինչև յորում քնակիմքս՝ ասպարէզք Բ բիւր 517»:

Մեզ թվում է, որ գրիչները կոպիտ սխալ են գործում, երբ գրում են, որ «Ի հարապակիս ծայրէն մինչև ցհիսիսական շրջանակն ասպարիզի ՄԸ բիւր» է: Ամենահավանականն այն է, որ Մ-ն միանգամայն ավելորդ է և պիտի լինի ուղղակի Ը բյուր, այսինքն 80.000 ասպարեզ:

Նշված երկու ձեռագրերի տեքստերի հեղինակները երկրաչափի շառավիղի համար տալիս են տարբեր տվյալներ, առաջինը՝ 25.333 ասպարեզ, իսկ երկրորդը՝ 20.533 ասպարեզ: Մեր կարծիքով, երկրորդի տվյալը սխալ է. երեւի հեղինակը չի համակցել 96 կոտորակի իմաստը: Առաջինի մոտ 96 նշանակում է $\frac{1}{3}$, առավել $\frac{1}{8}$ (պարզ է՝ բյուր). իսկ երկրորդը, չորսանկով կոտորակի իմաստը, ուղղակի գրել է 533: Բայց չէ՝ որ մեկ բյուրի $\frac{1}{3}$ -ը կկազմի 3333, իսկ $\frac{1}{8}$ -ը՝ 2000, կամ, ընդամենը՝ 5333 ասպարեզ:

№ 582 ձեռագրի տվյալները ավելի ընդունելի են, քան № 5169 ձեռագրի տվյալները, քանի որ կիսաշրջագծի հարաբերությունը շառավիղի հետ տալիս է $\frac{80\ 000}{25\ 333} = 3,157$, որը շատ մոտ է π ՝ թվի իսկական արժեքին:

Ասպարեզը ընդունելով հավասար 230,112 մետրի, միջօրեականի երկարության համար կունենանք 36.817,92 կիլոմետր, իսկ երկրի շառավիղի համար՝ 5829,437 կիլոմետր: Այս

թվերը, սակայն, համեմատած իսկական տվյալների հետ, այնքան էլ մեծ հեռավորություն չեն ցույց տալիս (սխալը կազմում է 10—12%):

Այս տվյալները բավականին համաձայն են էրատոսթենի և մյուս հին գիտուն աստղաբաշխների տվյալների հետ:

Մեզ համար, սակայն, միայն մի հանգամանք, ընայած մեր երկար որոնումներին, մնում է անհասկանալի. այդ այն է, թե ինչու 180.000 ասպարեզը դարձավ 160.000 ասպարեզ: Մեր թափած բոլոր ջանքերը այդ փոփոխության պատճառարանությունը գտնելու համար՝ մնացիմ անհետևանք, բացի այն, որ հիշատակեցինք վերևում, այսինքն՝ Պտղոմեոսի ծայրագույն կետերի միջև ընդունած 800-ը:

Այժմ անցնենք մեզ հետաքրքրող երկրորդ հարցին՝ միջմոլորակային հեռավորությունների լսվածքին:

Մատենադարանի վերև հիշված № 582 ձեռագրում, մյուս երկնային մարմինների (մոլորակների և անշարժ աստղերի) հեռավորության մասին լսվում են հետևյալ տվյալները.

«Ի մերմէ րնակութենէս մինչև գունդն Լուսնի՝ ասպարէզք 79 բիւր Ժ. մինչև ցգունդն Փայլածուին՝ ասպարէզք 229 բիւր 9 և Ժն. մինչև ցգունդն Լուսաբերին՝ ասպարէզք 522 բիւր 96. մինչև ցգունդն Արեգական՝ 479 բիւր Ժ բիւր. մինչև ցգունդն Լուսնաբերին՝ ասպարէզք 107 բիւր. մինչև ցգունդն Երեւակին՝ ասպարէզք Ժն, եթե 24Ը բիւր, կէս. մինչև ցուրթերոգ գունդն՝ ասպարէզք 522 Ժ 2Ժ և 2 բիւր և երրորդ, թէ հաւատաք վիպասանիսս: Համեմատելու համար, նույն հարցի մասին բերում ենք տվյալներ № 4166 ձեռագրի Թ. 116-ից.

«Ի մերմէ րնակութենէս ի գունդն Լուսնի՝ ասպարէզք 77 բիւր ԾԾ, Եւ մինչև ցգունդն Փայլածուին՝ ասպարէզք 229 բիւր ԾԾն: մինչև ցգունդն Լուսաբերին՝ ասպարէզք 522 բիւր: մինչև ցգունդն Լուսնաբերին՝ 479 բիւր Ծ. մինչև ցգունդն Լուսնաբերին՝ 107 բիւր: մինչև ի Լուսնաբերին՝ 107 բիւր: մինչև ցգունդն Երեւակին՝ բիւր 24Ժ բիւր և կէս: 5Երեւակէն մինչև ցգունդն Լուսնաբերին՝ ասպարէզք 522 Ժ 2Ժ բիւր և 96:

Նույն տվյալները կան մի շարք այլ ձեռագրերում ևս, սակայն մենք բավականանում ենք հիշատակելով ավելի լավ պահպանվածները:

Նախքան այդ տվյալների հետազոտության անցնելը, նշենք երկու հանգամանք.

1. Պարզ է, որ բոլոր դեպքերում նշված հեղինակները կանգնած են երկրակենտրոն սխեմայի վրա, այսինքն նրանց համար հիմնական մեկնակետը երկրագլուխն է, որից և տանում են բոլոր հաշիվները, Այն ժամանակ դեռևս նրանք դադափար չունեին արեվակենտրոն սխեմայի վրա, որի մասին, ըստ միջոցական գիտնականների, առաջին անգամ խոսել է լեհական գիտնական Ն. Կոպեռնիկոսը, Սակայն, ըստ մեզ հասած տեղեկությունների, առաջին անգամ այդ տեսակետը առաջ է քաշել հույն փիլիսոփա Արիստարք Սամոսեցին (5-րդ դար մեր թվարկությունից առաջ): Ըստ երկրակենտրոն սխեմայի, Արեգակը և Լուսինը նույնպես համարվում էին մոլորակներ և նրանք դասավորված էին, Երկրից սկսած, հետևյալ կարգով. 1) Լուսին, 2) Փայլածու, 3) Լուսաբեր, 4) Արեգակ, 5) Հրատ, 6) Լուսնթագ, 7) Երեվակ և 8) անշարժ աստղերի ոլորտը, Ուրանոս, Նեպտուն և Պլուտոն մոլորակների մասին հիմքեր դեռևս դադափար չունեին, քանի որ վերջինները չէին նշված աչքով տեսնելի անհնարին է:

2. Նկատի ունենալով, որ բոլոր տվյալները հաշվված են ասպարեզներով, մենք նորից պիտի վերադառնանք այդ բառի բացատրությանը, Բացի սկզբում հիշատակված ակադ. Հ. Մանանդյանի աշխատությունից, այդ բառի իմաստի բացատրության վրա կանգ է առել նաև պրոֆ. Կ. Պատկանովն իր աշխատության 2-րդ և 9-րդ էջերում տալիս է այդ բառի լեզվագիտական քննադատությունը, Բայց մեզ հետաքրքրում է նրա բացատրության 2-րդ մասը՝ ասպարեզը, որպես երկարության չափի միավորի. «Ասպարեզ բառը շատ հաճախ հանդիպում ենք հին հայկական ձեռագրերում և, առհասարակ, գրականության մեջ, սակայն հազվագյուտ դեպքերում է, որ նա ունենում է, մեզ համար, որոշակի արժեք, Մեր հեղինակի, այսինքն Անանիա Շիրակացու, մոտ այդ բառի համարժեք է հունական ստադիոնը: Արդևն Հերոդոտի ժամանակներում մեծ տարածություններ չափելու համար գործածվում էր ոլիմպիական ստադիոնի երկարությունը, որպես չափի միավոր, որն անվանվում է ստադիոս (σταδιον), Հին բոլոր հեղինակների կարծիքները զուգամիտվում են այն հարցում, որ ոլիմպիական ստադիոնի երկարությունը հավասար է եղել 600 հունական ոտնաչափի կամ

100 օրգիայի, որոնք հավասար են 568,58 պարսկական ոտնաչափի:

Այդ ստադիոն Անանիա Շիրակացին փոխադրում է ասպարեզ բառով (շատ հազվագյուտ դեպքերում — վտավան), որին այդպիսով տալիս է որոշակի նշանակություն և արժեք:

Հին հայերի մոտ գործ են ածվել նաև երկարության չափի այլ միավորներ, ինչպես՝ լարընկեց, նեոընկեց, նետածիգ, ձայնահաս, ձինընթաց, (Ձինընթացը նշանակել է այն տարածությունը, որն անցնում է ձին, այսինքն մարզասարհի երկարությունը, որից կարելի է եզրակացնել, որ ձինընթացն ասպարեզ բառի հայկական թարգմանությունն է):

Հնում, երբ դեռևս գոյություն չունեին ճշգրիտ չափերի միավորներ, փոքր տարածությունների համար, որպես միավորներ, գործ էին ածվում մարդկային մարմնի տարբեր մասերի չափերը, մատի լայնությունը՝ մատնաչափ, ներքանի երկարությունը՝ ոտնաչափ, ձեռքի միջև արմունկ երկարությունը՝ բազուկ և այլն: Մեծ տարածությունների չափման համար փոքր էին ածվում չափերի այնպիսի միավորներ, որոնց միայն պայմանական արժեքը կարող էր տնեմալ որևէ ճշտություն: Այդպիսիներ են քարընկեցը, նետընկեցը, նետածիգը, ձինընթացը և այլն: Վերջինները, ժամանակի ընթացքում, փոխարինվել են ավելի որոշակի արժեք ունեցող չափերի միավորներով՝ ստադիաներով և մղոններով:

Հռոմեական ճանապարհային չափերը արժանի են ուշադրության.

1. mille passus=8 ստադիայի.

2. stadium=125 քադի.

3. passus=5 հռոմեական ոտնաչափի.

Մեր հեղինակի մոտ ասպարեզը (ստադիոն) աստղաբաշխական չափումների մեջ հավասար է 100 քալի, Երկիրը չափելիս, նա հավասար է 143 քալի (ավելի ճիշտ՝ 142⁰/₇ քալի): Այդ տարբերությունն առաջ է գալիս նրանից, որ նա մղոնը հավասարեցնում է 7 ստադիայի, այլ ոչ 8-ի, ինչպես անում էին հռոմայեցիք, որոնց ստադիոն հավասար էր 125 քալի:

Ընդունելով ասպարեզի երկարությունը հավասար 230,112 մետրի, երկնային մարմինների (լուսավորների) հեռավորությունների համար կունենանք հետևյալ պատկերը.

Տ ա ր ա ծ ու թ յ ու ն ք	Հեռավորությունը՝ առավարեցվեցով	Հեռավորությունը՝ կիլոմետրերով
երկրի հարավային ծայրից մինչև հյուսիսայինը (կիսաշրջագիծ)	(5) 80.000	18.409,96
երկրի շառավիղը	25.333	5.829,4373
երկրից մինչև Լուսին	931.000	214.234,272
» » Փայլածու	1.860.015	428.011,77
» » Լուսարեք	4.475.333	1.029.827,83
» » Արեգակ	30.930.010	7.117.368,46
» » Հրաա	36.120.000	8.331.645,44
» » Լուսնթագ	52.040.000	11.975.028,48
» » Երևակ	161.688.333	37.206.425,68
» » անշարժ աստղերի գունդը	569.403.333	131.026.519,76

Նույն տվյալներից ելնելով, բայց ասպարեզը ընդունելով հավասար 159,8 մետրի

(ըստ աղագ. Հ. Մանանդյանի), կունենանք հետևյալ պատկերը.

Տ ա ր ա ծ ու թ յ ու ն ք	Հեռավորությունը՝ ասպարեցվեցով	Հեռավորությունը՝ կիլոմետրերով
երկրի հարավային ծայրից մինչև հյուսիսայինը (կիսաշրջագիծ)	80.000	12.784
երկրի շառավիղը	25.333	4.048,213
երկրից մինչև Լուսին	931.000	148.873,8
» » Փայլածու	1.860.015	297.230,4
» » Լուսարեք	4.475.333	715.158,213
» » Արեգակ	30.930.010	7.742.616,6
» » Հրաա	36.120.000	5.971.976
» » Լուսնթագ	52.040.000	8.315.992
» » Երևակ	161.688.333	25.837.795,6
» » անշարժ աստղերի գունդը	569.403.333	90.990.562,51

Համապատասխան կերպով, Երկրորդ պայուսակի տվյալները ավելի փոքր են և դա ցույց է տալիս, թե որքան մեծ արժեք ունի ասպարեզի շափի ճշգրիտ պիտենալը:

Շատ հետաքրքրական են այդ տարածությունների հարաբերությունները (անկախ ասպարեզի շափից): Այսպես, օրինակ, Լուսնի հեռավորությունը երկրից, արտահայտ-

ված երկրի շառավիղներով, կազմում է՝

$$\frac{931.000}{25.333} = 36,72$$
 շառավիղ կամ, կտրաց-

ված, 37 շառավիղ (իսկական արժեքն է՝
 59—60 շառավիղ):

Արեգակի հեռավորությունը երկրից, արտահայտված երկրի շառավիղներով, տալիս է՝

$$\frac{30.930.010}{25.333}$$
 , որը հավասար է մոտավո-

րապես 1.222 շահավիդի (խակական արժեքն է՝ մոտավորապես՝ 2.300 շահավիդ)։

Լուսնի համար ստացված տվյալները համարյա թե 2 անգամ ավելի փոքր են, քան Արխատարք Սամոսեցու ստացած տվյալները, իսկ Արեգակի համար ստացված տվյալները համապատասխանում են Հիպարքի՝ տվյալներին։

Նույն տարածությունների մասին խոսվում է նաև Մատենադարանի մի այլ ձեռագրում (№ 713, Թ. 115ա), որի հեղինակն է համարվում Հովհաննես Բարսեղը՝ Նա գրում է.

«ՀԱՐՑ. Գերկրէս մինչև ի Լուսինն և այլ մոլորականք մինչև ի հաստատութիւն րանի՝ մղոն պատի։

[ՊԱՏԱՍԽԱՆԻ]. Ընգեստասան Ռ և Դժ և ԼԶ մղոն է Երկրէս մինչև ի Լուսինն, և ի Լուսինն մինչև ի Փայլածուն՝ է Ռ և Ըժ ԺԲ մղոն է, ի Փայլածուն մինչև ի Լուսաբերն նոյն լափովն է, ի Լուսաբերն մինչև ի Արեգակն՝ ԻԳ Ռ Ն ԼԶ մղոն է, Արեգակնէն մինչև ի Հրատն՝ ԺԷ Ռ Ո ԻԾ մղոն է, ի Հրատն մինչև ի Լուսնթագն՝ Զ Ռ Ըժ ԺԲ մղոն է, ի Լուսնթագն մինչև ի Երևակն՝ նոյն լափովն է, ի Երևակն մինչև ի Հաստատութիւնն՝ ԻԳ Ռ Ն ԼԶ մղոն է, Բովանդակ յերկրէ մինչև ի Հաստատութիւնն՝ ժ Ռ Թ Ռ Դժ ԶԵ մղոն է, Մէկ մղոնն Բ ասպարէղ է, մէկ ասպարէղն Եժ նհտածիգ է։

Դումարելով բոլոր տարածությունները, սկսած երկրից մինչև անշարժ երկինքը (Հաստատութիւնն)՝ կստանանք 109.181 մղոն, որը 194 մղոնով ավելի փոքր է հեղինակի տված գումարից՝ 109.375 մղոն։

Զշարիտ տարածությունների հաշվմանը արգելք է հանդիսանում հեղինակի երկմիտ արտահայտությունը մղոնի լափի մասին — մի կողմից մղոնը հավասար է 2 ասպարեղի, մյուս կողմից ասպարեղը հավասար է 500 նետածգի, Հետևապես հեղինակի մոտ ասպարեղն ունի մի այլ իմաստ, որը մեզ համար զուգնում է հանելուկի՝ Ո՛չ մի հեղինակի մոտ ասպարեղը չի հավասարեցվում 500 նետածգի, Այդ անընդունելի է, և ավագույն դեպքում կարող ենք ենթադրել, որ գրչի սխալ է և պետք է լիներ ժ նետածիգ, Այդ դեպքում նրա ասպարեղը կլինի հավասար 15.980 մետրի, որն իր հերթին հավասար կդառնա 10 պտղոմեդական մղոնի, նկատի ունենալով, որ հեղինակի մոտ մղոնը հավասար է 2 ասպարեղի, ապա նրա մղոնը պիտի հավասարեցվի 20 պտղոմեդական մղոնի, Եթե ուշադրություն չդարձնենք հեղինակի բառերի վրա մղոնի վերաբերյալ, այլ համոտակի հաշվենք մղոնը հավասար 2 ասպարեղի, իսկ ասպարեղը՝ 230,112 մետրի, մենք կստանանք հետևյալ տվյալները առաջին և երկրորդ ենթադրությունների համար.

Տ ա ռ ա ծ ու թ յ ու ն ք		Հեռավորությունը բս հեղինակի ավալների՝ մղոններով	Հեռավորությունը կիրամեսեհեով, երբ 1 մղոնը հավասար է 24 պտղոմեդական մղոնի	Հեռավորությունը կիրամեսեհեով, երբ 1 մղոնը հավասար է 160.224 մետրի
Գերկրէս	մինչև ի Լուսինն	15.436	491.336,56	7.104,02
Ի Լուսնեկ	» » Փայլածուն	7.812	741.006,08	3.595,27
Ի Փայլածուն	» » Լուսաբերն	7.812	990.677,6	3.595,27
Ի Լուսաբերն	» » Արեգակն	23.436	1.739.692,16	11.246,0
Արեգակնեկ	» » Հրատն	17.025	2.302.967,16	8.111,4
Ի Հրատն	» » Լուսնթագն	0.812	2.336.754,68	3.135,05
Ի Լուսնթագն	» » Երևակն	6.812	2.370.572,2	3.135,05
Երևակեկ	» » Հաստատութիւն	23.436	3.119.556,76	11.246,0
Գերկրէ	» » »	109.375 ²	14.092.533,2	51.168,30

1. Խոշոր հունական աստղագետ (1-ին դար մեր թվարկությունից առաջ)։

2. Այստեղ կա փոքր սխալ. 109.375 մղոնի փոխարեն պիտի լինի 109.181 մղոն։

Վերադասավորենք տվյալները մի քիչ այլ թյունները երկրից, և կստանանք հետևյալ կերպ, այն է՝ հաշվենք նրանց հեռավորու-

պատկերը.

Տ ա ր ա ծ ու ր յ ու ն ր		Հեռավորությունը քառ. կմ-ի համար սլյալների մղումներով	Հեռավորությունը կիլոմետրերով. երբ 1 մղումը հավասար է 460,224 մետրի	Հեռավորությունը կիլոմետրերով. երբ 1 մղումը հավասար է 20 պոլոմետրեր մղումի
Երկրից	Լուսին	15.436	7.104,02	491.336,56
»	Փայլածու	23.248	10.699,29	1.232.342,64
»	Լուսաբեր	31.060	14.294,56	2.223.020,24
»	Արեգակ	54.496	25.540,56	3.962.712,4
»	Հրատ	72.121	33.051,96	6.265.679,56
»	Լուսնբազ	78.933	36.787,01	8.002.434,24
»	Երևակ	85.745	39.922,06	10.972.976,44
»	Անշարժ աստղերի ոլորաք	109.181	51.168,30	14.092.533,2

Իհարկե, բերված թվական տվյալները ժամանակակից տվյալների հետ չեն համընկնի, որովհետև այժմ չափումները կատարվում են մեծ ճշտությամբ, շնորհիվ նորագույն տեխնիկայի և չափման միավորների կանոնավորված լինելուն։ Բայց և այնպես պիտի ասել, որ այդ տվյալները շատ հետաքրքրական են, որովհետև դրանք ցույց են տալիս, թե հայկական իրավագիտությունը հասարակությունը որքան էր հետաքրքրվում այդ հարցերով և ուսումնասիրում դրանք։

Ասպարեզի ճշգրիտ չափի գիտնալը մեծ հնարավորություն կտար ավելի մեծ ճշտությամբ իմանալու այդ պատմական տվյալների իրական մեծությունները, բայց ակնկա-

լել, որ նրանք հավասար լինեն այսօրվա չափերին՝ իհարկե չի կարելի։ Այդ բացը՝ հիմնական միավորի բացակայությունը կամ մեր անգործությունը գիտնալու այդ միավորների իսկական արժեքները, միմիայն հայկական ձեռագրերում բերված միավորներին չի վերաբերում։ Նույնը կարելի է ասել բոլոր հին ժողովուրդների չափերի բնական միավորների վերաբերյալ, որոնք անհնար են դարձնում գիտնալ նրանց իսկական արժեքները։ Այդպիսի հին չափերից են, օրինակ, արարական մղունը, գերմանական մղունը, իտալական մղունը, ֆրանսիական տուազը և այլն։





2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների
թեկնածու, ճեպագետ)

Ա Մ Բ Ե Ր Դ Ա Մ Ի Ո Ց Ը

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԱԿԱՐԿ



Ամբերդ ամրոցը գտնվում է Աշտարակի շրջանում, Աշտարակից մոտավորապես 23 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, իսկ Բյուրակյան գյուղից մոտավորապես 12 կիլոմետր դեպի հյուսիս, Արազած լեռան հարավային լանջին, երկու ձորերով եզերվող մի սուր-եռանկյունաձև ընդարձակ դառիթափի վրա:

Ամբերդ ամրոցը մտնում էր պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի մեջ, Արագածոտն գավառը միջին դարերից, Ամբերդ ամրոցի անունով, կոչվել է նաև Ամբերդի գավառ կամ վիճակ: Ամրոցը որոշ պատմական աղբյուրներում կոչվում է նաև Անքերդ, Ինչպես Ամբերդ, այնպես էլ Անքերդ անունների ծագումը պարզ չէ. գրականության մեջ գործածականը հատկապես Ամբերդ ձևն է:

Ե՛րբ է կառուցվել Ամբերդ ամրոցը—ստույգ հայտնի չէ: Պատմական աղբյուրները շատ աղոտ տեղեկություններ են պարունակում նրա մասին: 13-րդ դարի հայ պատմագիր Վարդան Բարձրբերդցին հաղորդում է, որ հայոց Գագիկ Ա. թագավորը (990—1029 թ. թ.), ի թիվս մի շարք այլ գավառների, Ամբերդ ամրոցը նույնպես նվիրում է իր հաջորդ Հովհաննես-Սմբատին (1020—1039 թ. թ.): Նույն Բարձրբերդցու վկայությամբ, Զաքարյանները Սելջուկներից գրավեցին Ամբերդը Ունե (1196) թվականին:

Այդ նույն ժամանակի մի այլ պատմիչ՝

Կիրակոս վարդապետ Գանձակեցին, տեղեկացնում է, որ Զաքարյանները Սելջուկներից գրավեցին Անի, Դվին, Բջնի քաղաքները և Ամբերդ ամրոցը:

Ամբերդ ամրոցը Զաքարյանների կողմից Սելջուկներից գրավելու մասին, րացի վերջը նշված հայ մատենագիրների վկայություններից, պահպանվել է նաև Իվանե և Զաքարի Զաքարյան եղբայրների կողմից, Ամբերդի գրավման հիշատակը հավերժացնելու նպատակով 1201 թվականին կանգնեցրած կոթող-հուշարձանը՝ համապատասխան արձանագրությամբ: Այդ կոթող-հուշարձանը այժմ գտնվում է Աշտարակի շրջանի Ինչքլու գյուղում, եկեղեցու ներսում, մուսքի դռան կողքին:

Ամբերդը Զաքարյանների կողմից գրավելու մասին հիշատակվում է նաև Հաղարծին վանքի (Դիլիջան քաղաքին մոտիկ) հուշարձանների վրա եղած մի արձանագրության մեջ, 13-րդ դարի սկզբներին:

Այս Ամբերդի մասին հիշատակվում է Օհաննավանքի (Աշտարակի շրջան) հուշարձանների վրա եղած 1243 թվականն ունեցող մի արձանագրության մեջ: Այդ արձանագրության մեջ ասվում է, որ Վաչուտյան Բուրդ իշխանը Ամբերդ ամրոցը, որն իր հայր Վաչեն գնել էր Զաքարյաններից, նվիրում է Օհաննավանքին: Օհաննավանքի 1311 տարեթիվն ունեցող մի այլ արձանագրություն հիշատակում է, որ Օհաննավանքի վանահայրը միաժամանակ Շիրակ և Ամբերդ գավառ-

ների առաջնորդն է։ Դրանից հետո Ամբերդի մասին տեղեկությունները բացակայում են։

Ամբերդի մասին վերը հիշատակված տեղեկությունները լրացվում են այնտեղ կատարված հնագիտական թաղամթիվ հետազոտությունների, և որ պլանավորել է 1936 թվականին ակադեմիկոս Հովսեփ Օրբելու անմիջական ղեկավարությամբ կատարված հնագիտական ծավալուն պեղումների, ինչպես և Ամբերդի եկեղեցու վրա փորագրված էպիգրաֆիկ նյութերով և, մանավանդ, պատմա-

յալ բանակով գրավելով ամբողջ Հյուսիսային Հայաստանը Սելջուկներից, վրաց Քամար թագուհու կողմից իրենց գրաված բոլոր այդ երկրամասերը նվեր են ստանում որպես սեփականություն, Իսկ Ջաքարյաններն իրենց հերթին դրանք բաշխում են Հայաստանի իրենց վասալ իշխաններին։ Արագածոտն դավառ տրվում է Վաչուտյան իշխաններին, բացառությամբ Ամբերդ ամրոցի, որը նրանք փոխով գնում են Ջաքարյաններից ու նվիրում Սահնապանքին։



ԱՄԲԵՐԴԻ ԱՄՐՈՑ.— Հյուսիսային բերդապարիսպները։

կան աղբյուրների ուշադիր ուսումնասիրության արդյունքներով։

Պատմական աղբյուրների որոշ տեղեկություններից հասկանալի է դառնում, որ Ամբերդ ամրոցը սկզբում կազմել է Կամսարական իշխանների սեփականությունը, որոնցից բռնազրավեցին Բագրատունիները 9-րդ դարում, 10-րդ դարի երկրորդ կեսում Կամսարականների սեփական երկրների մի մասը, որոնց թվում նաև Ամբերդ ամրոցը, ժառանգում են Պահլավունիները։

Սելջուկյան արշավանքների ժամանակ Ամբերդը նույնպես անցնում է Սելջուկների ձեռքը, իսկ վերջիններից, ինչպես այդ մասին ասվեց վերևում, գրավում են Ջաքարյանները։ Հնդհանրապես, Ջաքարյան իվանե և Ջաքարե եղբայրները հայոց և վրաց միաց-

Քն հ"րը է ավերվել ու ամայացել Ամբերդ ամրոցը—ստույգ հայտնի չէ։ Հավանաբար է, որ մոնղոլական և թուրք-թաթարական արշավանքների հետևանքով, ինչպես Հայաստանի թաղամթիվ բնակավայրեր, Ամբերդը նույնպես ավերվեց ու անմարդսրնակ դարձավ։ Դրան որպես ապացույց կարող է ծառայել այն, որ 14-րդ դարից հետո ոչ մեկ հիշատակություն չկա Ամբերդի մասին, չնայած, որ Արագածոտն գավառը, ընդհուպ մինչև Ռուսաստանի տիրապետությունը, շարունակում էր կոչվել Ամբերդ գավառ կամ վիճակ, Կատարված հնագիտական ուսումնասիրությունները չեն հայնաբերել Ամբերդում այդ ժամանակին վերաբերող նյութական կուլտուրայի որևէ մնացորդ։ Ավելի ուշ Ամբերդը քոչվորների ամառային կայան էր։

2. ԱՄՐԵՐԴԻ ԴԻՐՔԸ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՆԱԴԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՐՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճանապարհը. Ազարակ գյուղում բաժանվելով ճրեհան—Լենինական գլխավոր մագիստրալից դեպի աջ, մեկ կիլոմետրաչափ հարկ տարածությամբ անցնելուց հետո, սկսում է ոլորապտուլա վերելքը դեպի Արագածի լանջերը, նախ անցնում է Բյուրական և ապա Խնաքլու գյուղերը, հետո մանկական ստանտորիան, միշտ դեպի հյուսիս ուղղվելով:

Մանկական սանտորիայից երկու կիլոմետրաչափ հեռու, ճանապարհը թեքվում է ձախ՝ դեպի արեւմուտք և մոտավորապես

լարափնների խոցելի տեղերն ամրացված են քարաշար պարիսպներով:

Հյուսիսային կողմից, կամ եռանկյան հիմքի կողմից, դադիթափը ընդհանուր լեռնալանջից անջատվում է արհեստական ձեռվ ժողոված խոր փոսով, որը ձգվում է արեւելից արեւմուտք՝ հիշյալ երկու ձորերի միջև: Այդ փոսի հարավային եզրին կառուցված են բրգածն աշտարակներով բարձր ու լայն բերդապարիսպներ:

Այդպիսով, Ամբերդի բնական առանձին



ԱՄՐԵՐԴԻ ԱՄՐՈՑ.— Դիվավոր մուտքը:

նույնչափ էլ անցնելուց հետո, կանգ է առնում Կաթնով աղբյուրի ձորակի ձախ ելքին: Մինչև այդտեղ (Ազարակ գյուղից) զննում են ավտոմեքենայով միջգյուղական դաշտային ճանապարհով, իսկ այդտեղից մինչև ամրոցը՝ պետք է գնալ ոտքով. լեռնային կածանով, անցնելով Կաթնով աղբյուրի և Արխաշանի ձորերը:

Ամբերդ ամրոցը, ինչպես այդ մասին ասվեց վերևում, ընկած է սուր-եռանկյունաձև մի ընդարձակ գաղթափի վրա: Եռանկյան արևելյան կողմ եզերվում է Արխաշան գետի, իսկ արևմտյան կողմ՝ Ամբերդ գետի խոր ձորերի բարձր, անմատչելի քարափներով: Այդ

դիրքը և արհեստական կերպով ավելացրած բարձր ու լայն բրգավոր բերդապարիսպները նրան դարձրել են Հայաստանի ամենամեծ, ամուր և ընդարձակ ֆեոդալական ամրոց-դղյակներից ու պաշտպանական ամուր հեռակետերից մեկը:


Մինչև 1936 թվականի հնագիտական պեղումները, որոշ տեղագիրներ, հիմք ընդունելով այն, որ Ամբերդի հարավային՝ եռանկյան սուր անկյան մասում ամրոցապատերը շարված են անմշակ կամ շատ թույլ կերպով մշակված քարերով, առանց շաղախի, այն կարծիքն էին հայտնում, թե Ամբերդ ամրոցը պետք է հիմնադրված լինի ուրարտացիների

ժամանակ՝ 5—7-րդ դարերում մեր թվագրության հետքերը առաջ։ Սակայն նշված պեղումների և կատարված հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները չհաստատեցին այդ կարգի ենթադրությունները։

1936 թվականին կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվեցին ճարտարապետական առանձին բեկորներ, որոնց մշակման, քանդակագործության ձևերը խիստ բնորոշ են 7-րդ դարին։ Բացի այդ, պեղումների ընթացքում հայտնաբերված տեսչին դործածության մի շարք մետաղյա իրերի վրա եղած արարերեն մակագրությունները

ու ամրացումների, մանավանդ, եթե նկատի ունենանք արաբական արշավանքների ժամանակ Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի, առավել ևս բերդերի ու ամրոցների նկատմամբ տեղի ունեցած ավերածությունները։

Սակայն Ամրերդը մեծ փոփոխությունների է ենթարկվում Պաշլավունիների տիրապետության շրջանում։ Պաշլավունիները ավելի ընդարձակեցին ու ամրացրին հյուսիսային կողմի բերդապարիսպները, որովհետև այդ կողմից ավելի խոցելի էր ամրոցը, Այդ պարիսպներին կից, ներսի կողմից կառուցեցին



ԱՄՐԵՐԴ ԱՄՐՈՅ.— Պաշլավունիների պալատը հառափից։

վկայում են Ամրերդ ամրոցի նախնական արարների կողմից Հայաստանին տիրապետելու շրջանը կառուցված լինելու մասին։ Վերը նշված փաստերը վկայում են, որ Ամրերդը պետք է կառուցված լինի մինչև 7-րդ դարը, հավանաբար Կամսարականների կողմից, որոնց սեփականությունն էր կազմում այդ ժամանակ Արազածովան գավառը, որի մեջ մտնում էր նաև Ամրերդը։

Միաժամանակ 1936 թվականի պեղումների արդյունքները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Ամրերդը Կամսարականներից Բաղրատունիներին անցնելուց հետո, ենթարկված լինի որոշ վերակառուցումների

իշխանական ապարանքը, իրենց հոգևոր և մարմնավոր կարիքները հոգալու համար կառուցեցին մի հոյակապ եկեղեցի, բաղնիք, ջրմուղ և այլ կառուցումներ, դարձնելով այն իրենց պաշտպանական ամուր հենակետերից և ամառանոցային վայրերից մեկը։ Պաշլավունիների հիմնական նստավայրը և քաղաքական ու հոգևոր կենտրոնը Բջնի գյուղաքաղաքն էր իր նշանավոր ամրոցով, որը միաժամանակ և ամառանոցային վայր էր։

1936 թվականի պեղումները պարզեցին, որ Պաշլավունիները, բացի Ամրերդի պաշտպանությունն ապահովելուց, մտահոգված են

և լի է այն ապահովելու նաև խմելու ջրով, Այդ նպատակի համար նրանք անց են կացրել ջրամատակարարման երկու հատուկ գիծ, որոնցով ջուր է բերվել ամրոցի ներսը, Ամբերդից քիչ հյուսիս գտնվող աղբյուրներից:

Ջրամատակարարման այդ երկու գծերից մեկը կապված է լինում խողովակներ են, իսկ մյուսը փոքրիկ առվակի ձևով՝ կողերից շարված սալաքարերով, տակից նույն ձևի սալաքարեր և վրայից ծածկած նման սալաքարերով: Առաջինով ջուրը բերվել է ապարանքի մասը՝ խմելու համար, իսկ երկրորդով՝ ամրոցի մյուս մասը՝ ուղղման և բազմաթիվ համար:

Բացի ջրամատակարարման այդ երկու գծերից, ամրոցի ներսում, ապարանքի հարավային կողմում կառուցված է մեծ ջրամբար՝ ամրոցը թշնամու կողմից պաշարելու կամ ջրամատակարարման սխտեմը փյանալու դեպքում, ամրոցի բնակչությանը ջրով ապահովելու նպատակով: Նման մի փոքր ջրամբար էլ հայտնաբերվեց պալատի նկուղային հարկում:

Այդ բոլորից վատ հոգ է տարվել, որպեսզի, եթե ամրոցի պաշարումը երկարատև լինի և ջրամատակարարման սխտեմը փյանա՝ ամրոցի բնակչությունը ապահովված լինի խմելու ջրով: Այդ նպատակի համար, ամրոցի ներսից մի հատուկ անցք է փորված, գետնի տակից մինչև Ամբերդի դեպք, Անցքը բավականին լայն է, կողերը շարված են բարով, սալահատակված է, վրայից ծածկված է սալաքարերով, այնպես, որ երկու մարդ իրար կողք-կողքի կարող են ուղատ կերպով քայլել ուղիղ դիրքով կանգնած վիճակում:



ԱՄԲԵՐԴԻ ԱՄՐՈՑ.— Եկեղեցին հատվածաբանությամբ:

Այդ ստորերկրյա կամ դաղտնի անցքը միաժամանակ սահմանված է եղել ծառայելու որպես կապի միջոց դրսի աշխարհի հետ, եթե ամրոցը ենթարկվի երկարատև պաշարման թշնամու կողմից, դրանով իսկ ավելի կատարյալ դարձնելով Ամբերդի պաշտպանական սխտեմը:

3. ԱՄԲԵՐԴԻ ԶԱՐԿԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՇԼՈՒՆԹՅԱՆ ԿԵՐՊԸ

ա) Բերդապարիսպները (հյուսիսային մասի) գլխավորապես շարված են սեպաձև խոշոր որձաքարերով, որոնց տափակ ծայրերով դարձված են դեպի դուրս, իսկ սուր ծայրերով՝ պարսպի ներսը, մաշուցված ամուր կրաշաղախով: Բերդապարիսպների պաշտպանունակությունն ավելի ուժեղացնելու նպատակով, նրանք լրացված են նույն ձևով շարված բրգաձև աշտարակներով: Պաշտպանական կառուցվածքի այդ ձևը հատուկ է ֆեոդալական Հայաստանի համարյա բոլոր ամրոցներին:

Հարավային կողմի ամրոցապատերի պահպանված մասերը շարված են ավելի մեծ, համարյա անմշակ որձաքարերով, ուստի

շաղախի Շարվածքի այդ ձևը հատուկ է ավելի վաղ ժամանակներին՝ մեր թվականության սկզբնական դարերին, ուստի անկասկած է, որ դրանք Ամբերդի հիմնադրման ժամանակի ամրոցապատերի մնացորդներն են:


Ամրոցի գլխավոր մուտքը հյուսիս-արևելյան կողմից է՝ սրահավոր դարբասի ձևով, որը հիշեցնում է Անիի Մարատաշեն քաղաքային պարիսպների ավագ դուռը, Երկու ութիշ մուտքեր էլ բացվում են հյուսիսային պարիսպներից, որոնցից արևելյան կողմին ավելի փոքր է և բացվում է աշտարակի արևմտյան կողմի մեջ, որն անմիջապես տանում է պալատի ներսը:

Ամբերդի բերդապարիսպների ամրության մասին գաղափար կաղմելու համար բավական է հիշատակել այն, որ Հյուսիս-արևելյան անկյան աշտարակը, ամրանաբար ստորերկրյա ցնցումների հետևանքով, պոկվելու հետևանքով զոհվածով զոհվել է Արխաշանի ձորալանջերով ցած և ոչ մի բեկոր չի պահպանել լարային այդ հսկա զանգվածից։

Բ) Ելխանական ապարանը գտնվում է ամրոցի ամենաՀյուսիսյան մասում, բերդապարիսպների կից, բարձր դիրքով։ Երկնաքանի մեծ շենք է, ուղղանկյուն ձևով դասավորված, բաղկացած է ամբողջ մեծությամբ

բարձր, որոնք հայտնաբերվեցին 1936 թվականի պեղումների ժամանակ։

Գ) Եկեղեցին գտնվում է ամրոցի միջին մասում, Արխաշանի ձորի եզրին։ Հյուսիսային դռան մակառակալ քարի ներսի երեսի վրա եղած արձանագրության համաձայն, եկեղեցին կառուցել է Վահրամ Պահլավունի իշխանը 1026 թվականին։ Հայ արվեստի ամենադժվար և նշանավոր կոթողներից մեկն է, նրա կառուցման ուժը, ճարտարապետական մանրամասների մշակման զեղեցկությունն ու նրբությունը հիացմունք են պատճառում դիտողին։



ԱՄԲԵՐԴ ԵՄՐՈՑ.— Բաղնիք հարավ-արևմուտքից։

բաղնիքով սենյակներից՝ հարավային կողմից մեծ լուսամուտներով, որոնք ունեցել են երկաթե հաստ ձողերով ցանց։ Ամբողջ շենքը շարված է կիսաուսշ որձաքարերով, կրաշաղախով։ Ունեցել է փայլա ծածկ։

Ապարանքի ղլխավոր մուտքը նույն հարավային կողմից է, շենքի կենտրոնական մասից, որը բաղնիքով աստիճաններ ունեցող քարե սանդուղքով տանում է ապարանքի ներսը։ Մուտքը փակվելիս է եղել քարե մեծ դռնով, որը վայր է ընկած դեռևս։ Ավերակ վիճակում է, պահպանվել են արտաքին պատերը, ստորին հարկի սենյակների պատերի ստորին մասերը և նկուղային հարկի ջրամ-

Աս դմբեթավոր, ուղղանկյուն հատակագիծ ունեցող կառուցվածք է, անկյուններում եղած երկհարկանի խորամանկը նրա հատակագիծը ներսից դուրսնում են խաչաձև՝ ուղղանկյուն խաչքներով։ Արևելյան կողմից ունի կիսակլոր մեծ արսիզ՝ բարձր բեմով, խաչքների միացման անկյուններից ձգվող գլանաձև կիսասյուները միանալով կամարներով, իրենց վրա են կրում շատ օրիգինալ դմբեթ, բաղնիքի սանդուղքով և սրածայր վեղարով։

Գեղեցիկ զարդարված շքամուտքը հարավային կողմից է, մի ուրիշ մուտք էլ բացվում է Հյուսիսային կողմից՝ համապատասխան խաչքներից։ Ամբողջ շենքը կառուցված

է մուպ կապտագույն բազալտի սրբատաշ մեծ քարերով, կրաշաղախով, Մալահատակ-ված է, տանիքը պատած է սալաքարերով:

դ) Բաղնիքը գտնվում է պալատի և եկեղեցու միջև, արեւելյան պարսպին կից, զըլխավոր մուտքին մոտիկ, նրկու սենյակներից բաղկացած փոքրիկ շենք է, կառուցված կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով, թաղակապ ծածկով: Մենյակներից մեկը ծառայել է որպես հանդերձարան, իսկ մյուսը՝ որպես լողարան: Զեռուցումը կատարվել է շենքի տակից, հյուսիսային կողմից, ըստ որի տաքացել է շենքի թե՛ հատակը և թե՛ ջուրը: Վերջինս պատերի մեջ անցկացված երկաթյա խողովակներով տարածվել է լողարանի առանձին մասերը:

ե) Մեծ ջրամբարը գտնվում է պալատի հարավային կողմում, բաղնիքին մոտիկ, Բավականին մեծ շենք է, փորված գետնի մեջ, որի կողերը շարված են քարուկրով, ունենալով նույն քարուկրով թաղակապ ծածկ, ներսից ծեփած կրաշաղախով: Զուրը թրծած կավե խողովակներով ջրամբարն է լցվել մի անկյունից, անմիջապես պատի վերևից: Զրամբարի մոտ պահպանվել են մի փոքր մատուռի պատերի ստորին մասերը:


զ) Գաղտնի անցքը գտնվում է ամրոցի հարավային մասում, եկեղեցուց ներքև:

Ակիզը է առնում եկեղեցու մոտի զառիթա-փի ստորոտներից, և ուղղվելով դեպի հարավ-արևմուտք, դուրս է դալիս Ամբերդի գետի ափը: Այդ անցքից շատ աննշան հետքեր են պահպանվել, որոնք հայտնաբերվե-ցին 1936 թվականի պեղումների ժամանակ: Մնացած մասերը քանդվել ու ծածկվել են քարակույտերով և խոտերով, ուստի մեծ դժվարությամբ են նկատվում պահպանված մասերը:

Դիտելով Ամբերդի ընդարձակ տարածու-թյունը և կառուցվածքների մնացորդները կարելի է ասել, որ նա ոչ միայն սոսկ մի ամրոց է, այլև ավանային տիպի մի քնա-կավայր: Նրա հյուսիսային մասը, որն իրեն բարձրադիր լինելու հետևանքով գերիշխող դիրք է գրավում ամրոցի մնացած մասի նկատմամբ, իրենից ներկայացնում է մի մեծ դղյակ, իսկ մնացած մասը կազմում էր քնա-կավայրը: Առաջին մասում ընկավում էին իշխաններն իրենց ընտանիքներով, իսկ երկ-րորդում՝ նրանց ճորտերը: Այդ երկու մա-սերն իրարից բաժանված են եղել հատուկ պարսպապատով, որի մնացորդները մինչև այժմ էլ պահպանվել են:

Մանրամասն հասկանալի է, որ հայ ավա-զանին արել է կարելին՝ պաշտպանվելու դրսի հարձակումներից:





Ա. ԵՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ

(13-րդ դար)

1. ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ

որոս Ռոսլինը 13-րդ դարի փայլուն փառաքշանքով օժտված մանահույնական մանրանկարիչն է, որ հայ նկարչության պատմության մեջ նշանակալից տեղ է գրավում:

Հռոմկլայի մանրանկարչական դպրոցի այս վաստակավոր նկարչի կյանքը հանդիսացել է համակ արվեստ, գեղագրություն և ճաշակ, երևույթներ, որոնք իրենց ցայտուն արտահայտությունն են գտել նրա բազմաթանր արվեստի և դարաշրջանի հայ գեղարվեստի պատմության մեջ:

Արդարև, մեծ է Ռոսլինի տեղն ու դերը հայ մանրանկարչական արվեստի նվաճումների ու վերելքի խնդրում: Լինելով տաղանդավոր նկարիչ, նա միաժամանակ իր գործունեությամբ և իր ստեղծագործությամբ շատ բազմազան է ու բազմակողմանի: Նա անվանի մանրանկարիչ է, զարդագիր, ծաղկող, գեղագիր, դիմանկարիչ և ազգագիր, մի մեծ արվեստագետ, որը ո՛չ միայն իր ողջ ստեղծագործական կարողությունները նվիրել է հայ մանրանկարչական արվեստի զարգացմանը, ո՛չ միայն իր բեղմնավոր գոր-

ծունեության ընթացքում իր ժամանակի հայ նկարչական մշակույթի առաջավոր դիրքերում է կանգնել, այլև իր վարպետ ու ինքնուրույն վրձինով հայ արվեստի ծաղկման ու բարգավաճման գործում ուշագրավ դեր է կատարել և նշանակալից հետք թողել:

Ռոսլինի տաղանդի էական հատկանիշներից մեկը չափազանց հարուստ վառ երևակալությունն է, որի շնորհիվ նա իր դարաշրջանում փայլել է նկարչական աննման հայտնարերում: Նա մեծ վարպետությամբ վրձինել է զարդագրերի ու սկզբնատոների բազմազան տեսակներ, որոնց մոտիվները նա անվերջ կրկնել է նոր և տարբեր ձևերով: Մանրանկարչական արվեստի պատմության մեջ դա մի ուշագրավ երևույթ է հանդիսանում:

Կիլիկյան տաղանդավոր մանրանկարչի արվեստում գրավիչ են նաև մի շարք պայծառ կերպարներ, որոնց հոգեբանական նուրբ արտահայտությունները նշում են, որ նա ո՛չ միայն հմուտ ու ձևակերպված դիմանկարիչ է, այլև հոգեբան նկարիչ:

Նա առանձին վարպետությամբ գծագրել է նաև որսորդական տեսարաններ, ուր նկար-

ված զանազան կենդանիները և նրանց շարժումները վկայում են նրա վրձինի հմտության մասին:

Ընդգծենք և այն, որ Ռոսլինի էսթետիկական հայացքների հիմքը հանդիսացել է ռեալիզմը: Նա առաջադրել է ռեալիստեր կյանքի համար սկզբունքը և դրանով իսկ իր ժամանակի մանրանկարչությունը դարձրել իրականության ցայտուն ազդակներից մեկը: Այդ երևույթով էլ պիտի բացատրել, որ նրա մանրանկարչական ժառանգության մեջ առանձնապես նշանակալից տեղ է գրավում ռեալիզմը, որ հանդիսանում է 13-րդ դարի մի ուշագրավ նվաճումը:

Արձանագրենք նաև այն, որ նա մեծ վարպետությամբ վրձինել է լավագույն մանրանկարներ, որոնց գույներով ներբովոյունը, ազնվությունն ու պաշտառությունը նրա արվեստի մի այլ էական հատկանիշն է: Առհասարակ, նրա ավանդ թողած մանրանկարները կիրիկյան մանրանկարչական դպրոցի ամենափայլուն և մեծարժեք արտադրություններն են, որոնցով նա ո՛չ միայն բարձր է պահել հայ նկարչական և մանրանկարչական շարժման ռեալիստական սկզբունքները,

այլև ավելի ևս խորացրել է իր ժամանակի գեղագիտական հասկացողությունները և հանդիսացել իր դարաշրջանի նկարչական արվեստի առաջնորդն ու ղեկավարը: Ահա թե ինչու՞ նրա վարպետորեն մշակած գեղարվեստական ստեղծագործությունները մարմնացնում են հայ ժողովրդի մանրանկարչական և գեղագիտական արվեստի բանաստեղծական վսեմ ու վեհ գծերը:

Մի հանգամանք պարզ է, որ Թորոս Ռոսլինի արվեստը պատկերում է 13-րդ դարի կիրիկյան հայ մանրանկարչական պատմության ուշագրավ ձևակերպումներն ու նվաճումները և սերտորեն ներգաշակվում նույն պատմաշրջանի նկարչական շարժման հետ, իսկ որպես իր ժամանակի առաջնակարգ մանրանկարիչը, նա խոր հետք է թողել 13-րդ դարի հայ գեղարվեստի պատմության մեջ: Փաստ է և այն, որ նրա վրձինի գեղեցիկ արտադրությունները, իրենց ռեալիստական բովանդակությամբ, կենդանի կերպարներով և գույների ներբովոյմբ այսօր գրավում են գեղարվեստասեր հասարակության, արվեստագետների ուշադրությունը և նկարիչների ուսումնասիրության նյութ դառնում:

2. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

Հայկական մանրանկարչության ինքնատիպ և ամենատաղանդավոր այս վաստակավոր մշակը պատկանում է այն արվեստագետների շարքին, որոնց կյանքի պատմության մասին ձգած տեղեկությունները խիստ աղքատիկ են: Հայտնի չէ Ռոսլինի իսկական ազգանունը, միայն նկարիչը 1256 թվականին Հոռմկլայում գրված ձեռագրի հիշատակարանում իր ազգանվան մասին ընդգծել է այսպես. «...վասն այնորիկ իմոյ անարժանութեան, փցուն և տիմար գրչի Թորոսի մականունն Ռաւսլին կոչեցելոյ ըստ նախնեաց»: Նույնպես շգիտենք նրա ծննդյան և մահվան ճիշտ թվականները: Կան միայն գրչական արվեստի թանկագին նմուշներ, որոնց թվական տեղեկությունների համաձայն, նա ապրել է և ստեղծագործել 13-րդ դարի երկրորդ կեսում:

Նշենք և այն, որ հայ բանասիրական գիտությունը դեռ չի կարողացել պարզել

նկարչի ծննդավայրը: Այս մասին կա միայն մի ենթադրական կարծիք: Դա ՎԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններն են՝ խորագրով Բանասեր Լ. Ս. Խաչիկյանի խմբագրած հատորի (Երևան, 1950 թ.) 356-րդ էջում ընդգծված հետևյալ տողերն են. «Ձեռագրի մանրանկարչական գործերը կարծել են տալիս, որ վերոհիշյալ Թորոսը կարող է նույնանալ մեծահռչակ Թորոս Ռոսլինի հետ: Եթե հաստատվի այս ենթադրությունը, ապա գրչի կողմից գրված ընդարձակ հիշատակարանից հնարավոր կլինի պարզել Ռոսլինի անհայտ կենսագրությունից որոշ դրվագներ»: Հայրը եղել է շատախցի (ճիշդիցով իմ

1. Այդ տեսակետից առաջնության պատիվը պատկանում է 18-րդ դարի տաղանդավոր և եզակի մանրանկարիչներ Կիրակոսին և մանավանդ Հովհաննեսին, որոնք իրենց սքանչելի մանրանկարներով խոր ազդեցություն են ունեցել իրենց աշակերտ՝ Ռոսլինի արվեստի վրա:

զպատմութիւնս ծերունի հաւրն իմոյ զհայրեանի գաւառէն Շատախ կոչեցելոյ»¹։ Բ) Լեւոն Բ¹ թագավորը եղել է նրա հովանավորն ու խնամածուն։ Նա գրում է՝ «Բ¹ ամաւ յառաջ տէրն իմ և խնամողն, և անընդմիջելի սիրով սիրողն և սնուցողն զիմս նուաստութիւն, քաղաքաշտ և աստուածասէր թագաւորն հայոց հանգեաւ ի Քրիստոս Չ և է (737+551=1288), յամսեանն փետրուարի 2 (6), յաւուր շաբաթու. գ) սուրն ձեռագիրը գրել և նվիրել է Տարոնի Ս. Կարապետի վանքին, որի միաբանները ի դիմաց այդ նվիրատւության, խոստացել են Թորոսի և նրա ծնողներին հոգու համար տարին մի օր պատարագ անել։ (ՎՄ¹ ուր զպատարագն ժամարաքն ինձ և իմ ձնողացն արասցեն»)։

Չունենք հավաստի տվյալներ նաև նկարչի ընտանեկան դրութեան և առհասարակ նրա կյանքի հիմնական էջերի մասին։ Միայն 13-րդ դարում գրված ձեռագրերի հիշատակարաններում կարողում ենք կենսագրական քննութիւն ունեցող որոշ ակնարկներ, որոնց վկայութիւններէք երևում է, որ նա վանական կրթութիւնն է ստանում և հոգևոր կոչման նվիրվում, իսկ իր դարաշրջանում փայ-

լում է իր նկարչական քաջադիւստադանով։ Իր վարպետ վրձինով էլ նա սիրվում է և հարգվում ժամանակի գեղարվեստասեր հասարակութեան կողմից։

Սակայն, մի հանգամանք ավելի արժեքավորում է նրա գեղարվեստական կերպարը։ Իր նուրբ արվեստով նա գրավում է ոչ միայն թագաժառանգ Լեւոնի համակրութեւնն, ու սերը, այլև ժամանակի Կոստանդին կաթողիկոսի և հայոց արքունիքի լայն հովանավորութեւնն է վայելում և դառնում է պալատի գլխավոր նկարիչը։ Երևույթներ, որոնք վկայում են նրա վրձինի վարպետութեան և հրմտութեան մասին։ Այդ հանգամանքը հաստատում է նաև Գարեգին Ա. Կաթողիկոսի հետևյալ ընդգծումը. «Հայտնի որպէս արքայական ընտանիքի նկարիչ, իսկ Արտավազդ արքայիսկոպոս Սյուրմեյանը գրում է. «...Ռոսլին թագաժառանգ Լեւոնի սիրական ու վստահելի պալատական նկարիչն էր»։

Մի հանգամանք անժխտելի է, որ Ռոսլինն իր վարպետ ու ձեակերպված վրձինով մեծապէս նպաստել է 13-րդ դարի գրչութեան և գլխավորապէս մանրանկարչութեան արվեստի զարգացմանն ու տարածմանը։

3. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Թորոս Ռոսլինի ապրած ժամանակի և նկարչական գործունեության մասին ավելի ցայտուն գաղափար տալու համար այստեղ սեղմ տողերով քննենք դարաշրջանի հայ մշակութային կյանքի պատկերը։

Ռոսլինն իր մանրանկարներով սերտորեն կապված է 13-րդ դարի երկրորդ կեսի կիլիկյան արվեստի վերածնութեան շրջանի հետ։ Դա սելջուկյան և մոնղոլական արշավանքների տիրապետութեան ծանր ու մռայլ շրջանն է։ Սակայն, հակառակ ստեղծված ծանր պայմաններին, հայ ժողովրդի ստեղծագործող ոգին կանգ չի առնում։ Հատկապէս կիլիկյան անկախ հայ իշխանութիւնը մեծապէս նպաստում է հայ ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքի զարգացմանը։

Դարաշրջանի ուշագրաւ երևույթներից մե-

կը դպրոցներն են, որոնցից 12—14-րդ դարերում Կիլիկիայում մեծ համբաւ ու հռչակ են վայելում Ակների, Սկեռայի, Սաի, Դրազարկի, Հոռմկայի և այլ դպրոցները, որոնք հայ գրականութեան, գիտութեան, արվեստի և հասարակական մտքի զարգացման կենտրոններ են հանդիսանում։

Հասարակական կյանքի նոր երևույթների հետեանքով հանդես են գալիս նաև գրական նոր դեմքեր, որոնք հայ գրականութեանը զարգացնում են ժողովրդին հասկանալի աշխարհիկ լեզվով։

Դա այն շրջանն է, երբ առանձին փայլ ու երանգ են ստանում հայ քնարերգութեանն ու առակախոսութեանը և, որ էականն է, ժաւաստեղծական գրականութեան և արձակ ստեղծագործութեանների մեջ հնչում են աշխարհիկ մտտիվները։ Դարաշրջանի տաղանդավոր քանաստեղծները — Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Հովհաննես Երզնկացի ոչ

¹ Միայն է, պետք է լինի Լեւոն Գ.

միայն աշխարհաբար լեզվով են գրում և հայ աշխարհիկ բանաստեղծություն հիմնադիրները հանդիսանում, այլև իրենց քնարի լարերի վրա երգում են քնությունը, գինին ու սերը, երգում են նաև հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական վիճակը։ Այս շրջանի ժողովրդական ստեղծագործության մեջ ուրույն տեղ են գրավում պանդխտության տաղերը և աշխատանքային երգերը։ Հատկապես ուշագրավ նվաճումներ է անում հայ առակախոսությունը, որի տաղանդավոր ներկայացուցիչները հանդիսանում են 13-րդ դարում Մխիթար Գոշը, հայ առաջին առակագիրը, ապա Վարդան Այգեկցին, որոնք իրենց առակներով սուր երգիծանքի են ենթարկել ժամանակի հասարակական արատները՝ անիրավ իշխանավորին, կաշառակեր պաշտոնեային, անհաղ վաշխառուին և այլն։ Այդ առակներն ուշագրավ են նաև այն տեսակետից, որ պատկերում են ժողովրդի իմաստությունը և ժողովրդական հրամեղավորումները։

13-րդ դարի սկզբից հայ ճարտարապետությունը ևս հարստանում է նոր և գեղեցիկ հուշարձաններով, որոնք իրենց ինքնատիպ արվեստով ճարտարապետական խոշոր արժեք են ներկայացնում։ Նույն շրջանում էլ հայ քանդակագործության արվեստը հասնում է իր դարգացման բարձր աստիճանին։

13-րդ դարի մի այլ նշանակալից երևույթը հայ պատմագրությունն է, որի պարծանքը հանդիսանում են Վարդանը, Կիրակոս Գանձակեցին և Մաղաթիա արեղան, որոնք իրենց շարադրած պատմագրությունները բողոքում են սելջուկների ու մոնղոլների ավերածությունների, բռնությունների և Հայաստանը տնտեսական անկման հասցնող քաղաքականության դեմ։ Այդ պատմագիրների երկերն այսօր խոշոր արժեք ունեն հայ ժողովրդի պատմության ռուսումնասիրության համար։

Կիլիկյան մշակույթի պատմությունն արձանագրելիս նշենք և այն, որ 13-րդ դարի կեսերին հայ իրավաբանական գրականությունն ուղղում է Սմբատ Գռնգատապի ՌԳԱՍԱՍՏԱՆԱԳԻՐԺՐԸ, որ գործածվում է միայն Կիլիկիայում։

13-րդ դարաշրջանի հայկական արվեստի պատմության մեջ արժանի տեղն ունի նաև հայ երաժշտությունը, որին առանձին փայլուն երանդ են տալիս նույն դարի վաստակավոր երաժշտագետները, որոնցից հայտնի են Հովսեփ, Գրիգոր, Սամվել վարդապետ, Վարդան վարդապետ Արևելցի, Թորոս, Հովասափ, Ստեփանոս, Հովհաննես Երզնկացի, Մանվել, որոնք իրենց նորանոր ստեղծագործություններով հարստացնում են հայ երաժշտական մշակույթի գանձարանը։

13-րդ դարում, հայկական պատմագրության, պրականության և գեղարվեստի դարացման հետ, նոր փայլ է ստանում նաև նկարչական, առանձնապես մանրանկարչական արվեստը, սր գլխավորությամբ Կիլիկիայում իր վերելքի շրջանն է ապրում և հանդիսանում ոչ միայն հայ մշակույթի վերածնունդի արտահայտություններից մեկը, այլև հայ ժողովրդին նվիրում է նկարչական քանդակ տաղանդով օժտված առաջնակարգ մանրանկարիչներ, որոնց շարքում պատվավոր տեղ են զբաղեցնում Հովհաննես և Կիրակոս արվեստագետները։

Այս դարաշրջանի հայ արվեստի պատկերը Գրաբգին արքեպիսկոպոս Հովսեփյանը գծել է լայպես. «13-րդ դարի երկրորդ քառորդից հետո գրչության և մանրանկարչության արվեստները իրենց բարձրագույն զարգացման շրջանն են ապրում։ Ոչ միայն Հոռմկլայի դպրոցը կաթողիկոսի (Կոստանդին Ա.) անմիջական հովանավորության տակ, տալիս է լուր գեղեցկագույն դործերը, այլև Դրադարկի, նորա հետ կապված Գոնեբի և Ակնեբի, դպրոցները, ոչ միայն կաթողիկոսը, այլև Հեթում Ա., և նորա եղբայրները՝ Սմբատ Գունդստապլ, և մանավանդ Հովհաննես արքայեղբայր, Վասակ Ջանճո տեր, Լևոն Գ. և Թագուհին Կեռան, Հեթում Բ., հանդիսանում են արվեստի հովանավորներ և մեկենասներ։ Նրանց օրով մեր գեղագրական և մանրանկարչական արվեստներն իրենց ոսկեդարն են ապրում» («Հայաստանյայց Եկեղեցի», 1942 թ., № 1, էջ 92—93)։

Նույն պատմաշրջանի երկրորդ կեսի հայ մանրանկարչական արվեստի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է Թորոս Ռոսալինը։

4. ՀՈՌՄԱԿԼԱՅԻ ԱՐՎԵՍՏԻ ԳՊՈՐՑԸ ԵՎ ԳՐԻՋՆԵՐԸ

Թորոս Ռոսլինի՝ կրիկյան մանրանկարչության վաստակավոր արվեստագետի; կենսագրության պատմության համար բնորոշ է այն, որ նրա անունը սերտորեն կապված է կրիկիայում հիմնված մշակութային մի մեծ կենտրոնի հետ: Դա Հոռմկլայի արվեստի դպրոցն է, որի պարծանքն է Ռոսլինը:

12-րդ և 13-րդ դարերում Հոռմկլան հռչակվում է ոչ միայն որպես գրչության, գեղագրության ու մանրանկարչության մի լավագույն դպրոց, այլև փայլում է յուրահատուկ ոճով և ինքնատիպ արվեստով: Այնտեղ հանդես են գալիս մի շարք տաղանդավոր գրիչներ, որոնք ընդգրկնակում են մեր իմաստուն ու գիտնական նախնիքներից ավանդ մնացած գրական արտադրությունները և քաղցած թիվ ձեռագրերով հարստացնում հայ մատենագրության և գրչական արվեստի դանձարանը: Այդ դպրոցում փայլում են նաև մի խումբ տաղանդավոր մանրանկարիչներ, ծաղկողներ, գեղագիրներ — Կիրակոս, Հովհաննես, Գրիգոր և ուրիշներ — որոնք իրենց վրձինած գեղարվեստական նկարներով զարկ են տալիս ժամանակի նկարչական մշակույթի զարգացմանը: Ահա թե ինչու այդ վաստակավոր արվեստագետների անուններն այսօր սերտ կերպով կապված են մանրանկարչական և առհասարակ ձեռագրական մշակույթի պատմության հետ:

Այստեղ սեղմ գծերով նկարագրենք Հոռմկլայի նշանավոր դպրոցի գրչական արվեստի մեզ ծանոթ ձեռագրերը:

1166 թվականին, «յամի վեց հարիւր հնգետասաներորդի», Հոռմկլայում, մատենագիր և երաժիշտ Գրիգոր Պահլավունու հայրապետության ժամանակ, մագաղաթի վրա, միջին երկաթագրով գրվում է ու նկարազարդվում մի ավետարան: Դա Հոռմկլայի դպրոցի ամենահին ձեռագրերից մեկն է, ուր վրձինված են գրչագիրն ստացող Առաքել եպիսկոպոսի և Հիսուսի նկարները: Սակայն, մանրանկարչական արվեստի տեսակետից ավելի արժեք են ներկայացնում ձեռագրի խորանագարդերը, գեղագրերը, զարդերը և լուսանցազարդերը: Գրչագիրը սեփականությունն է Հենի-նականի Օրթաքիլիսայի:

1174 թվականին տաղանդավոր գրիչ և նկարիչ Գրիգորը, մագաղաթի վրա, մեծ երկաթագրով, ներսես Շնորհալու համար, դարձյալ Հոռմկլայում, գրում է մի ավետարան, որ իր ընտիր գրչությամբ և սքանչելի մանրանկարներով Հոռմկլայի գեղարվեստական դպրոցին պատիվ է բերում: Դա Եվդոկիայի (Թոքատի) պատմական ձեռագիր ավետարանն է, որի հիշատակարանում ընդգծված են. «...Այս պատուական աստուածավայելույ մատենն, որ իմով ձեռամբ գծեալ Գրիգորի մեղապարտի... ի թուականիս ՈրԳ (623 + 551 = 1174)», Ձեռագիրը գրելիս Գրիգոր գրչին օգնել են Կոստանդին և Վարդան գրիչները:

1201 թվականին Բասիլ սարկավազը, Հոռմկլայում, բուրգորով, գրում է մի Աստվածաշունչ, որի հիշատակարանից առաջ բերենք հետևյալ տողերը. «Յամի Ո-որդի յիսնե ռորդի թուարերութիան հայկազ[ե]սն տու մարիս գրեցաւ աստուածախաւս և հոգեւից իմաստութիւն՝ առակախաւս երգ մեծի ի մաստնոյ և արքայի Սողոմոնի, ձեռամբ իմով Բասիլ սարկավազի... Գրեցաւ սա յա թոռս սուրբ՝ ի Կլայս Հոռվմէական, Ձեռագիրը Վենետիկի Միսիթարյան միաբանության սեփականությունն է:

1204 թվականին Գրիգոր դպիրը, Հոռմկլայում, գրում է «Մեկնութիւն Դուկասու Աւետարանի» ձեռագիրը, որ այժմ Երուսաղեմի Արքեպիսկոպոսի Հայրապետության վանքի սեփականությունն է: Ուշագրավ են հիշատակարանի հետևյալ տողերը. «Յամի վեց հարիւրորդի յիսներորդի երրորդի թուարերութեանս հայոց... ի թաղաւորութեան քրիստոսապսակ և քարեյաղթ թագաւորին հայոց Հեոնի... ի շար և ի դառն ժամանակի... աւարտեցի զսա յամսեանս նոյնմբերի ի ժԳ, յաճառիկ և յանմատոյց դղեակա Հոռմկլա՝ յաթոռս հայրապետական, ժամանակի մոայլ անցքերի մասին ձեռագրի հիշատակարանում կարդում ենք նաև այսպիսի տեղեկություններ. «...Իսկ անապոնն ազգն Հագարու, նեղեն զազգս քրիստոնէից անիրաւ հարկապահանջութեամբ մինչև անյոյս լինէաք ի փրկութենէս:

(Շարունակելի)



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

1955 թվականի հունվարի 1-ին, Մայր Տաճարում, ամանորի առթիվ մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Ներկա էր հավատացյալների հոծ բազմություն։ Պատարագին էր գերաշնորհ Տ. Վաղգեն եպիսկոպոս Պալճյանը։ Սուրբ պատարագի վերջում սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Պատարագից հետո ողջ միաբանությունը, գլխավորությամբ Տ. Սահակ եպիսկոպոսի, այցելեց գերապատիվ Տ. Վահան արքեպիսկոպոսի բնակարանը՝ շնորհավորելու սրբազան հոր նոր տարին։ Հյուրասեղանի շուրջը եղան նոր տարվա բարեմաղթություններ աշխարհի խաղաղության, Մայր Աթոռի հարստեություն և անասանության մասին և այլն։



Հունվարի 2-ին, Երևանի Ս. Զորավար եկեղեցում, մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագին էր գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, որը և հավուր պատշաճի քարոզ խոսեց։ Սուրբ պատարագից հետո գերաշնորհ սրբազան հայրը օծեց եկեղեցու պատկերները։



Հունվարի 3-ին, Լենինական մեկնեց գերաշնորհ Տ. Վաղգեն եպիսկոպոս Պալճյանը, Ս. Մննդյան և Զորոհնյաց տոներին այնտեղ գտնվելու և տեղի տեսարժան վայրերի հիմնադրանքներ համար։ Ս. Մննդյան և Զորոհնյաց տոնակատարություններից հետո գերաշնորհ սրբազանը վերադարձավ Երևան։



Հունվարի 5-ին, Մայր Տաճարում տեղի ունեցավ Ս. Մննդյան Ժրագալույցի երեկոյան հանդիսավոր սուրբ պատարագ, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ։

Պատարագին էր բարձրապատիվ Տ. Գեորգ Ժալրադուն վարդապետ Վաթյանը։

Խորհրդավոր բացվում է վարագույրը, լուսվում է սարկավազի ծայնը՝ «Օրհնեա, Տէր», երգում է երգեցիկ քառանասյն խումբը։ Սուրբ պատարագը արձամրվում է, որից հետո ակրավում է նախատոնակը, երգվում է Մննդյան շարականը՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ...»։



Հունվարի 6-ին, Ս. Մննդյան և Մկրտություն օրը տոնվեց ամենայն հանդիսավորությամբ։ Տաճարը լիքն էր հավատացյալների խուռն բազմությամբ։ Պատարագին էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, որն իր հավուր պատշաճի քարոզում վեր հանեց Քրիստոսի մարդեղության համամարդկային նշանակությունը։

Սուրբ պատարագից հետո տեղի ունեցան Զորոհնյաց հանդեսի գեղեցիկ ու խորհրդավոր արարողությունները, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ։

Հանգեսի վերջանալուց հետո, բազմությունը հորձանք է տալիս։ Հավատացյալ ժողովուրդը, բաժակներով և սրվակներով, օրհնյալ ջրի իր բաժինը փոխադրում է իր բնակարանը՝ բացականչելով բաժանելու և նրանց սրտերում քանդակելու այն, ինչ հանդիսանում է օրվա զաղափարն ու էությունը։

Շնորհավուր Ս. Մնուկյան և Մկրտություն։



Հունվարի 5-ին և 6-ին, Ժրագալույցի և Ս. Մննդյան տոնակատարությունների առթիվ, Հոգևոր Ճեմարանի ուսանողներից մի քանիսը մեկնեցին Օշական։ Տոներից անմիջապես հետո նրանք վերադարձան Մայր Աթոռ։



Հունվարի 7-ին, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ՝ մեռելոց հիշատակին, Օրվա պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Կոստանդին վարդապետը, Սուրբ պատարագից հետո տեղի ունեցան հոգեհանգստյան արարողություններ՝ վասն համօրէն ննջեցելոց»:



Հունվարի 9-ին, գերաշնորհ Տ. Վազգեն սրբազանը սուրբ պատարագ մատուցեց Ս. Բեանի Ս. Սարգիս, իսկ հունվարի 16-ին՝ Ս. Հովհաննես եկեղեցիներում:



Ս. Էջմիածնի Հոգևոր Ժեմարանի ուսանողները, ամանորի և Ս. Մննդյան արձակուրդների կապակցությամբ, տոներից հետո մեկնեցին իրենց հարազատների մոտ՝ Հունվարի 10-ին, արձակուրդներից հետո, վերականգնեցին Ժեմարանի կանոնավոր պարապմունքները:



Հունվարի 13-ին, Տիրոջ Անվանակոչության տոնի օրը, և հունվարի 16-ին, Կիրակի օրը, մեծ շուքով և հանդիսավորությամբ տոնվեցին Մայր Աթոռում, նրվու առիթներով

ևս պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Կոստան վարդապետ Տեր-Ստեփանյանը:



Հունվարի 16-ին, տեղի ունեցավ Մայր Աթոռի կրտսեր միաբան, շնորհմակ Պերճ սարկավազ Պետիկյանի ձեռնադրությունը, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ձեռքով: Զեռնադրությունը, ընծայացուի ցանկության համաձայն, կատարվեց Օշականում, Պերճ սարկավազը վերանվանվեց Մուշեղ, նույն օրը երեկոյան, Մայր Տաճարում, կատարվեց նորոնծայի վեղարի տվությունը:



Հունվարի 17-ին, երկուշաբթի օրը, Վրաստանի մայրաքաղաք թբիլիսի մեկնեց գերաշնորհ, Տ. Վազգեն եպիսկոպոս Պալմյանը՝ Ս. Մննդյան և Զրօրհայաց տոնակատարություններին (հիմ տոմարով) այնտեղ գտնվելու համար:



Հունվար ամսվա ընթացքում, Սովետական Միության այլևայլ քաղաքներից, էքսկուրսանտների բազմաթիվ խմբեր են այցելել Ս. Էջմիածին՝ ծանոթանալու Մայր Աթոռին, տեանելու և ուսումնասիրելու նրա դարավոր հնությունները:





ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԵՍՍ ՎԵՐԴԱՊԵՏ ՏՆԻՐ-ՍՏԵՓԵՆՅԱՆ

1954 թվականի դեկտեմբերի 11-ին, շաբաթ օր, Ս. էջմիածնի Մայր Տաճարում, բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը վարդապետական շորս աստիճաններ շնորհեց էջմիածնի միաբանության անդամ Կոմիտաս արքեպիսկոպոսին։

Կոմիտաս վարդապետը ծնվել է 1925 թվականին Սիրիայում, Նրա ծնողները բնիկ Զորք-Մարդպանցի են (Գիլիկիա)։ Հայր Կոմիտասի ավագանի անունն է Ստեփան։

Նա իր մանկությունն անց է կացրել Այեքսանդրեպոլիսի Սանդագում, որի Թյուրքիայի կցման (1939 թ.) հետևանքով, գաղթել է Բեյրութ (Լիբանան)։ Նախնական կրթությունն ստացել է Այեքսանդրեպոլիսի ազգային նուպարյան և Բեյրութի Արզարյան դպրոցներում (1934—1940 թ. թ.)։

1940—1941 ուսումնական տարում ընդունվել է Նորուսագեմի ժառանգավորաց վարժարանը, որի միջնակարգ դասընթացն ավարտել է 1945 թվականին և սարկավագ ձեռ-



նադրվելով, մի տարի հետևել է Նորուսագեմի Ընծայարանին։

1947 թվականին ներգաղթել է Հայաստան և մի տարի ավորել նրանից Նրաժըշակական տիկնիկում։

1948 թվականի ոգոստոսին, հրջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետը, ընդառաջելով դիմումին, իր սարկավագի կոչումով ընդունել է նրան որպես Ս. էջմիածնի միաբան։

Ավելի քան հինգ տարի որպես ավագ սարկավագ սպասարկելուց հետո Մայր Տաճարում, 1951 թվականի մարտ ամսի 18-ին արքեպիսկոպոսին

նադրվել բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի կողմից, որ նկատի ունենալով նորընծայի կիրթ և ցաղցրալուրձայնը, վերանվանել է նրան Կոմիտաս։

Հայր Կոմիտասը սպասարկել է Թբիլիսիի և Բաքվի հալոց եկեղեցիներում ու ներկայումս պաշտոնավարում է Ս. էջմիածնի հոգևոր ճեմարանում՝ որպես Կարգ աստվածպաշտության, ժամակարգության և եկեղեցական երգիցողության դասաւորում։





ՀՈԳԵԾՆՈՐԷ ՄՈՒՇԵՂ ԱՐԵՂԱՆ ՊԵՏԻԿՅԱՆ

Մուշեղ արեղա Պետիկյանը (Պերճ սարկավազ Պետիկյան) ծնվել է 1927 թվականի սեպտեմբեր ամսի 21-ին, Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում:

Պերճը իր միջնակարգ տառվոր ստանում է Կահիրեում, Գալուստյանի անվան վարժարանում, որն ավարտում է 1947 թվականին:

1947—1948 թվականներին անկան տարում Պերճը թվարանության և արաբերենի դասառու է նշանակվում իր ավարտած վարժարանում:

Հայրենիքի կանչը, սակայն, արձագանքում է նաև Պերճի հոգում և նա հայրենադարձվում է 1948 թվականին:

Զգալով իր մեջ հոգևորական դառնալու բոլոր ցանկությունները, Պերճը դիմում է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերատեսչության և 1949 թվականի սեպտեմբերին ընդունվում որպես Ա. լսարանի ուսանող:

1952 թվականին Պերճը ավարտում է Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժնի երեք տարիները և դիմում ներկայացնում Ամենայն Հայոց երջանկահիշատակ Հայրապետ Ս. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին, հայտնելով, թե ինքը կարող էր ժողովրդին լավագույնս ծառայել ընտրելով հոգևոր ասպարեզը, և խնդրում իրեն ձեռնադրել սարկավազ:



Լուսահոգի Վեհափառն ընդառաջում է Պերճին և նա, 1952 թվականի նոյեմբերի 2-ին, գերաշնորհ Ս. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի ձեռքով, ձեռնադրվում է սարկավազ և նվիրվում Մայր Աթոռի սպասարկմանը:

1954 թվականին Պերճ սարկավազը նշանակվում է Հոգևոր Ճեմարանի վերականգնում և պատմության դասատու:

Գիտակից իր կոչման և ծառայելու պատրաստակամությամբ համակված, Պերճ սարկավազը, իր ընտրած ասպարեզի ավելի պատասխանատու յաստիճաններին

թևակոխելու համարձակությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի հավանությամբ, 1955 թվականի հունվարի 16-ին, Օշականում, մեծ վարդապետ և ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցի հանգստարանի վրա կառուցված եկեղեցում, Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ձեռքով, ձեռնադրվում է արեղա՝ վերանվանվելով Մուշեղ:

Հանձին հոգեշնորհ Մուշեղ արեղա Պետիկյանի, Մայր Աթոռի միաբանությունը, իր երիտասարդ անդամների շարքում ընդունում է նա մի յուրջ, աշխատասեր, իր թարմ ուժերը Ազգին ու Եկեղեցուն նվիրաբերող խոստումնալից հոգևորականի:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ.— Անցյալ 1954 թվականին խոշոր աշխատանքներ կատարվեցին Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի շինարարության և բարեկարգման ուղղությամբ: Կառուցվեցին 50-ից ավելի զենքերի բազմահարկ շենքեր, որոնցից 30-ը պետական բնակելի տներ, չորս 40.000 քառակուսի մետր բնակելի տարածությամբ: Բացի այդ, կառուցվեցին ավելի քան 300 անհատական բնակելի տներ: Քաղաքը զենքերից ազատացնող հատարական և վարչական շենքերով, դպրոցներով, լայն ծավալ ընդունեց արդյունաբերական նոր ձեռնարկությունների շինարարությունը: Բացվեցին նոր փողոցներ, ընդարձակվեց չրմուղի ցանցը: Ավարտվեց կոյուղու զբաղմունքի գծի կառուցումը, որով կուղղու ողջ ցանցը միացվեց այդ գծին: Մի քանի տասնյակ հեկտարով ընդարձակվեց քաղաքը երիզող նորատնակ անտառների տարածությունը: Քաղաքի նոր բացված փողոցներում ասֆալտապատվեց ավելի քան 150.000 քառակուսի մետր տարածություն:

Ավելի մեծ աշխատանքներ են նախատեսված 1955 թվականի համար: Կառուցվելու են չորս 50 քառակուսի բնակելի շենքեր, չհաշված անհատական բնակելի տները: Ավարտվելու և սպասարկման են հանձնվելու Երևանի և Երվանդանյանի նոր կայարանի, Աշխատանքի պալատի, Պոլիտեխնիկական ինստիտուտի, Մատենադարանի հուլանալ շենքերը: Կառուցվելու են 4 նոր դպրոցներ: Արագացվելու է Պետական համալսարանի և Բժշկական ինստիտուտի շենքի նոր հատվածի շինարարությունը: Մեկուկուսի ուսումնական կառուցվելու է նոր խոշոր հիվանդանոց: Ավարտվելու է Հրազդանի վրա կառուցվող կամուրջի շինարարությունը, որով հնարավորություն կստեղծվի Մանուկյանի շրջանը հապաքի քաղաքի հետ տրամալայի միջոցով: Կապվելու կառուցվելու է ինչպես նաև անդի արդյունաբերության մի քանի նոր ձեռնարկությունների կառուցումը: Նախատեսված է ամբողջությամբ ավարտել քաղաքի երկու նոր զբաղմունքի փողոցների՝ Մարտի և Կոմիտասի անվան փողոցների շինարարությունը: Եւ խորհրդարան:

Եւրոպական եւ կետստի ափերի ամրացման աշխատանքները, ընդարձակվելու են կոյուղին, չրմուղի և էլեկտրական ցանցը:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ.— Նախնական տվյալներով այս տարի լենինականի քաղաքային Սովետի գծով կատարվելու է ավելի քան 30.000.000 ռուբլու շինարարություն: Այդ գումարը զգալի չափով ավելի է անցյալ 1954 թվականին ծախսված գումարից: Պրա մեջ շեն մտնում ղեկավարական և մեքենական ենթակառուցվածքի ձեռնարկությունները: Գծով նախատեսվող ներդրումները:

Այս տարի սկսվելու է կահույքի և մահակալի գործարանների կառուցումը: Կառուցվելու են մի շարք խոշոր բնակելի և վարչական շենքեր, բարեկարգվելու են ծախսամասային փողոցները, քաղաքի շրջակայքում, ավելի քան 80 հեկտար տարածությամբ վրա տեղակայվելու են ծառեր: Մահակահորման են հանձնվելու չորս 500 անհատական բնակելի տներ:

ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ.— Սպիտակ ավանում շահագործման հանձնվեց կիտրոնաթթվի նորակառույց գործարանը, կիտրոնաթթվի գործառնում է հրուշակեղենի տրտագրության մեջ: Գործարանը կառուցվել է ՍՍՄՖ Պարենային ապրանքների արդյունաբերության մեքենատրությունը: Նորակառույց ձեռնարկության համար հումք է ծախսվելու շաքարը, որը մատակարարելու է նույն ավանում գտնվող շաքարի գործարանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՅՆՈՒԹՅՆԵՐ.— Երևանի ժամացույցի գործարանը տարեցտարի ընդարձակվում է, թախչակվում է թողարկվող արտագրանքի որակը: Եթե 1950 թվականին գործարանը թողարկել է 183.000 հատ սեղանի ժամացույց, ապա ընթացիկ 1955 թվականին թողարկվելու է 1.200.000 հատ: Այս տարի կապվելու է գործարանի նոր շենքի կառուցումը, որի ավարտումից հետո արտագրանքի թողարկման ծավալը կկրկնապատկվելու: Առաջիկայում աշտնող արտագրվելու են հատուկ հատուցներ ժամացույցի արդյունաբերության ձեռնարկությունների համար:

ՆՈՐ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՐՈՎԱԿԱՆՈՒՄ.— Բուսն թափով աճում է Կերովակաճը, զարգանում թաղացի արդյունաբերությունը, Ընթացիկ տարում այստեղ շահագործման է հանձնվելու ավտոմոբիլների և որոշման գործարանը, Եռտուվ սկսվելու է երկաթ-բետոնե կոնստրուկցիաների (հատվածների) գործարանի կառուցումը, Այդ կոնստրուկցիաները գործառնվելու են շենքերի կառուցման մեջ:

Նախատեսված է այս տարի սկսել կարի, կահույքի և գորգագործական խոշոր գործարանների կառուցումը:

ԵՐԾՎԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ.— Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում ավարտվեց ձմեռային սեսիան, որին մասնակցեցին մոտ 4.000 հեռակայող ուսանողներ: Նրանք աշխատում են ինչպես Երևանում, սոյնպես էլ ուսնապոլիսի տարբեր շրջաններում և բարձրագույն կրթություն են ստանում առանց իրենց հիմնական զբաղմունքից կտրվելու: Հեռակայողները ասորիկան միայն 2 անգամ որոշ ժամանակով հավաքվում են ինստիտուտում՝ սեսիոն պարապմունքների կամ ցերեկ-թյունների համար:

Հոնվարդի ինստիտուտում տեղի ունեցած պետական քննություններին մասնակցեցին շուրջ 400 հոգի: Ինստիտուտին հեռակայող մոտ 800 մանկավարժներ այս տարի կատանաև բարձրագույն կրթության վկայական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱԿԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ.— Երևանի կուլտուրական հաստատություններից մեկն է հայեկապետում Հայաստանի երկրաբանական թանգարանը: Այստեղ կարելի է տեսնել Հայաստանի լեռնահանքային հարստությունների ամենատարբեր նմուշներ, Դրանց թվում կան նաև երկրաբանական հետախուզությունների ժամանակ հայտնաբերված նախնադարյան կենդանիների մնացորդները:

Վերջերս թանգարան բերվեցին նախապատմական փղի ոսկորներ, որոնց գտնվել են Էջմիածնի շրջակայքում, Մասնագետների կարծիքով, այդ հայտնաբերումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Դա պատահական չէ, քանի որ նման ոսկորների գտնվել են նաև Լենինականի շրջակայքում մի քանի տարի առաջ: Այդ քոչորը վաղուց են, որ հնագույն ժամանակներում, շուրջ 100.000 տարի մեզանից առաջ, Հայաստանում ապրել են ժամանակակից փղերի նախնիները:

ՆՈՐ ԳՐԹԵՐ 1955 ԹՎԱԿԱՆԻՆ.— Հայաստանի պետական հրատարակչությունը այս տարի ղգախորեն ընդարձակելու է իր գործունեությունը: Բացի դիտական, քաղաքական, մամուլափոխական գրականությունից, հրատարակվելու են ինչպես կյանքի, այնպես էլ ժամանակակից հայ, ռուս, ավստրալիական հեղինակների մի շարք գեղարվեստական գործերը:

Հայ հեղինակներից լույս կտեսնեն Հ. Պարոնյանի, Նար-Գևորգի, Վ. Վարդանյանի, Ա. Բազմալյանի, Վ. Տեր-Յանի, Գ. Գեմբրեյանի և ուրիշների ընտիր երկերը: Կապիկ հայ մեծանուն վիպասան Բաֆֆու երկերի հրատարակությունը 10 հատորով:

Ժամանակակից հայ գրողներից և բանաստեղծներից կհրատարակվեն Մ. Արագու, Ն. Զարյանի, Հ. Սիրոսի,

Մ. Արմենի, Գ. Էմինի, Սարգսի, Հ. Շիրազի, Մ. Թորգոմյանի, Հ. Սահյանի, Ա. Սահյանի և մյուսների ընտիր երկերը: Արդեն լույս են տեսել Վ. Այազանի, Վ. Նորենցի, Գ. Մահարու բանաստեղծությունների ժողովածուները:

Ընթացիկ տարում 30.000 արհեստիկ լույս կտեսնեն ինչպես Զարենցի երկերի մի շարք ժողովածու, որի մեջ տեղ է տրվելու նրա աղծակ գործերին:

Հրատարակվելու են մեծ քանակությամբ գեղարվեստական գրքեր մանուկների համար, ինչպես նաև շուրջ 100 անուն դասագրքեր հանրակրթական դպրոցների սովորողների համար՝ մոտ 2.000.000 արհեստիկ տպագրականով:

ՀԵՏԱԹՐՔԻՐ ԹՎԵՐ.— Անցյալ 1954 թվականին Հայաստանի այգեգործական շրջանների կոնկրետի անտիստիությունները ստացան 60.000 տոննա խաղողի թերթ: Դա 20.000 տոննայով ավելի էր, քան նախորդ 1953 թվականին, Ամբողջ բերքի մեկ ցատորգը ստացան Արտաշատի շրջանի տնտեսությունները: Պետությունը հանձնված խաղողի դիմաց հիշյալ շրջանի տնտեսությունները ստացան մոտ 70.000.000 դրամի, որը կրկնակի անգամ ավելի էր 1953 թվականին ստացած եկամուտից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ.— Գյուղատնտեսական մարմինները բացառիկ ուշադրություն են նվիրում Հայաստանի անտառների պահպանմանը և ընդարձակմանը: Անտառային տարածությունները տարեցտարի ընդարձակվում են: Անցյալ տարի ռեսպուբլիկայի տարբեր վայրերում 3.300 հեկտար տարածություն վրա հիմնվեցին նոր անտառներ՝ տնկումների և ծառասերմերի ցանցի միջոցով: Վերջին հինգ տարում նոր հիմնված անտառների տարածությունը կազմում է 15.000 հեկտար:

Անտառներ են հիմնված արկախի շրջաններում, որտեղ մինչ այդ նման ձեռնարկությունը համարվում էր անիրագործելի: Այդպիսի շրջանների թվին են պատկանում Կասաղյի, Հոնտեմբերյանի, Նոր Բայազետի, Մարտունու, Բասարգծաշարի շրջանները: Երկարամյա փորձերի ու դիտումների հիման վրա ընտրված են ծառերի ու թփերի արկախի տեսակներ, որոնց կարողանում են դիմանալ Հայաստանի ցամաքային խիստ կլիմային:

Ամեն տարի ռեսպուբլիկայում անտառառնկման աշխատանքների վրա պետությունը ծախսում է 10—12.000.000 դրամի:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿՎԱՐՏԵՏԻ 30-ԱՄՅԱԿԸ.— Երևանի երաժշտական հաստատականությունը սույն հոնվարի վերջերին Նշեց Կոմիտասի անվան պետական կվարտետի 30-ամյակը:

Երաժշտական այդ կոնկրետի գաղմկերպվել է 1925 թվականին Մոսկվայում, Մոսկվայի կոնսերվատորիայի այն ժամանակվա ուսանող, այժմ Հայաստանի ժողովրդական արտիստ, ջութակահար Ավետ Գաբրիելյանի կողմից: 30 տարվա գոյության ընթացքում կվարտետը, անդադար կատարելագործելով իր վարպետությունը, ձեռք է բերել մեծ համբավ, դարձել Մովսի-

տական Միտքայան մեջ ճանաչված, լայն ժողովրդական-հոթյուն վայելող լավագույն երաժշտական կոլեկտիվներից մեկը։ Նրա ռեպերտուարի մեջ մտնում են եվրոպական, ռուս և հայ երաժշտականների լավագույն գործերը, որոնց թվում խոշոր տեղ են գրավում անմահ Կոմիտասի գործերը։

Վերջին տարիներին կվարտետը համերգներով հանդես է եկել Զեֆուսովա կայում, խոշորում և Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում՝ ամենուրեք արժանանալով բացառիկ հաջողության։

Ներկայումս կվարտետի կազմում են՝ Նրա հիմնադիրը և անփոխարինելի ղեկավարը, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Ավետ Գաբրիելյանը (առաջին ջութակ), ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Մերգի Ասլամադյանը (թավջութակ), Ռաֆայել Դավթյանը (2-րդ ջութակ) և Հենրիխ Թալալյանը (ալտ)։

Հորեյանական հանդեսին ներկա էր մեծ թվով հասարակություն։ Կվարտետին ողջունեցին Երևանի երաժշտական և կուլտուրական հաստատությունների ներկայացուցիչները։ Ստացվել էին բազմաթիվ հեռագրեր Սփյուռնական Միության տարբեր վայրերից։ Հանդեսից հետո կայացավ համերգ կվարտետի կատարմամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՄՈՆԵՐ— Հայաստանում արտադրվող մրգեղենին, բանջարեղենին, ինչպես նաև մսեղենի և ձկնեղենի պահածոները և մուստրաները իրենց համեղությամբ ու որակով հռչակված են ոչ միայն ամբողջ ռեսպուբլիկայում, այլև նրա օտարերկրից շատ հեռու։ Պահածոների պորթաբաններ կան Երևանում, ինքնականում, Հոկտեմբերյանում, Ալյուրում, Ղափանում, Մեղրիում և Մարտունիում։ Հիշյալ գործարաններն անցյալ 1954 թվականին թողարկեցին մոտ 11.000.000 տոփ ավելի արտադրանք, քան նախորդ 1953 թվականին։ Արտադրվել են 80 տարբեր տեսակի պահածոներ։

Վերոհիշյալ գործարանները ներկայումս պատրաստվում են ընթացիկ տարվա արտադրական սեզոնին։ Այս տարի նրանք թողարկելու են զգույն չափով ավելի արտադրանք, քան անցյալ տարին։ Այդ նպատակով մի քանի գործարաններ հազնեցվում են նոր մեքենաներով։

ԱԶԳԱՆԱԿԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ— Երթևեկության զանազան միջոցներից քաջի, Երևանի ընկերությունը լայնորեն օգտվում է նաև տաքսի ավտոմեքենաներից։ Դրանց թիվը մայրաքաղաքում այժմ 200-ից ավելի է։ Դրանք բոլորն էլ սովորական «Պա-

րեդա» ավտոմեքենաներ են։ 1954 թվականին տաքսի մեքենաները փոխադրել են մի քանի միլիոն ուղևորների։

ՍԱՌՑԱԿԱՆ ԴԱՄԱՆՈՒՄ ԴԱՓԱՆՈՒՄ— Ղափանում կառուցվում է նոր սառցապահանոց։ Սպանդանոցը որակյա կարող է մշակել 20 տոննա միս, իսկ անոցաբանը մի անգամից կարող է ընդունել մինչև 500 տոննա մթերք։ Նոր ձեռնարկությունը կհաղեցվի կուտարեյագործված մեքենաներով և այլ հարմարանքներով։

ՌԺԵԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՆՐԻ ԺԱՆՑԻ ԸՆԴԱՐՁԱԿԱՆԻՄ— Ամեն տարի կատարվող խոշոր միջոցներ է ձախառնել ընկերության առողջապահության դործի բարելավման համար։ Այսպես, օրինակ, անցյալ տարի միայն Կիրովական քաղաքում բացվել են առողջապահական 6 նոր հիմնարկներ, որոնց թվում՝ մանկական հիվանդանոց 35 մահճակալով, մի բուժարան քաղաքի արվարձաններից մեկում և առողջապահական և կայանների քաղաքի տարբեր գործարաններում։ Բացվեցին նաև 2 նոր ռենդգենյան կաբինետներ։

Քաղաքի ընկերության առողջապահության գործի վրա 1954 թվականին ձախավել է 2.000.000 ռուբլի ավելի գումար, քան նախորդ 1953 թվականին։ Փաղաքի հիվանդանոցներում մահճակալների թիվը մեկ տարվա ընթացքում ավելացել է 15 տոկոսով, իսկ բժշկական աշխատողների թիվը ավելացել է 70 մարդով։

ԽԱՅԱՏԱՆԻ ԱՐՈՎՅԱՆ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ— Հայ հոր գրականության հիմնադիր, մեծանուն հայատուր Արավյանի տուն-թանգարանը, որը գտնվում է Փանսրեն գյուղում, ամեն մի հայի համար հարազատ վայր է։ Անցյալ 1954 թվականին տուն-թանգարանն այցելել է 30.000 մարդ։ Ինչպես Հայաստանից, այնպես էլ Արևելյան Միության տարբեր վայրերից, Այստեղ կան բազմաթիվ փաստաթղթեր, ձեռագրեր, նամակներ, նկարներ, գրքեր և այլ նյութեր, որոնց նվիրված են մեծանուն գրողի կյանքի և գործունեության տարբեր շրջաններին։

Այս տարի լրանում է գրողի ծննդյան 150-ամյակը։ Այդ կապակցությամբ թանգարանի գիտնական ձեռնամուխ է եղել քանի և շրջակայքի բարեկարգման և կանաչապատման։ Բակում կառուցվում է աղբյուր-հուշարձան։ Թանգարանը համարվելու է նոր նյութերով։





Ս Փ Յ ՈՒ Ռ Ք ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՑԱՏՄԱՆ 34-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ*

ՍՈՒՆԵՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ

Նոյեմբերի սկզբից կազմվել է հայրենական տոնակատարության հատուկ հանձնախումբ, նախագահ՝ Թ. Շիրակյան, քարտուղար՝ Արամ Տեյիրաճյան:

Նոյեմբերի 26-ի երեկոյան և 27-ի առավոյան՝ մայրաքաղաքի ամենամեծ ու կարևոր օրաթերթերը՝ «Դեմոկրացիա», «Հաղթանակ», «Էջ Մուսղոս», «Հա Նասիոն», «Էջ Լիդեր», «Էջ Լաբորիստա» և այլն տեղ են տվել հայոց ազգային տոնի տարեգրծին: Ռադիոկայաններ—Բեկդրանո, Արխենտինա, Էլսեդսիոր և ուրիշներ—հաղորդել են հայերի փրկատուի հանդիսությունները:

«Շարժում» շաբաթաթերթը և սպաներեն «Երևան» ամսաթերթը հրատարակել են հատուկ համարներ հայրենի շողջուղում իրականությունը ներկայացնող պատկերներով զարդարված:

Նոյեմբերի 27, շաբաթ, կեսօրից՝ վերջ...

Ժամը 8: Գնանք «Հայ Կեդրոն», մեր ազգային տուն-սրահը: Հանդեսը հայտարարվել է ժամը 9-ին, 6.30-ին ժողովուրդը խոնավ է բախում: Պետք է հարգել թաղապետության օրենքը: Ժամին բացվում է սրահը: Կանթարթում լցվում է վեր, վար, օթյակներ, անցքեր, բակը... մինչև փողոց: Մարդկային տեղաշարժ է. փետակից ու պարտաճանաչ ժողովուրդը հազարներով փութացել է Հայրենիքի տունին, հայ արդի պատմության մեծագույն ու նվիրական և կենսապարզ Նոյեմբերի 29-ի տոնին:

Հայրենիքի սերը մաքնիսական զորու-

թյամբ, անգամ հեռավոր արվարձաններից շարժել է ժողովուրդին, բերել ու համախմբել է ազգային շենքին մեջ՝ ազգային հարգանք տալու համար ազգային Նոյեմբերին:

Պաշտոնի վրա են Կազմակերպիչ հանձնախմբի Պաշտոնական տիկիներն ու գեղանի լողիկները՝ հատուկ թեկնածուներով: Որքան շատ են նրանք ու որքան կարգապահ ու հարգալիկ: Կուրծքերը զարդարվում են Արգենտին-Հայ դրոշակներով՝ գույներով պատրաստված կոկարդներով:

Մտնենք սրահ: Բեմի կողքերին ծածանվող Արգենտինյան և Սովետական Հայաստանի մեծածավալ դրոշակները ժպտում են եղբայրական ու բարեկամական ժպիտով: Կողքերի վրա դիտում ենք մեծադիր պատկերները մեր նախագահին և ողորջյալ տիկ-նույրը, և ծաղկեփնջեր...

Խորհրդավոր լուսված մեջ վարագույրը բարձրանում է՝ մեղմորեն:

Զսպիր հուզմունք, կամ թող քաջքերն էլ թրջվեն ուրախությունից: Որպիսի՞ գեղեցիկ տեսարան: Բեմի խորքում՝ տե՛ս հայկական պատմական Արարատը երկնասլաց ու ձյունածածկ. Նրա փեշերում՝ զործարանների շարքերը բարձրացող ծուխերով, տակն-գույն ցորենահաշտերով. մի կողմում կուտնտեսության տրակտորիստը վարում է հայրենի օրհնաբեր հողը, մյուս կողմում հայ գեղանի աղջիկներ՝ մրցման ելած ընտելյան գեղեցկության հետ, կանաչադարձ ալ-փններից քաղում են հալկական անուշամիսալիսի ու զանազան մրգերը: Անդուսպ է ժողովուրդի ոգևորությունը: Նա ծափահարում է և դու ուրախությամբ լսում ես գնահատանքը դեպի վարպետ նկարիչը և Հայրենիքի աննման վերելքը:

* Բերված նյութերը բաղված են Նյու-Յորքի «ԼՐԱ-ՐՈՐ» թերթի 1955 թվականի հունվարի 4-ի, 6-ի, 11-ի, 15-ի և 25-ի համարներից:— ԽՄԲ:

Սկսենք հանդեսին. նախ կանխենք բնօրինակը. Մի տեղ սրահը, նշմարում ես, ասեղ գցելի՜ք տեղ չի մնացել: Որքա՜ն յուրի վրա են մնացել, ինչքա՜ն էլ բավում խմբի վել են, բարձրախոսից ունեկողքելու համար տոնակալությունից կատարում:

Նուսնակ-դերասան Վահրամ Օզգայան հայտարարում է՝ Վեյնմբերի 29-ի այս փայլուն տոնակատարության հյուրերի մեջ գրեթե բոլորն են Սովետական դեսպանատան քարտուղար պարոն Դիակոնով և ուրիշներ. Ռուսիան, Բուլղարիան, Չեխոսլովակիան, Հնդկան և Ալբանական ժողովրդական Հանրապետությունների դիվանագետների զբլեզացիաներ իրենց տիկիներով. ՏՍՄՍ-ի դորժակալ պարոն Պասիկենկո, և Արգենտինա-Սովետ Մշակութային կապի նախագահ դոկտ. Արմենկո, անդամներ՝ դոկտ. Ռեճիանի, Վիպի և ուրիշներ. Ստացվել են բազմաթիվ շնորհավորական գրություններ և հեռագրիներ հայ ազգասեր միություններից, Գորդոնայի քույր դադուկի առաջադեմ Ծրիոտասարդաց միությունից, Հ. Բ. Ը. Միությունների ասարդաց լիգայից և այլն:

Շնորհավորական հեռագրեր են ստացվել Արգենտինայի բարեխնամ կառավարության Տրանսպորտի, Մովային, Արդյունաբերության, Հաղորդագրության, Բանակի և Տեխնիկ գործերի մինիստրություններից և Վսեմափայլ նախագահ գորավար Խուան Դոմինկո Պերոնից:

Զուպից ու սովորականից ավելի տար օգրխիստ ճնշիչ է դարձել, բայց ի՜նչ հոգ, ամեն անգամ որ հայտարարվում է հյուրերի անունը և լրանում ընթերցումը մի հեռագրի՝ ընդում է սրահը երկարատև ծափերի ուտի: Խանդավառությունը բարձրանում է ծայրագույն աստիճանի. սրահը ոտքի կանգնած ծափահարում է նախագահ Պերոնի հեռագիրը, որ շնորհավորում է հայ ժողովրդի ազգային էմանցիպացիայի տալիսը:

Հայրենիքի վառ սերը ամրացրել է համգիտականների հավատքն ու վստահությունը. Համատարած բարձր ուրախությունից ինքը էլ խանդավառվում ես, զգում և ապրում ես այս գերազույց պահի ամհամեմատ բարձր երջանկությունը, հաղթապանծ Հայրենիքի մեծությունն ու վեհությունը. Ուրի, Ունկրներենք հարգարժան հիմները Արգենտինայի, Սովետական Միության և Սովետական Հայաստանի: Բեմը դրավել է Արգենտինայի Հայ երիտասարդաց միությունների ֆեդերացիայի վաթսուն հոգուց բաղկացած երկսեռ համագեղաստվոր զեղծիկ երգչախումբը. Վարիչ պարոն Միկել Կերպերով ամենայն վայելչությամբ առաջնորդում է խումբը, որ արժանանում է խանդավառ ծափահարությունների:

«Խնդրում եմ հայրենասեր հասարակությունից, — սկսում է բացման խոսքը նախագահ պարոն Թ. Շիրակյան, — հարգել հիշատակը Հայաստանյայց նկեղեցու վեհափառ Հայրապետին և սովետական վաղամեղիկ մեծ գործիչ-դիվանագետ Անդրեյ Վիշինսկու: Ամբողջ սրահը մեկ մարդու պես ոտքի է կանգնում և դուփները կախ՝ պահում է լուսություն:

Արգենտինայի Հայ երիտասարդաց միությունների ֆեդերացիայի քարտուղար պարոն Հակոբ Կոմիքյան բերում է հայ երիտասարդների սիրո և նվիրումի ջերմ զգացումները Մայր Հայրենիքին:

«Շարժում» շաբաթաթերթի խմբագիր պարոն Օլմեդ իր կուտ թանախություն մեջ արտահայտվում է. «Այն ամեն ինչ, որ կատարվել է նոյեմբեր 29-ի հեղափոխության հաղթանակից ասդին՝ մեր նոր պատմության մեջ, նման չի ունեցել. Հայրենի նվաճումները բազմակողմանի են՝ տնտեսական, գիտական, մշակութային և ընկերային»:

«Մերան» խմբագրություն կողմից խոսում է սպաններեն՝ երիտասարդ մտավորական և փայլուն ժուռնալիստ պարոն Պերե Աճեմյանը, որի թանախությունը խորուպվորություն է թողնում հասարակության, հատկապես երիտասարդների վրա. «Դարերի ընթացքում, — ընդգծում է նա, — թշնամիներ, մասնավորապես թուրքերը կոտորել են մեր ժողովրդին. քրիստոնյա քրաքկամ կառավարությունները հազար անգամ խաբել են խողխողված ժողովրդին: Միայն առաջնորդ ժողովրդի և նրա մեծանուն առաջնորդների աջակցությամբ ծնվեց նոյեմբեր 29-ի փրկությունը, որ հարազատ ծնունդն է Հոկտեմբերյան մեծ ու ազատարար հեղափոխության:

Երկարատև ծափեր ողջունում են քարտուղար Ա. Տեյրեմեճյանի հայրենաշունչ և խաղաղության նվիրված խմատուրք թանախությունը. Յուրահատուկ, հանդարտ, պարզ և ամենթե հատկանալի ոճով խոսում է նա դաշնակ դժոխքի և հաղթապանծ նոյեմբերի 29-ի, Սովետական Հայաստանի նվաճումների և խաղաղության մասին: «Պատերազմը, — շեշտում է նա, — ավեր ու կոտորած է բերում, քանդում է բնատուրքեր և երկրներ, փչացնում է երիտասարդներին, սովի ու անոթության ճիրաններին է հանձնում ժողովուրդներին:

«Խաղաղության մեջ, — եզրափակում է, — կյանքը ծաղկում և զեղեցկանում է, մարդկությունը ստեղծագործում և առաջադիմում է: Հայ ժողովուրդը խաղաղության կողմնակիցների հետ հավատում է ժողովուրդների բարեկամության և դուրակցության հաղթանակին: Մենք սիրում ենք աշխատանքը, վե-

րելքը և մարդկության երջանկությունը խաղաղության պայմանների մեջ»:

Հանդիսության երկրորդ մասը՝ գեղարվեստական բաժինը սկսում է երգչախմբի երգած «Ներսիսական» և «Ձուն Հայրենիքի» խորհրդանշանով: Պարուհի օրիորդ Աղեկինա Վարդանյանը «Էնգելի» մենապարտով և օրիորդ Ալիս Իկիթբաշյանի հետ կոմկապյան գույգ պարով փայլ տվին հանգեսի լայն բաժնին: Ընթերցողական շնորհալի Սիլվա Շիրախյանը «Երևան» և «Գուգլ Հայաստանի տղաներին» արտասանություններով երկար ծափերով գնահատվեց: Արգենտինայի Հայ երիտասարդաց ֆեդերացիայի պարախուսը, տիկին Լ. Պերպերյանի ղեկավարությամբ, շնորհալի հաջողությամբ պարեց «Ենկ Սաթո» և «Ալմաստ» շուրջպարերը: Պարոն Կյուրեղ Սարգիսյանի ուսերին մենեքը ծափահարվեց ու կրկնվեց: Փաքիկ Միրթա Վարդանյանի «Կրակի պարը» նորություն էր մեր բեմում:

Պարոն Գ. Մանասյանի «Հայրենիքի» և «Հայրենուրացը» սպաներեն երկու արտասանությունները գնահատվեցին: Օրիորդ Սահակյանի գույգ մենեքները եղան հույժ տպավորիչ: Դաշնակցահար պրոֆ. օրիորդ Լուիզա Պալանյանը գեղեցկորեն նվագեց Ա. Խաչատրյանի «Տոմաստան»:

Արգենտինյան ֆուլբորի և ուսանական պարախմբերի մասնակցությունը առավել ևս ավելացրեց հանգեսի գեղարվեստական փայլը:

... Խոսնակը հավանության է ենթարկում պատեններ երեք հեռագրերի՝ դրվելու համար Արգենտինայի և Սովետական Հայաստանի նախագահներին և Արգենտինայի մոտ սովետական արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գրեգորի Ռեզանտիին: Ժողովուրդը կրկին ուղի կանգնած՝ խելահեղորեն ծափահարում է: Լսվում է խոսնակի կանչը՝ «Կեցցե՝ հայ ժողովրդի ազգային ազատագրության 34-րդ տարեդարձը: Կեցցե՝ սովետա-արգենտինյան և բոլոր ժողովուրդների բարեկամությունը: Կեցցե՝ խաղաղությունն ամբողջ աշխարհի վրա»:

Մեծ աշխատանքներն իսկապատշաճությամբ տոնեց արգենտինահայ հայրենասեր գաղութը Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի փառապանծ 34-րդ տարեդարձը:

ԼՈՍ-ԱՆՋԵԼՈՍՈՒՄ

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս Ազգային հարհուրդը նախաձեռնել էր անախընթաց շքեղությամբ տոնելու Սովետական Հայաստանի ազատագրման ու անկախության 34-րդ տարեդարձը:

Դեկտեմբերի 5-ին, կիրակի, կեսօրից վերջ ժամը 4-ին, Ս. Հակոբ եկեղեցու ըն-

դածակ սրահը իր տարողությունից ավելի բազմությամբ էր լցվել, որը եկել էր ողջունելու Հայրենիքի ազատության վսեմ տարեդարձը:

Մինչև հայտագրի սկսելը՝ ժողովուրդը զվարթ ու լավ տրամադրված, ճաշեց, ըմպեց ինքնապատրաստված դրությամբ: Ցնծության բացազանություններով շեղվում էր այս մեծ տոնակատարության նշանակությունը: Ժողովուրդը գիտեր, թե ինչու է եկել հեռավոր վայրերից, անտեսելով ու անգտնելով այն երեկի և աներևույթ սաղաթներին, որոնք ամեն տարի անում են դաշնակ աղ-դուրացները:

Վեհագ լուսության մեջ ընթացք տրվեց օրվա հայտագրին:

Բեմի ճակատին զետեղված մի երկար պատասխի վրա կարդում ենք՝ «Ողջւն Սովետական Հայաստանի 34-րդ տարեդարձին»: Երկու կողմերը գետեղված են մեծ ծաղկեփնջեր և իշ կողմը, մի սեղանի վրա, հանդիսավոր է բլրած մի քաջար՝ զարդարված 34 մետրով:

Մանթի փաստարան Արման Կիզիրը վարում է հայտագիրը: Երգչուհի օրիորդ Բարսեղ Սուքիասյանը, դաշնամուրի ընկերակցությամբ տիկին Յուրենա Արթինյանի, երգեց Սովետական Հայաստանի Պետական Հիմնը: Հետո երբ կրկին կանչվեցավ, նա երգեց մի հայերեն և սպաներեն գոսպիան կտոր ու գնահատվեց ծափերով ու ծաղկեփնջերով:

Պարոն Կիզիրը հակիրճ ուղերձով և իմաստալի կերպով պատկերացրեց օրվա ցնծության արտակարգ նշանակությունը:

Դերասան Սեդրակ Մաղալյանը, դաշնամուրի ընկերակցությամբ Յուրենա Ցափուլյանի, Թադի վրա նվագեց անմահ Զովսեյանի «Լերեքի» օպերայի կարևոր մասերը, խոր զգացումով: Դրդազին ծափերին տեղի տալով նվագեց Գրիգոր Սյունուց մի կտոր:

Հայ բեմի սիրված աստղերից տիկին Արփինե Կարապետյանը հոգեցունց արտահայտությամբ արտասանեց «Ողջունում եմ Խորհրդային Հայաստանի 34-րդ տարեդարձը» խորագրով հայրենաշունչ քերթվածը: Մափերը արգելեցին նրան բեմից բաժանվելու և նա հրամայեց մի ուրիշ նույնիսկապ ջերթված և ստացավ մի շքեղ ծաղկեփունջ:

Ցուցադրվեց «Հայաստան» այսօր շարժանկարը, որն այնքան տպավորիչ էր, և նոր տեսողները խելահեղորեն ծափահարում էին:

Օրվա գլխավոր խոստովն էր վերապատվելի Սամվել Հալաճյանը:

Վերապատվելի Հալաճյանը իմաստուն, ազատամիտ, ճշմարտախոս և տոկուն նկատ-

րագրի տեղ մի անձնավորություն է։ Նա իր քարոզներն ու բանահյուսությունները խնամով պատրաստում է համաձայն օրվա պահանջին։ Նա իր խոսքերը համեմատ է սրամտություններով, և իր պատկերավոր ոճով գլուրահասկանալի է դարձնում իր մտքերը, մեղադրողներուն հետ խնդացեք և լացողներուն հետ լացե՛ք՝ հարմարադուլն նշանա-

բանն էր։ «Բարեբախտաբար, — ասաց նա, — հայ ժողովուրդի եղբերեղանան սուգի սև օրերին անցած են, գեթ Մայր Հայրենիքին համար՝ Հայաստան ասլես թշվառ չէ, ասլ բարդավաճ, երջանիկ, շեն, կենսունակ երկիր մը։ Տնտեսական, ճարտարարվեստի և գիտության աշխարհին մեջ մեծամեծ նվաճումներ կկատարեւ, շոն ներկայիս ժողովուրդը մեծ թափով կգարգանա, կաճի ու կրազմանա։ Օտար և հայ այցելուներ կվկայեն, թե Հայաստան Սովետական Միության ամենեն խոստումնալից, լուսավորյալ, առաջադեմ խոնրապետություններեն մին է։ Երևան մայրաքաղաքը կրնա մրցիկ եվրոպական որեւէ մայրաքաղաքի հետ, իր հոյակապ, շքեղ և գեղընտիր պետական ու հանրային մեծ շէնքերով, լայն պողոտաներով, փառավոր համալսարաններով և բազում հանրային զբոսայգիներով, Մատենադարանով, Թանգարաններով, Թատրոններով, հոգեպարար ու ընդարձակ ծառատաններով, հանրային պարտեզներով, գործարաններով, շուկաներով։

«Միթե հայ ժողովուրդը իրավունք չունի՞ արդար հպարտություն մը և հոգեկան հրճվանքով տոնախմբելու իր հայրենի այս կարգի հոյակապ վերելքը, իրեն արդունք իր ազատագրության, վերակառուցման, վերածննդին։

«Արդարեւ, սույն վերականգնումի տարեդարձը պետք է տոնվեր, փառաբանվեր թե՛ Հայրենիքի և թե՛ Սփյուռքի հայության կողմէ միահամուտ, ընդհանուր խանդավառությամբ ու սիրով։

Իսկապես ցավալի պարագա մըն է, որ կայն, որ մեր մեջ կան հայեր, բարեբախտաբար թվով ցանցաւ, որոնք ոչ միայն կմերժեն հայ ժողովուրդին հետ խնդակցիլ, ուրախակից ըլլալ այս բարեբախտիկ առիթով՝ ապա նաեւ, ինչ որ ավելի պախարակելի է՝ անոնք կդատափնտեն ուրախացողները և խնդացողները...»։

Վերապատվելի Հայաճյան, զանազան երկրների օրինակներով լայնորեն պարզաբանելուց հետո պետական անկախության իմաստը ներկա աշխարհի մեջ, գտավ, որ Հայաստանի հետեւած քաղաքականությունը հիմնված է դրակամ, ջղափնի, ամուլումնալի մի իրողութեան վրա, այսինքն՝ փաստորեն վայելած է ողուսական աշակցությունը, դուրդուրանքը և հոգր պաշտպանությունը։

Հարգելի վերապատվելի Հայաճյան, այս խորիմաստ ուղերձը հույժ դաստիարակիչ էր և խոր տպավորություն թողեց։

Ուշ ժամանակ ժողովուրդը ցրվեց դվարթ տրամադրության ներքո։

ՉԵՅՎԸՐՀԻՈՒՄ

Սովետական Հայաստանի 34-րդ տարեդարձի տոնակատարությունը տեղի ունեցավ դեկտեմբեր 5, կեսօրե վերջ ժամը 3-ին, Ա. Հ. միության ակումբին մեջ, նախաձեռնությամբ Հայ Ազգային Խորհուրդին։

2. Ձագիկյանի ատենապետությամբ ժողովը սկսավ կոկիկ բազմության մը ներկայությամբ։

Հրավիրվեցավ արտասանություն մը ընելու մեր շատ սիրած փոքրիկն Կարապետ Մամիկոնյանը, որ զեղեցիկ կերպով արտասանելու համար երկարորեն ծափահարվեցավ, նաեւ հրավիրվեցավ Ս. Մաթոսյան (Ուտրեն) երգելու. ան իր խրոխտ ու բարձր ձայնով երգեց հայաստանյան երգեր և մեծ խանդավառությամբ ստեղծեց ներկանիւրու սրտին մեջ և դնահատվեցավ երկար ծափահարությամբ։

Ատենապետը հրավիրեց մի քանի խոսք ըսելու նաեւ Մալուխյանը (Մյուտյունեն), որ թեւ կարճ, բայց շատ իմաստալից կերպով խոսեցավ մեր Մայր Հայրենիքի մասին։

Նույնպէս խոսք տրվեցավ Մ. Կոստանյանին, որ ինչպէս միշտ, այս անգամ ալ շատ զեղեցիկ կերպով բացատրեց մեր Մայր Հայաստանի մեջ կատարված հառաչդիմությունն ու վերելքը, որուն համար մենք, անկեղծ հարցնասերներս, եկած ենք հոս՝ տունելու համար անոր 34-րդ տարեդարձը և հպարտ ենք անոր մեն մի հաղթանակին համար։

Ատենապետը նաեւ հրավիրեց մասնաճյուղես Ս. Մամիկոնյանը ուղերձ մը ընելու. ան իր ուղերձին մեջ շեշտեց, որ պետք է ամեն զնով ուժ տալ Ազգային Խորհուրդին, որպեսզի անիկա կարող ըլլա հետապնդել հաջորդաւոր դատը, մինչև որ կատարվին մեր վեց հարյուր տարվան պահանջները։

Ատենապետը հրավիրեց մեր վերջին խոսողը (Ուտրեն) պարոն Գ. Տեր Ղազարյանը, որ երկար ծափահարության մեջ բեմ ձկավ։ Ան բացատրեց մեր ժողովուրդի քաջածնեղություններն ու տառապանքները անցյալ վեց երկար դարերու ընթացքին, նշեց, որ մեր նախահայրերը շարունակ իրենցմէ ավիլի հոգր բանակներու դեմ կռված են իրենց ազատությունը ունենալու համար, սակայն Եվրոպայի խարդախ դիվանագետները հայ ժողովուրդին թափած անմեղ արյան վրա խընդացեր են։ Ատիկա անցյալի պատմությունն է։

Իսկ այսօրվան պատմությունը լուրորովին

տարբեր էր Արարչատի մեկ կողմի վրա ունեինք Հայրենիք մը, որուն 34 տարին այս օրերս կըրանաւ։ Պետք է գիտնանք, որ ան քանակով փոքր, սակայն որակով շատ բարձր է։ Նույնիսկ օտար այցելուներու խոսքով ան կամրջի հարյուրամոր տարիներէ ի վեր պետականութիւն ունեցող ժողովուրդներու հետ, ըլլա այդ վերաշինութեան, արվեստի ու գիտութեան, ըլլա տարբեր մարզի մէջ։ Ուրեմն ամեն հայ, ինչ որ երակներուն մէջ մի կաթիլ հայի զոտ արդուն, ինչո՞ւ համար ինքզինքը հպարտ ու երջանիկ չզգա, և միւր Սովետական Հայաստանի 34-րդ փառապանծ տարեդարձի հանդեսին ներկա ըլլալով՝ իր երախտագիտութիւնը չհայտնե անոր մեծ ու պզտիկ կերտողներուն։ Մենք անկեղծ սրտով կրօնք՝ «Ողջ» լլն Սովետական Հայաստանի 34-րդ տարեդարձին։

Յուցադրվեցաւ ՂՀայաստանի այսօր» շարժանկարը և ներկաներս տեսնելով այն գեղեցիկ տեսարանները, լեռները, խոր ձորերը, հոսուն ջրերը և պտղատու այգիները, մանավանդ մեր նոր սերունդը երջանիկ ու ժպտուն երեսներով, հիացանք ու հրճվեցանք և գոտեպնդվեցանք մեր Մայր Հայրենիքի տարած հաղթանակներով։

ՍԵՆՏ ԿԱՏԵՐՈՒՍՈՒՄ

Սովետական Հայաստանի 34-րդ տարեդարձի տոնակատարութիւնը տեղի ունեցավ դեկտեմբերի 5-ի կիրակին, կեսօրն վերջ ժամը 2-ին, Գուրյան եկեղեցւո սրահը։

Ժամանակէն առաջ, Սովետական Հայաստանի վերելքին ցանկացող և անով ուրախացող բազմութիւն մը ներկա էր տոնակատարութեան։

Ատենապետ Հայկ Խորյան տոնակատարութիւնը բացված հայտարարեց. արժանապատիվ Տ. Խորեն քահանա Մամիկոնյանի Տերունական աղոթքով բացվեցաւ հանդեսը։ ապա ներկաները երգեցին Հայաստանի Հիմները, խաղցուցիչ ծափահարութեամբ ատենապետը անցավ հայտագրին։

Նախ հրավիրեց ուղերձ մը ընկելու Սրբուհի Խորյանը։ Ան կարդաց օրվան հանդեսին պատշաճ ուղերձ մը և քնահատվեցաւ ներկաներին ծափերով։

Ատենապետը հրավիրեց խոսելու Արամայիս Տեր Գրիգորյանը։ Ան խոսեցաւ օրվա տոնին շուրջ, թէ ինչո՞ւ կտոնենք Սովետական Հայաստանի ծննդյան տարեդարձը ամեն տարի, և թէ ինչո՞ւ պետք է տոնակատարենք քանի կանք ու կապրինք։ Անոր խոսքերը մեջընդմեջ կծափահարվեին ներկաներին։ ան վերջացուց իր խոսքերը գոչելով՝ «Հալի» րժ մնա անսասան մեր պաշտելի Հայրենիքը։ Սովետական Հայաստանը և իր ժողովուրդը։

Ապա ատենապետը հրավիրեց խոսելու Հայկազ Ռոբոսյանը։ Ան ևս պերճաբան կերպով ներկայացուց Հայաստանի վերելքը. օրինակներով և թվաշաններով ցույց տվաւ անոր ծաղկումը և ժողովրդի բարեկեցութեան աճումը։ Ընկերու խոսքերն ալ ծափահարվեցան մեջընդմեջ։

Օրվան նախագահ արժանապատիվ Տ. Խորեն քահանա Մամիկոնյան հրավիրվեցաւ խոսելու։

Տեր հայրը խոսեցաւ շատ գեղեցիկ, շատ իմաստալի, և ներկաներու հասկանալիորեն ներկայացուց իր նյութը, նշելով աշխարհիս երեք կենսական բաները՝ Ընտանիք, Եկեղեցի և Հայրենիք։ Այս երեքը զատ-զատ վերլուծեց, և երբ կարգը եկավ Հայրենիքին, ըսավ որ, մենք հայերս մանավանդ պետք է պարգուրանք մեր ներկա Հայրենիքին վրա, և մատնանշեց գաղութահոյժան պարտականութիւնը մեր Մայր Հայրենիք Սովետական Հայաստանի հանդէպ։ Տեր հոր խոսքերը շատ տպավորիչ և իմաստալից էին։

Հանդեսը փակվեցաւ Գրիգոր Տեր Գրիգորյանի շնորհակալութեան խոսքերով։

ԼՈՐԵՆՍՈՒՄ

Ամերիկահայ Ազգային Խորհուրդի Լորենսի մասնաճյուղի կողմէ, դեկտեմբեր 18, շաբաթ երեկո, Մայր Հայրենիք Սովետական Հայաստանի 34-րդ տարեդարձը տոնեցինք «Ուայ Էմ Սի Էյ» սրահին մէջ։

Չնայած անձրեւի տեղատարափին, հայրենակիցները եկած էին լսելու օրվան բանախոսներն և տեսնելու շարժանկարները։

Ստենապետի պատասխանատու պարտականութիւնը կատարեց Հեյվերհիլեն Հովհաննես Չափկյանը, որ իր բացման ճառով դովատեց ծաղկող Հայաստանը և պատշաճ խոսքերով բացակատարութեան նշանակութիւնը։ Ան հայտնեց, թէ չկա հայ մը, նույնիսկ հետադիմական հայ մը, որ չխորհի, թէ կարեւոր պարտականութիւն մըն է նշել և տոնել Մայր Հայրենիքի ազատագրութեան տարեդարձը։ Բանախոսեցին պարտներ Հակոբ Պետրոսյան և Արամ Զարդարյան, որոնք հրավիրված էին Ուոտերտաունին։ Անոնք պանծացուցին Սովետական Հայաստանի վերելքը, պատկերացուցին մեր ժողովուրդի ներկա երջանիկ կյանքը, անոր հառադիմութիւնը և խաղաղութիւն ցանկացին աշխարհին, որպեսզի դարբնուրն թացքին տառապած, կոտորակված և սակայն իր ազատութեան համար մաքառած և այժմ անկախ ու բախտավոր դարձած Հայաստանը և ամբողջ մարդկութիւնը անկաշկանդ կերպով շարունակեն բարձր կյանք մը։

Քովանդակալից և պատշաճ ուղերձ մը որով տիրին Տերտերյան. Հելլերհիլեն, և հայտնեց, թե Հայաստանի իր րարեկամեն բնե նամակներ կըստանա, որոնք կնկարագրեն իրենց արջանիկ առօրյան:

Քուրբ ատենախոսներն ալ արժանացան ժողովուրդի զնահատութեան:

Ներկաները հայրենարարդի հույզերով դիտեցին «Հայաստան» այսօր, «Դայան» և «Ռոման» և Զուլիետա շարժանկարները:

Տոնակատարութենէն աքնացան դո՛ւ մնացած ժողովուրդը լսեց նաև Սարգիս Թումանյանի երգը Հայաստանի մասին, իր կողմէն հորինված. և արժանացավ ծափահարութեան:

ՌԻՐՈԳՎԱՏՈՒՄ

Հազարի մօտ հայրենասեր հայեր ներկայ տնվեցան Սովետական Հայաստանի տարեգարծի հանդեսին:

Աննախընթաց տոնակատարութիւն, ժողովրդային լայն զանգվածներու հայրենասիրական խոր գիտակցութիւն. Ուրովայի հայը գիտե հարգել իր Հայրենիքի մեծ տոնի օրը: Ոչ մեկ կերպով կազդի ան հակապրոպագանդի. ոչ ոսգիոն, ոչ ալ զրպարութիւնները:

Ուրովայի հայրենասեր հայերը 5 դեկտեմբերին ցույց տվին իրենց ազգային գիտակցութիւնը: Զանգվածային տեղաշարժ էր կարծես. ամեն կողմէն, հեռու թե մոտիկ վայրերէ խուռներամ կշտապէին դեպի Մշակութային սրահը: Անոնց համար կարեւորութիւն շուններ օդի կիզիչ տաքութիւնը:

Այս տարվան տոնակատարութեան Կարգադիր հանձնախումբի միասնական աշխատանքները զովելի են:

Ահա մեր նազելի աղջիկները, երիտասարդները գործի վրա են. թե՛ դուրսը և թե՛ ներսը աշխուժութիւն կտրեն. խումբ մը աղջիկներ Սովետական Հայաստանի և տեղական դրոշակներու գուններով շինված ժապավեններով կզարդարեն հանդիսավորներու կուրծքը: Աղջիկ և տղա կհյուրասիրեն եկող ժողովուրդը: Աթոռներն արդեն լեցված, բազմաթիւ անձեր ոտքի վրա են:

Ուրախ են սրտները Սովետական Հայաստանի լուսաշող իրականութեամբ:

Օրվան բեմավար օրիորդ Զ. Պետիկյան կմոտենա բարձրախոսին, կտեղեկացնեն ներկայութիւնը Սովետական Հայրենիքի և քույր գաղութներու ներկայացուցիչներու ժողովուրդը անընդհատ կծափահարեն:

Ահա կրացվի վարագույրը. բեմի երկու կողմերուն վրա զետեղված են տեղական և հայկական մեծ դրոշակները, իսկ մեջտեղը՝ 34-րդ տարեգարծի վերտառութիւնը: Երկարատև ծափահարութիւն:

Բիւս կուգա օրվան նախագահ Պ. Ն. Խուրճունյանը, որ գրական կարճ ուղերձով կբացատրեն Մայր Յրկրի անցյալի խնդրուկ դրութիւնը և ներկա արեւաշող կյանքը:

Կատարվին նամակներ քույր գաղութներ և կազմակերպութիւններին:

Ժողովուրդը հոտնկայս կունկնդրեն Ուրովայի և Սովետական Հայաստանի հիմները, նվազված հայկական նորաստեղծ նվազախումբի կողմէն, որ այս պաշտօնին մեջ միակն է, ղեկավարութեամբ Հովհաննես Գարաօղլանյանի:

Բեմին վրա կտեսնենք Հայ Ազգային Կեդրոնի ներսիսյան վարժարանի սան-սանուհիները, որ կերգեն, կարտասանեն Մայր Հայաստանի բանաստեղծ-երգահտներու նոր կենցաղի երգերը:

Քսանհինգ մանուկներ կներկայացնեն կենդանի պատկեր մը՝ Սովետական Հայաստանի արտագրութիւններու նմուշներ: Ապրին ներսիսյան վարժարանի աշակերտները և անոնց ղեկավար ուսուցչուհիները, ինչպես նաև Հայ Ազգային Կեդրոնի Տիկնանց օժանդակ միութեան անխուս՝ անդամուհիները:

Բեմի վրա են մեր նազելի օրիորդները: Ներսիսյան վարժարանի Շրջնաւարտից միութեան պարի խումբը, ղեկավարութեամբ Զարուհի Քաշխանի, կպարի գեղեցիկորեն «Նրկու գույգ աղաւթները»: Մափերու տակ կրկին կպարեն՝ այս անգամ Արամ Խաչատուրյանի մեկ նոր բալետը:

Նշիա Շարոյան դրավոր հայրենաշունչ բանախոսութեամբ կբացատրեն Սովետական Հայաստանի ազատագրութեան և հոն կատարված վերելքի մասին:

Աղջիկ և տղա բեմ կուգան իրարու ետեւ և կարտասանեն Սովետական Հայաստանի դրոշներու նոր ստեղծագործութիւններն, ծափեր խելով: Բազմոր Դուկասյան կերգեն «Խաչատուր Արովան» երգը՝ ընկերակցութեամբ պարոն Հովհաննես Գարաօղլանյանի թավջութակին:

Օրվան ղխավոր բանախոս դուկս. Ի. Յ. Բաւոյ բեմ կուգա երկարատև ծափերու տակ: Դուկտորը Սովետական Միութեան աջակցած է 1953 թվականին. իր ականատեսի աչքերով տեսած է այնտեղ վերելքը: Դուկտորը իր բանախոսութիւնը կընեն գրավոր. ան թվեց մեր պատմական անցյալի անհրաժեշտ փաստերը, թե դաշնակներու օրով Հայաստանն ինչ զուլումներու ենթարկված էր: Ան ըսավ. «Զեզի համար նոր կյանքն է կարեւորը: Սովետական Հայաստան նոյնմբեր 29-ի հեղափոխութեամբ խորհրդային կարգերու տակ հասակ ենտած, 34 տարվան հաղթանակ շինարարութեամբ դարդացած է. ճարտարարվեստի մարդին մեջ, ինչպես՝ նաև մշակույթի, դե-

դարվեստի մեջ և այլն, առաջնակարգ տեղ կգրավեն Դոկտորը մեկ առ մեկ թվեց թվանշաններով և փաստերով հիմնավորեց իր մտքերը, Ան վերաջուց ըսելով. «Միրեցեք ձեր Հայրենիքը, որովհետև անիկա խաղաղության պաշտպաններու և ազգերու համերաշխ գոյակցության կողմնակիցներուն հետ է, Երկարատե ու դրդագին. ծափերով կդիմավորվի դոկտորը:

Օրիորդ Մարի Դայֆեճյան կերպն օձխատանքի երգը, պիանոյի ընկերակցությամբ օրիորդ Շաքրյանի:

Բեմ կուգա Պ. Գ. Գարատանայան, որ կծանուցանեն Անուշավան Արզումանյանի նամակը:

Անուշավան Արզումանյան Սովետական Հայաստանի գիտնականներն է. Ուրուգվայ եկած է մասնակցելու Ազգերու Միության ժողովին: Ա. Արզումանյան մաս կկազմի Սովետական Միության գիտնականներու խումբին: Արզումանյանի հետ տեսակցության մը պարագային, փափագ հայտնած էր անձամբ ներկա գտնվիլ Սովետական Հայաստանի տարեդարձի տոնակատարության. քայքայ հինգ օր առաջ կմեկնեի դեպի Մոսկվա իր հինգ ընկերներով, Աստի համար է, որ պարզոր կերպով ան իր շնորհավորությունը կհայտնեի Ուրուգվայի գաղութին: Երկարատե ծափահարություններ:

Օրիորդ Պետրիկյան կկարդա Սովետական Հայաստանի կառավարության ղրկվելիք հեռագրին պատճենը, ուր կհայտնվի Ուրուգվայի գաղութի սերը, համակրանքն ու բարեմաղթանքները Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

Հայրենասեր հայերը կբաժնվին Հայ Մշակութային սրահին, իրենց հետ տանելով խանդավառ ու անմոռանալի տպավորություններ:

ԳՈՐԴՈՐԱՅՈՒՄ

ԳՐՈՐԴՐԱՒԱ, ԱՐԳԵՆՏԻՆԱ.— Դեկտեմբեր 4-ի գիշեր Պարագվայի սրահը աննախընթացորեն լեցված էր հայրենակարոտ հայրենակիցներու հսկա բազմությամբ: Անոնք եկած էին ամեն կողմի՝ հավաքաբար տոնելու Հայրենիքի ազատագրության և փառքի մեծ թվականը՝ 1920 նոյեմբերի 29-ը, որ վերջնականորեն փրկեց հայ ժողովուրդը դարավոր տառապանքի ու կոտորածների:

Բոցավառ ողջույններ այդ հաղթական թվականին: Հայրենակցական, Երիտասարդաց, Բարեգործական և Տիկնանց միությունները եկած էին իրենց ուրախությունը բոլորին ուրախությամբ հետ խառնելու այս մեծ տոնին առթիվ:

Միրելի Վեռնիկյանի (Հայ երիտասարդաց կազմակերպություն) երկսեռ երգչախումբը. Կարո Զուպանյանի ղեկավարությամբ, մեր սրտերը թնդացուց Արգենտինյան և Հայկական Հիմներով ու նոր կենցաղի երգերով:

Հայաստանի խորհրդայնացման 34-րդ տարեդարձի հանդեսին, օրիորդ Աբանյան հայտնություն մը եղավ. բարձրախոսին առջև քանի մը հայրենաշունչ խոսքերով հանդեսը բացված հայտարարեց և հայտագրին համաձայն ընթացք տվավ ժողովին:

Կազմակերպիչ հանձնախումբի կողմից գրավոր ելույթ ունեցավ օրիորդ Լուսիա Թութուլյան օրվա նյութին շուրջ և ըսավ, որ նոր սերունդի անդամները կսիրեն իրենց ծնողաց Հայրենիքը, հայերեն կերպով, կխոսին մեր պատմական լեզուն և հպարտ կզգան ներկա Հայաստանով և իր ժողովուրդով ու վարչաձևով: Օրիորդ Լուսիան Երիտասարդաց միության հարադատներն է, իր խոսքերը ծափահարություններով ողջունվեցան:

Օրիորդ Ա. Տեր Հակոբյան երգեց «Ձան Երեանք», ընկերակցությամբ երգչախումբին: Երգչախումբը երգեց Ա. Խաչատրյանի Երեանքը: Օրիորդ Լ. Քյոշկերյանը երգեց «Աշուղին երգը»: Սեյրան Պուրջազյանը երգեց «Նախապաշտի Արուստանը»: Երգչախումբը կրկին երգեց, այս անգամ «Չեղոսականք»: Յուրաքանչյուր երգի խոսքերը օրիորդ Աբանյան յուրահատուկ ժեստով մը բարձրախոսին առջև կարտասանեի, որով ավելի հասկանալի կդարձնեի երգեցողությունը: Երգեցողության նվազով մասնակցեցան օրիորդներ Լ. Մերկերյան դաշնակով, Լ. Էվիսանյան և Կ. Զուպանյան՝ ջութակով: Պատանի Ալեքսանդր Տադևոսյան կտոր մը նվագեց ակորդեոնով: Հետո գեղարվեստական այս բաժնին մեջ՝ սպանական և ղասական պարեր կատարեցին օրիորդներ Ն. Նդեկիելյան և Ա. Աբանյան: Բոլորն ալ շատ հաջող էին:

Իսկ Երիտասարդաց միության խոսքը բերավ Հովսեփ Կոստանյանը. այս երիտասարդին գրավոր ելույթը երկարատե ծափահարություններով ընդմիջվեցավ:



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

„ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻՆ ՍԵՋ“

ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Սուրենու-Այրեն, տպարան «Արարատ», 1954 թ., 70 էջ)

1954 թվականի աշնանը, Բուենոս-Այրեսում, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության հրատարակչությանը «Արարատ» տպարանից լույս տեսավ Հայրավայրի Ամեն-րիկայի հայոց Հայրապետական Նվիրակ զեռաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանի «Հայրենի երկրի մեջ» հայրենասիրական վառ հուշերի, սրտագին ու անմոռանալի տպավորությունների այս գեղեցիկ և պատկերազարդ հավաքածուն, որպես սրբազան հեղինակի վերջերս դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և դեպի մեր սիրելի Հայրենիքը կատարած երկրորդ ուխտագնացության սրբաշունչ և խորը ապրումների կենդանի արտահայտություն և հուշարձան:

1954 թվականի մայիսին ի Տեղ հանգչավ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Նորին Ս. Յոթնորեն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնազույն Կաթողիկոսը՝ Երասնաշենոհ և աստվածաբայ Հայրապետի մահը արժանավոր և անկեղծ վշտով ողբաց հայ հավատացյալ ժողովուրդը և՛ Մայր Հայրենիքում և՛ Սփյուռքում: Մենք էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վիշտը ու կորուստը. Եկեղեցին կորցրել էր իր մեծագույն ու հավատարմ ընկերակցին, Հայրենիքը՝ իր մեծ ու հավատարիմ քաղաքացուն, իսկ հայ ժողովուրդը՝ իր միծառադան ու արժանավոր զավակին:

Ով ահա համազգային այս սղի, վշտի օրերին, մոտիկ և հեռավոր հայ զառույթներին, մեր Եկեղեցական թմբից Ս. Էջմիածին էին փութացել մեր Եկեղեցական և աշխարհական պատգամավորները՝ սգակիր սրտով իրենց որդեական հորազանքն ու սրտագին մեծաբանքը հայտնելու մեծ Հանգուցյալի հիշատակին հայրենասիրական բողբոջած զգացմունքով ու կարոտով համարելով հայրենի սրբազան հողը, սրի տերն է այսօր Հայրենիքում ապրող հայ ժողովուրդի հոծ ու աշխատունակ մայր զանգվածը, և ողջագուրվելու՝ Հայրենիքի իրենց նարագատների նեո, որոնք



այսօր իրենց մտքի, հոգու, սրտի մեռնաբույր գեղեցկություններն են թափում ամեն մի քարի, ամեն մի թիզ հողի ու թզթի վրա:

Պատգամավորները իրենց վնասաբեր, իրենց նեո ստրան Ս. Էջմիածնի օրհնությունը, Մայր Հայրենիքի պառզամբ, նոր սրտագին ու սրտաբույր ողջույնը՝ Սփյուռքի հայրենակարոտ հայ ժողովուրդին:

Պատգամավորներից շատերը մամուլում, բանասիրական հայրենիքում, իրենց հայրենասիրական ելույթներում պատմեցին իրենց անանատեսի տպավորություններն ու հուշերը. զգուր տեսանքն և լուսը, պատմամբ ձեզ, զի և դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ:

Պատգամավորները խոսեցին Ս. Էջմիածնի մասին, պատմեցին մեր յուսալուր Հայրենիքի մասին, և իրենց հայրենասիրական ելույթներում մի անգամ եւ ոգևորեցին ու խանդավորեցին սարագին հայ սրտերը՝ Հայրենիքի սիրով և պայծառ իրականություններ:

Հայ ժողովուրդի համար միշտ էլ Նվիրական է եղել Հայրենիքի պառզամբ, Տարագիր հայ ժողովուրդի սիրտը միշտ էլ բարոյան է հայրենասիրական վառ զգացմունքով, որովհետեւ այսօր հայ ժողովուրդը ազգային հպարտության ամենազինով զգացմունքներով է լցված դեպի իր Սովետական Հայրենիքը, և վառ հիացումներով է ընդունում ամեն մի թխարբիկ իր Հայրենիքի մասին: Սովետական Հայրենիքի լուսաշող իրականությունը հայ սրտերում վառել է բողբոջում հայրենասիրության սրբազան հուրը: Այդ հուրը մի անգամ ևս են բորբոքել ահա մեր պատգամավորները իրենց ելույթներով: Վեհափառ Հայրապետի մահը մի նոր ու սրտառուլ առիթ է հանդիսացել Սփյուռքի հայության սրտաբույր վերաբերմունքի, որդեական սիրո և հնազանդության գեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և ազգային հպարտության՝ դեպի մեր պանծալի Հայրենիքը:

Պատգամավորներին մեկն էր նաև Սիրոն սրբազանը, որն իր ողորդող խաղողիկներով, վերադարձի իր հանապարհի վրա, ավելի քան 70 հայրենասիրական ելույթներ է ունեցել Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի մասին։ Սիրոն սրբազանը սրտով է խանդավառել Հայրենիքի շքեղ զգացմունքով, իր ականատեսի վկայություններով և հուշերով, ու հայրենասիրության, եկեղեցասիրության աստղ սերմեր է ցանկ ափետարների բերի սերմնացանի նման, իր անցած հանապարհի վրա, նվ դա պատահականություն չէր, որովհետև հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը Սիրոն սրբազանի նկարագրի ամենաթանկագին գծերն էին մեկն էլ հանդիսանում։ Հայրենիքի գաղափարը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սերը կարմիր թելի նման անցնում են սրբազան հեղինակի ողջ կյանքի և գործունեության միջով, նվ ահա այդ երկու խորը և մեծ զգացմունքները մղել են Սիրոն սրբազանին՝ թղթի համեմելու իր հոգեկան ուղորդմանն ու հայրենասիրական վառ զգացմունքները Հայրենիքից և Ս. Էջմիածնից, որպես մշտական խանդավառության աղբյուր հայրենակարգող հայ ժողովրդին։

«Հայրենի երկիրն մեզ» — ժամյալով փոքր բայց հուզմունքներով հարուստ և արժեքով մեծ այս գրքուկը — Սիրոն սրբազանի երկրորդ գիրքն է, նվիրված Հայրենիքի հուշերին և տպավորություններին։

1946 թվականին Նյու-Յորքում լույս տեսավ Սիրոն սրբազանի «Ամեն մի Հայաստան» պատկերազարդ գիրքը՝ դեպի Ս. Էջմիածնի և Հայրենիք կատարած առաջին ուխտագնացության տպավորություններին, հուշերին, խորհրդածություններին և առաջին գիրքը։

«Հայրենի երկիրն մեզ» գրքուկը բացվում է հայ ժողովրդի հավերժության խորհրդանշան հանդիսացող Մատթևոսի ճակարով, որոնց իշխում են ողջ Արարածության դարաշին և հայ ժողովրդի սրտի վրա՝ Ապա հույսորդ էրբում՝ հայ ժողովրդի Արարչության Արքայ Ս. Էջմիածնի ճակարը, որպես մեր ազգային-եկեղեցական միասնության սրտատուր խորհրդանշան, իր թևերի տակ է կանգնում ողջ հայության, ապա Վահագնոս Հայրապետը, ցահնայապետական իր լրիվ զգեստավորման մեջ, իր հայրապետական պատգամն է տալիս իր սիրելիքայ հոտին, «Հայր բացի Աստուածական Հայաստանից, ընդի այլ Հայրենիք, Հայր Հայաստանից դուրս ընդի այլ հաստատուն կոչվան, բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և Նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով։

Դրան հաջորդ էջերում, փոքր ենթավերնագրերի տակ, Սիրոն սրբազանը ամփոփ բայց ամբողջական ձևով նկարագրում է պատգամավորության ազալից երթը Ս. Էջմիածնի, «մինչ Էջմիածնի զանգակները տխուր կողողանան... Մայր Տաճարի մեջ մեր ազդեցող կիսանման մեր սրբազան հայրերու աղոթքին»։ Տրամազգայաց ողով ու թափելով է նկարագրվում Համբարձման օրը թաղամասական արարողությունը, սուրբ պատարագը, վերջին օծումը, երբ ամեն ինչ մահվան խորհրդով էր համակված. «Դարավոր զանգակները կհնչեն մահապարտու և սգավոր զոհանքով... Սուրբ է պատեր Մայր Աթոռը, սև է ծածկեր

հայոց աշխարհը. մահվան ցառապանիկ ուղիվանը իջած է հայության սիրտին վրա...», նվ ապա երկրության անսահման լուսության ու խաղաղության մեջ, հայ ժողովրդի ցավի և արցունքի միջով, խնկով ու աղոթքով օսն հողին կհանձնվի երթման Հայրիկ և Ներսես Առաքելի մեծատուն ու հայրենասեր կաթողիկոսներու շիրմերում ջով քաղված գերեզմանի մեջ... մեր ժամանակի մեծագույն հայ եկեղեցականն ու շինարար և շնորհաբեր Հայրապետի մարմինը...

Տրամադրված այս պարտականությունը կատարելուց հետո, պատգամավորությունը մի որոշ ժամանակ ևս մնում է Հայրենիքում։

Գրքի հետագա էջերում Սիրոն սրբազանը խանդավառ զգացումներով, հայրենասիրական արդար հպարտությամբ է խոսում իր հայրենի հողին վրա ապրող հայ ժողովրդի արյունիկ ու խաղաղ կյանքի մասին, Նրա պայքարի ու հաղթանակի մասին, Նրա լուսաբանած Ներկայի և վառ ապագայի մասին, մեր Հայրենիքի քաննախնդրաց, հակապայքայ վերելքին ու վերակառուցումին, անոր ֆիզիկական ու իմացական հասարակության, մշակույթի և գեղարվեստի լուսավոր նվաճումներում մասին» (էջ 14)։

Իր առաջին այցելությունից տաս տարի հետո, Նորից հայրենի հողի վրա է Սիրոն սրբազանը, Հեսա-վոր հորիզոններին, ռուս տարիք թույլ եկել է իր Հայրենիքը, «Համբարձման մեր նախնայց քրտինքով և արյունով սրբացած Հայաստանի հողը», միաձուլվելու անոր վրա ապրող ու կերտող մեծագործ ժողովուրդին... Նուրբանայու իր արյունի եղբայրներուն հետ, և խառնելու իր այլ մարդու քրտինքը և արդար վատակար անց ստեղծագործող ժողովուրդի վատանքին հետ... և ողորդել խաղողիկներ տանելու վերածնված Հայրենիքին»՝ օտար և անհույսկող տարի-րում «զգուշ մղորդական աստեղաց» ապրող հայրենասեր, հայրենակարգող հայրերին երթին։

Սիրոն սրբազանը, որպես ճշմարտապես հայրենասեր հոգեպետական, հպարտ է իր Հայրենիքով, Նա շատ լավ գիտի հայ բազմաշաբար ժողովրդի անցյալի արյունառ, քայց հերոսական պատմությունը և արտաքին ուղիվ է, որ հայ ժողովուրդը դառն է իր փրկության և ազգային վերածննդյան ճիշտ ու միակ ուղին. «Հայրենի հողն արմատախիլ հայ ժողովուրդը շուտով արմատ կբռն իր Հայրենիքի հարադատ հողին վրա, ու հրաշալի արագությամբ կանի, կտանանա և կպտղաբերի, Հայկալան ծառը Հայաստանի հողին վրա միայն զորավոր արմատ կբռն, մխրվելով ցայ-րենի պարուստ և բառեքի հողին մեջ» (էջ 14) (ընդ-գծումը մերն է) — Է. Ն.)։

Առողջ ու կենսունակ է Սիրոն սրբազանի հայրենասիրական զգացմունքների և խորհրդածությունների ա-կունքը. «Ժողովուրդ մը ազգ չէ՝ եթե Հայրենիք չունի... ծառ մը օղի մեջ արմատ չի կրնար մգնել, այլ հող պետք է, որպեսզի անոր մեջ արմատ բռնի։ Նույնպես ժողովուրդ մը, առանց հայրենի հողի, չի կրնար ապրիլ ու կերտել, չի կրնա և ստեղծագործել, հ հավերժությունն ապրել» (էջ 14)։

Անուհետ Սիրոն սրբազանը ցերմ, անկեղծ հուզա-կանությամբ, անմիակամությամբ, լիրիկական զ-

դրամներով պատմում է իր տպավորությունները Վզեղականության նրեանի, մեր մտավորականների և արվեստագետների հետ ունեցած հանդիպումների մասին:

Սրբազանը սրտի անհուն բերկրանքով և շայրենասանի խանդավառությամբ է խոսում մեր Հայրենիքի սեփականի, գյուղատնտեսության, գիտության և այլ բնագավառներում ձեռք բերված բացառիկ նվաճումների մասին:

Հայրենի հողին վրա սրբազանի ուշադրությունն է դրսևում առաջին հերթին «զեղականության նրեանի» նա շերտ մոզման է նվիրել նրեանին՝ բանաստեղծի սրտով, հայրենասանի վառ զգացմունքով: «Նրեանը անճանաչելի է տասը տարի առաջ այցելողի մը» (էջ 38), «Նրեանը հոյակապ ու ինքնատիպ ոճով կառուցված շինքներ: հմայքն է, քարեղեն երգն է հայ հոգիին, ազգային բանաստեղծությունն է, գիրի և արվեստի կոթիլն է, որ մեր դասական արվեստի կենթը կկրծ իր վրա, դառնալով արդիական իր պարզությամբ ու զեղեցիկությամբ, Փարեզեն բերթվածն է իր զեղեցիկ կերտվածքով»:

Սրբազանի համար հայատնության, խնդունության անսպառ աղբյուր են հայկական անգերազանց ու հոյակերտ ճարտարապետական ոճով շինված պեռական պալատը... վարչապետին պաշտոնատունը, Ներկայացուցիչներու հոյակերտ տունը, պետական օպերան, զեղարվեստի տունը, ծածկյալ շուկան, ֆիզիոթերապի ներկայացուցիչ մեծ ու շքեղ դահլիճը, Ավելին, ռետելիս ժողովրդական քանկարաններ արվեստի մեկ մեկ կթողներ են և նմուշներ՝ հայ ճարտարապետության» (էջ 33—34):

Սրբազանի հայրենասանը գրչի տակ ողի և կյանք են առնում կրկին անգամ հայրենի բնության հրաշալիքները, Ամեն ինչ ինքնատիպ է հայրենի երկրում և լենի «ազգային նկարագիր»:

«Ահա՛ Արարատյան դաշտը իր անսահման արտերով, սորունք մեղեն արծաթե երկններու պես առուններով կհոսին ու կոտրեին Հայաստանի քարերը հողը»:

Եվ սրբազան հեղինակը հասնում է ճիշտ ընդհանրացումների, եզրակացության: «Այսօր Հայաստանի լեռն ու ապամոռու լեռներն իսկ կմշակվին ու կզարդարվին ծառերով»:

Ամեն քայլափոխի սրբազանը ունկնդրում է կուռուցումների զվարթ ու կենսահույզ երգը. ամեն կողմ սահողազործ աշխատանք, «հայ ժողովուրդը կկերտեն իր հայրերուն պատմական երկիրը» (էջ 41):

Արդարև, քյուր երազներ են ծաղկում այսօր հայ ժողովրդի հողում, որն Կր արդար ու խաղաղ աշխատանքով ծալներին վարդ է ցաղում, քարերը փոխակերպում հացի, լուսի, կյանքի, և բուժում իր անցյալի արյունոտ վերքերը. բնաշխարհի հայությունը իր ազգային պետության հիմքերն է կերտում և ամրապնդում և հրաշագործում և պայծառազարդում հայրենական սուրբ օջախը: «Այսօր, — գրում է Սիոն սրբա-

զանը, — նոր քաղաքներ ծնունդ են կենդանի Արարատյան դաշտին վրա... Հայաստանը գրքի երկիր է, մշակույթի և արվեստի երկիր, ուր հայրենի հողին վրա կծաղկի ազգային մշակույթը, գրականությունը, իսկ ինչ բախտ է վերահասված Սիոնի գիրքի մեր մտավորականության, բանեց ոտքին տակ կպակսի հայրենի հողին կենսատու ուժը... անոթ լեն կրնար լիովին առաջ հայ արվեստը... իսկ հայ արվեստը այսօր, իր զենիթին կմոտենա հայրենի հողին վրա» (էջ 48):

«Ահա թե ինչու», — եզրակացնում է սրբազանը, — այսօր, հայրենի հողին վրա կծաղկի հրաշալի հայկական գրականություն մը, արժեքավոր հայ գեղարվեստ մը, որ պատիվ կհան հայության» (էջ 44):

Վերահիշյալ արժանիքներով շեն սպասվում, արդարև, Սիոն սրբազանի այս փորձիկ գրքի մեծ արժանիքներն ու առավելությունները:

Գրքի առաջին էջից մինչև վերջը, կարմիր թելի նման, անցնում է սրբազան հեղինակի հայրենասիրական շունչը, Սրբազանը իր անհատական անաշու ու խանդավառ տպավորություններն է պատմում Հայրենիքից, Սրբազան հեղինակի խանդավառությունն ու ոգևորությունը բխում են իրականությունից, նրա տեսածից, Սրբազանի «Հայրենի երկիրն մեզ» գրքով ստորգրված է քարծր հայրենասիրությամբ, և դրա համար էլ հաճույցով և հոգեկան մեծ բավարարությամբ է կարդացվում:

Սրբազանը հասնել է իր առաջգրած նպատակին՝ ոգևորել խորհրդներն տալ Հայրենիքից, նրա սիրով և լուսապայծառ իրականությամբ տաքացնել հեռավոր ու առաջ մայրերի վրա թափառող հայրենակարտ շարքիցների սրտերը: Գրքի մեծ արժանիքն էլ կազմում է հենց ախ՛ որ սրբազանին հաջողվել է զեղարվեստական համոզության, զեղեցիկ պատկերներով, և դրան համապատասխան զոդորիկ խորհրդածություններով, ցույց տալ մեր վերածնված Հայրենիքի՝ անցյալի ավերի և մոխիրների միջից Փյունիկի նման հարություն առած Սովետական Հայաստանի՝ զեմքը, իրականությունը, առօրյան, իր ազգային զեմքով և ոճով:

«Հայրենի երկրին մեջ» արժեքավոր գրքի արժանիքը նրա կենդանի, բաբախուն շունչն է, հայրենասիրական զգացմունքի հարազատությունն ու անկեղծությունը, թուփն ու խորությունը:

Սրտագին ընդհանրելով Սիոն եպիսկոպոսին այս հոր հաջողության համար ես, ցանկանում եմ նրան ավելի արդյունավետ, շինել ազգային-կենդանական գործունեություն:

Վաստե՛ նեց, որ յուրաքանչյուր հայրենասեր հայ սիրով և մեծ հաճույքով կկարդա Սիոն եպիսկոպոսի «Հայրենի երկիրն մեզ» — շերտ շնչով, հայրենասանի վառ զգացմունքներով գրված այս զեղեցիկ գրքուկը:

Ա. Հ.

